

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ա Ր Ց Ա Խ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1993

ԱԼԻՇԱՆ ՂԵՎՈՆԴ

ԱՅ15 Արցախ/(թարգմ. գրաթարից Գ. Բ. Թոստեմյանի)
ԵՊՀ—Եր., Երևանի համալս. հրատ., 1993— 124 էջ:

Աշխատությունը նվիրված է Մեծ Հայքի տառնահինգ նահանգներից («աշխարհներից») մեկի՝ Արցախի պատմա-աշխարհագրական նկարագրությանը. մանրամասնորեն քննված են Արցախի տառները գավառները, դրանց բնակավայրերը, լեռները, դաշտերը, պատմական հուշարձանները և այլն: Նահանգի աշխարհագրության նկարագրությունը սերտորեն միահյուսված է հայ ժողովրդի պատմության հետ:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

0502000000
Ա 704(02)—92 —98

ԳՄԴ 63.8(2Հ)4

Վետեր Ալիշանը (իսկական անուն-ազգանունը՝ Քերովքե Ալիշանյան, գրական ծածկանունը՝ Նահապետ, 1820—1901 թթ.) ակամավոր հայ բանաստեղծ է, արձակագիր, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, հրատարակիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ:

Բազմատաղանդ ու բազմաժանր գրողն ու գիտնականը թողել է գեղարվեստական և գիտական հարուստ ու արժեքավոր ժառանգություն: Նրա գիտական աշխատությունների շարքում իր արժեքն ու արդիականությունը չի կորցրել «Հայաստանի տեղագրությունը» («Հայաստանի աշխարհագրությունը») բազմախատոր աշխատությունը: Ալիշանը բնավ չլիներով Հայաստանում՝ իր հարուստ գիտելիքների և վառ երևակայության շնորհիվ այնպիսի ճշգրտությամբ է նկարագրել Մեծ Հայքի գավառները, որ՝ հիացմունք է պատճառում անգամ մասնագետներին:

Ալիշանի աշխարհագրությունից հրատարակվել է միայն չորս հատոր՝ «Սիսական», «Սիւական», «Ծիրակ» և «Այրարատ», որոնք չխամրող կորդներ են հայագիտության գանձարանում:

«Բազմալեզ» հանդեսը 1988—89 թթ. իր համարներում առաջին անգամ բնագրով հրատարակեց Ալիշանի «Արցախ» պատմաաշխարհագրական ուսումնասիրությունը, որը գրված է ընտիր գրաբարով: «Արցախն» սկսվում է 89-րդ պարագրաֆով, իսկ 1—88-րդ պարագրաֆները հատկացված են Ուտիքի ուսումնասիրությանը:

«Արցախ» ուսումնասիրության մեջ Ալիշանը մանրամասնորեն նկարագրում է Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից (աշխարհներից) մեկը՝ Արցախը, նրա տասներեք գավառները՝ Կողթը, Բերդաձորը, Վայկունիքը, Միսական ուսումը, Մեծկունիքը, Մեծիրանքը, Փառնեսը, Մյուս Հաբանդը, Պարզկանքը, Մովսանքը, Հարժանքը, Պիանքը, Բոտակը: Գիտնականը մասնավորապես անդրադառնում է Արցախի քաղաքներին, ավաններին, լեռներին, դաշտերին, գետերին, բերդերին, եկեղեցիներին և այլն՝ առնչությունը Արցախի աշխարհագրության նկարագրությունը սերտորեն միահյուսելով հայ ժողովրդի պատմության հետ:

Առանձին դեպքերում նա իրեն հասուն գիտական մեծ բարեխղճությամբ կարծիքը հայտնում է վերապահությամբ՝ այսպես, օրինակ՝ «ինձ թվում է, ես կարծում եմ, ես գտնում եմ, իմ իմացածի համաձայն, ես չգիտեմ» և այլն:

Ալիշանի մյուս աշխարհագրական աշխատությունների մեջ, «Արցախն» էլ չի կորցրել իր ճանաչողական արժեքն ու սկզբնաղբյուրի դերը: Նրա աշխարհագրական հետազոտությունները փաստաբան հարուստ նյութ են պարունակում Հայաստանի աշխարհագրության և հայ ժողովրդի պատմական անցյալի գրեթե բոլոր շրջանների ու տարբեր բնագավառների վերաբերյալ: Այսպես, օրինակ, «Արցախ» աշխատության միջոցով կարելի է իմանալ, թե մինչև տասնիններորդ դարի վերջերը Արցախի նահանգում ինչ բնակավայրեր, բերդեր, եկեղեցիներ, պատմական հուշարձաններ են պահպանվել, և որոնք են վերացել երկրի երեսից, ինչպես ու ինչու:

Նկատի ունենալով աշխատության հրատապությունն ու արդյունավետությունը՝ այն ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում առանձին գրքով:

Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Ա Ր Յ Ա Խ

89*. Արցախի ամուր և ապահով երկիրը, որ ավելի փոքր է, քան Մեծ Հայքի շատ աշխարհներ (նահանգներ), ունի մոտ 90—100 մղոն երկարություն և դրա կեսի չափ լայնություն: Այն արևմտյան կողմից սահմանակից է Սյունյաց աշխարհին, հյուսիս-արևելքից՝ Ուտիքին, հարավից՝ Երասխ գետին. հյուսիսային և՛ արևելյան սահմանագիծը բացահայտ չի երևում, այլ թվում է, թե այն բաժանվում է լեռների ստորոտներով, մասնավորապես Խոչքար լեռներով և Ծամքորի անջրպետով, իսկ արևմուտքից՝ Սյունյաց Հագարու գետով ու լեռներով, որոնք պարսպով են նրա ելքը և փոխում ջրերի ընթացքը, որովհետև Սյունիքում գետերը հյուսիսից և ելքի կողմից իջնում են Գեղամա լեռներով դեպի մեծ Երասխը, իսկ Արցախում արևմուտքից արևելք դեպի Կուր գետն են հոսում, ոռոգելով Ուտիքի դաշտը, որտեղ ամենահզորը ամենահյուսիսայինն է՝ **Թարթառը**** կամ **Թերթերը**, ըստ մեր նախնիների՝ Տրտուն, որը, բխելով Վայոց ձոր և Զանգեզուր լեռների թիկունքից, անցնելով Խաչենի խոր ձորերով, դուրս է գալիս Ուտիքի Առանձնակ դաշտը՝ անցնելով Պարտալ քաղաքի մոտով:

* Արցախն սկսվում է 89-րդ պարագրաֆով, որին նախորդում է Ուտիքի աշխարհագրությունը (ծանոթագրությունը թարգմանչի):

** Ընդգծումները այս և հաջորդ դեպքերում հեղինակին են (ծանոթ. թարգմ.):

Արանցից բացի, հյուսիսային կողմում կան և մանր այլ գետեր, ինչպես՝ **Կուրանը**, որ Կուրակին է խառնվում, և դանդաղորենաց այլ գետեր: Իսկ **Թարթառից** հարավ հոսում է հնում **Չղախ** կոչված գետակը, որը **Խաչենագետ** է անվանվում, որից ավելի հզոր է **Գարգարացիների** գետը՝ **Գարգարը**, որը բխում Ծուշիի սահմաններից և խառնվում է Կուրի գետին, Երասխի խառնարանից մի փոքր ավելի վերև: Երասխին են խառնվում և այլ գետակներ, որոնք իջնում են Ծուշիի հարավից, ինչպես՝ **Խոլում, Չերեքեն, Տիլին** կամ **Գուրուն** և **Քենտիլանը**:

90. Բայց Արցախ աշխարհը ավելի շատ նշանավոր է իր լեռներով, քան թե գետերով, որի պատճառով էլ մեր նախնիները նրան տվել են **Ամուր** մականիքը, որը ավելի հաճախ տրվել է Աղվանքի պատմիչի կողմից. «Խոր ձորերով, անտառներով հարուստ Արցախ աշխարհը»¹, այլ տեղերում. «...վիմա-ատակ լեռների ապառաժներ...՝ արցախական ամուր գավառների լեռների վիմախառն ձորախիտ ապառաժներ»²: Իսկ Եղիեն նրանից ավելի առաջ ամրության հետ հիշում է և «Արցա-լի թանձրախիտ անտառները»³:

Արցախի լեռները Սիսական լեռների հետ միասին գուգա-ից են ստորին Կովկասի լեռներին, որոնց մասին գրքերիս ներածականում խոսեցիք: Դրանք միատարր լեռների ամ-րոջություն չեն, այլ անջատ են և ընկած են մեկը մյուսի դի-աց, որով և հիշյալ լեռնաշղթան առաջացնում է բազմաթիվ տր ձորեր ու անդունդներ, վիմահատակ ստորոտներ, որոնց

¹ Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղուանից աշխարհի», Երե-ւան, 1988, էջ 98 (այսուհետև՝ Կղկտ.), Տոգաստակին հիմնականում տալիս ենք. «Բազմավեպ» հանդեսի խմբագրության ծանոթագրությունները:

² Կղկտ., էջ 157:

³ Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, շ 125:

հարող թանձրախիտ անտառներով՝ պատած գազաթները ամ
կրկնելի են դարձնում երկրի տեսքն ու գեղեցկությունը, և խառ-
նիխումն կերպով երևում են սոճիների, մայրիների հոծ շերտեր.
քարքարոտ լեռների անհարթ կառույցներ, խառնիխումն վիճե-
րի անտաշ ձևեր, ինչպես որ նկարագրում է արդի աշխարհա-
գրագետներից մեկը:

Այդ լեռները հատուկ անունով չեն հիշատակվում հներ՝
կողմից, բացի հյուսիսում գտնվող Աստղաբլուրից և հարավու-
գտնվող Դիզափայտից, թերևս սրանց կարելի էր միացնել
Ուտիքում նշվածները: Իսկ այժմ հարավային բարձունքների
նշվում են Սարիազը և Մռավը, որոնք Ուտիքի և Արցախի միջ
լարաբաժան են, Ուլուխանը՝ տեղադրված Թարթառի ակունք
ների մոտ, որոնց ելքերից սկսվում են Չլերդ և Գյուլիստա
լեռները, դրանցից էլ հարավ՝ Գըրք-Կյոզը, որի շարունակու-
թյունն են կազմում Գանձասար և Շահթախտ լեռները, որտե-
 գտնվում են Խաչենագետի աղբյուրները: Հարավային կողմում
Սյունիքի միջնասահմանով՝ Շուշիի Քիրիզ և Զիարեղ լեռներ
են, իսկ արևելքում, դեպի դաշտաբերան՝ բրգաձև Կուրիան լեռը
Բայց շատերի անունները անծանոթ են մեզ, որովհետև բաց
Շուշիի և արքունի ճամապարհի կողմերից, այդ թվում և Գան
ձակը, մյուս անուններից շատ քչերն են ավանդված գիտնա
կանների կողմից, չեն հիշատակված նաև ծառերի, վայրի կեն
դանիների ու թռչունների տեսակները, որոնք, պետք է գուշա-
կել, որ շատ հնից խոր ձորերում և անտառներում են բնակվել
և ոչ թե նոր առաջացած տեսակներ են: Խորենացին ասում է
որ Քարախունկ լեռը պետք է Կողթ գավառում լինի:

91. Երկրամասի անվան ծագումը անհայտ և անհիշատա-
 է մնում. թերևս անհարմար չի լինի կարծել ծառերի ու թփերի
ցախ անունից ծագած, ըստ երկրի անտառախիտ բնույթի. ա-
 մեր նախորդները գրում են նաև ձ տառով: Արցախը գրվում է

նաև հոգնակիով՝ Արցախը նաև Արցախունյաց գավառ, որը գալիս է Կադանկատվացուց՝ ըստ այդմ կառուցողից էլ առաջանում է անունը. այդ անունն սովելի հաճախ հանդիպում է ածանցմամբ՝ Արցախական գաւառք կամ կողմանք⁴: Երբեք և ոչ մի տեղ չենք հանդիպում Աշխարհ անվան, այլ այն Բուզանդի⁵ երկրում մեկ անգամ կոչվել է երկիր, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ գավառ, ինչպես նույն Բուզանդի⁶, այնպես էլ սովելի Թաճախ Կադանկատվացու⁷ մոտ, թեպետև ուրիշները սա համարում են շատերից մեկը և տառերերակում են նրա գավառները:

Այդ պատճառով ինձ թվում է, որ հին սովորությամբ հետազայում այն համարվել է 15 աշխարհներից (նահանգներից) մեկը՝ Սյունյաց մարզի առաջին անբաժանելի մասը, որը Սիրակի և Առանի բուն ժառանգությունն էր. այն Վաղարշակի օրոք էլ առանձին նահանգ՝ չի դիտվել, և մեր հին պատմիչներից ոչ մեկը չի հիշատակում սրա իշխաններին, այն չի հիշատակվում նաև հին գահնամակներում կամ սրանց նման և ոչ մի աղբյուրում: Երկիրը իր թնությանը նման է Սյունիքին, նրան էլ կից է, և երկուսում էլ կան համանուն գավառներ, ինչպիսիք են Սյունկանը, Վայկունիքը, Հաբանդը: Բայց երբ այն անջատվել է Սյունիքից, միայն իր ամրությամբ է՝ աչքի ընկել հայոց հարջատության մեջ և առավել ևս Աղվանքում: Թերևս վայրի ամրության վրա հույս դնելով էր, որ երկրի իշխանները ապաստանվում էին արքունիքի դեմ, ինչպես որ վկայում է Բուզանդը Արշակ Երկրորդի օրոք և քաջ Մուշեղի միջոցով նվաճվելը: Վար-

⁴ Կղնկտ., էջ 99, 203:

⁵ Փաստոս Բուզանդացի, Պատմություն Հայոց, Վենետիկ, 1983, էջ 214

⁶ Փ. Բուզանդ, էջ 166:

⁷ Կղնկտ., էջ 187:

դաճանց օրերում փախստականներից շատերի համար ապս-
վեմ եղան նրա լեռները, որտեղից խաբեությամբ իջեցնելով՝
Վասակը նրանց տալիս էր պարսիկների ձեռքը, բայց կային և
այնպիսիները, որոնք սուրբ զորավարի մահատակությունից հե-
տո «տիրեցին Արցախի բազում ամրոցների»⁸ և դիմադրում
էին պարսիկներին:

Դրանից հետո Ռոտիքի հետ միասին սա էլ Աղվանից թա-
գալորության մի մարզն է դառնում և միջին դարերում Աղվա-
նից աշխարհի անունով Առան է կոչվում: Համանուն աշխարհում
բազմաթիվ իրադարձություններ են տեղի ունենում, և մա իր
ամրության շնորհիվ զանազան փորձանքներից մասամբ զերծ
է մնում, առանձին իշխանների միջոցով իր գործը կարգավո-
րում, որոնց մեջ քաջի անուն հանեցին Խաչենի իշխանները,
ինչպես երևում է գավառի աշխարհագրությունից: Արի իշխան-
ներից ոմանք, հաջորդելով միմյանց, Սյունյաց մեղիքների հետ
միասին հասան մինչև՝ անցյալ դարի վերջը և մեր օրերը:

92. Հայոց մախնիների իշխանության ժամանակ Արցախը
տասներկու կամ ավելի գավառների էր բաժանվել, պարզ է՝
ոչ շատ ընդարձակ գավառների, որոնց ոչ բոլոր վայրերն են
ծանոթ, իսկ նրանց սահմաններն էլ՝ ավելի անծանոթ են, քանի
որ Աղվանքի իշխանության ժամանակ առանձին իշխանների
կողմից նվաճվելով, նրանք փոխեցին իրենց սահմանները: Այս-
պես, Խորենացին⁹ 12 գավառներ է թվարկում, իսկ ըստ աղ-
օրինակների 13 կամ 14 են: Դրանք են՝

ա. Կողթ կամ ըստ վատիկանյան օրինակի՝ Կոխտ, Կող-

⁸ Եղիշե, էջ 125:

⁹ Աշխարհացոյց Մովսիսի Խորենացու, հրտ. Հ. Արսեն Մխչրի, Վենե-
տիկ, 1881, էջ 38 («Աշխարհացոյցը» վերագրված է Մ. Խորենացուն, այս-
պես էլ թարգմանել ենք):

լըք, որն ընկնում է Գեղամա ծովի ելքի, Ծամբոր և Խոչքար լեռների ակունքների միջև, Այրում գավառում, որը տեղադրված ինք Ոստիքում:

բ. Բերդ ձոր կամ **Բերդաձոր**, որն ընկնում է Կողքից հատվ, Գանձակ և Կուրակ գետերի ձորագլուխներում, որը նույնպես Ոստիքում է տեղադրվում:

գ. Վայկունիք. ընկած է վերոհիշյալների հարավարևմտյան կողմում, Թարթառի ակունքների մոտ:

դ. Միսական ուտան, նույն **Միսան ձորը**. սկսվում է Վայկունիքի ելքից և, ինչպես ինձ թվում է, ընկած է Կուրակի և Խորանի միջև:

ե. Մեծկունիք կամ **Մեծունիք** կամ **Մեծ Կողմանք**. Թարթառի հյուսիսային կամ ձախ կողմում է, Չլաբերդում:

զ. Մեծիրանք կամ **Մեծարանք** կամ **Մեծյուրյանք**. նույնի գետի հարավում, Գյուլիստանում:

է. Փառնես կամ **Քուստի Փառնես**, որը կարծվում է վերևի թլուսի արևելյան կողմում: Խորենացու աշխարհագրության տաճինն օրինակներում այդ գավառը երկու մասի է բաժանած՝ **Քուստի** և **Փառնես**, որոնք, երկրամասի մեջտեղում իրար յոդ գտնվելով, մի անունով էին կոչվում՝ **Միջնարցախ**:

զ. Մշու Հաբանդ, այսինքն՝ տարբեր Սյունիքում գտնված, սկսվում է նրա ելքից և տարածվում է Մեծիրանքի հարավում:

բ. Պարզկանք կամ **Պազկանք**, նույն **Պանծկանքը**, որը ժամանակից է Հաբանդին և Ամարասին:

ժ. Մոխանք կամ **Մխանք**, որը կոչվում է նաև **Մխանց ռոմ**:

ժա. Հարժկանք կամ **Հարճկանք** կամ **Հարջկանք**:

ժբ. Պիանք, որը վառիկանյան օրինակը **Ապիանդը** է լիում, սրա երեք կողմերը անհայտ են, թվում է, որ ընկած

պետք է լինի այժմյան Շուշիի, Սյունիի և Երասխի միջև, ույ
որ գրվելու է և¹⁰

ժգ. Քոտակ կամ Կոտանք, իհարկե, եթե ստույգ է առան-
ձին օրինակներում ավելացվածը:

Այդ գավառներից շատերն ունեն տոհմական անք մաս-
նիկը: Ինչպես երևում է անուններից, դրանք տրվել են գավա-
ռի բնությանը համապատասխան շատ վաղ ժամանակներից |
վեր, որպիսիք են Խաղբյանք և Խաչյանք անունները, որոն-
քիշատակվում են Ներսես Մեծի գահնամակում, Դ դարում, իսկ
այնուհետև ԺԲ և ԺԳ դարերում պատմության մեջ փայլում են
Խաղբակյան իշխանները և Խաչենցիք:

93. Այդ գավառների անուններն ու տրոհումը 12-ի կա-
13-ի թերևս աղավաղվել են Աղվանից իշխանների և Բագրա-
տունիների օրոք, տակավին մինչև Ժ և ԺԱ դարերը լսվում և
պահպանվում էին, այնուհետև Հայոց և Աղվանից թագավո-
րությունների՝ Պարսկաստանի կողմից գրավվելու ժամանակ
գավառների և իշխանությունների մոր անուններ են լսվում, ո-
րոնցից հնագույններն են Ռոսաստակ և Չղախ գավառակներ:
Ինճե գետի հովտում, Ճառաբերդ աշխարհը կամ գավառը, որ
գրավում է Թաթթառի ամբողջ հյուսիսը և մինչև այժմ պահու-
մ է իր անունն ու գավառի պատիվը Չլաբերդում. այն պատմիչ-
ների երկերում հիշվում է Է-ից մինչև ԺԲ դարը: Երկրորդը
Փառխոսն է, որը հայտնի է դառնում Ժ—ԺԲ դարերում. այն
ընկած է Ճառաբերդից հյուսիս: Դրանք չնայած խառնվում են
իրար, բայց պատմիչի կողմից որպես մեկ ամբողջություն չեն
հիշատակվում: Երրորդը Խաչենն է, որը միախորդնեթին՝ գերա-
զանցեց ոչ միայն փառուն ժամանակով, այլև հնությանը ո-
պատկով: Խաչենը, որ ընկած է Տրտու և Գարգար գետերի մի-

¹⁰ Բնագիրն այստեղ ընդհատվում է— ծան. թարգմանչի:

չև, իր անունն առնում է համանուն գետակից: Խաչենը մեծ փառքի է հասնում ԺԳ դարում, երբ գրեթե Արցախն անունն էլ փոխվում և **Փոքր Սյունիք** է կոչվում: Գլխավոր գավառների հետ միասին ԺԲ դարում հիշատակվում է և **Ադախը**, որը կարծես Գանձակ գավառի հարավային կողմում է: Սրանցից ավելի փոքր գավառներ են **Ամարասը** Թ դարում, որը կոչվում է սելանի անունով, գտնվում է Հաքանդում, **Ծար** երկիրը, որն սկսվում է Սյունյաց Սողից և կազմում է հին Վայկունիքի մի մասը, **Ականան** և **Կարկառը**, որոնք հիշատակվում են ԺԳ դարում և գտնվում են Սյունյաց սահմաններում, Վայկունիքում և Բերդաձորում: Դրանք փոքր իշխանություններ են, դրանց պետք է միացնել նաև **Հանդաբերդը** և **Ուռիաձորը**: Նույն դարում և ԺԴ-ի սկզբում արձանագրություններում նշվում են այլ բնակավայրեր (վիճակք), ինչպես՝ **Գլուխ**, որը իմ կարծիքով Ծարի կողմում է, **Մոխանց**, **Հասկաբակ**, **Կալեր**, **Խորվագետ**, **Դվալանոց**, որոնց տեղերը չգիտեմ: Դրանք իրար մոտիկ, մասն իշխանություններ են, սահմանակից մախապես հիշյալ Ականային և Ծարին: Իսկ Խաչենից հարավ (այն տրոհված էր երկու մասի՝ **Վերին** կամ **Ներքին** և **Ստորին**) հիշատակվում են **Դիզա** կամ **Դիզակ** երկիրը և Վարանդան. սրա անունը կա ու մնում է ինչպես ամբողջ գավառի, այնպես էլ Արցախի հարավային մասի համար: Այս բոլոր գավառներից և՛ իշխանություններից միայն Խաչենի անունն ու պատիվն է հին ու հայկական, որն իր իշխանությամբ հարատևեց և հասավ մինչև մոտ դարերը՝ փառավորվելով նաև քահանայական պատվով: Այնտեղ՝ Գանձասար, փոխադրելով Աղվանքի կաթողիկոսական աթոռը՝ Արցախի ստորին կողմերը ամբողջությամբ **Գանձասար** կոչվեցին հայոց պատմության հետագա դարերի ընթացքում:

84. Իսկ երբ թուլանում է հայկական իշխանությունը, և ուժեղանում օտարների ձեռներեցությունը, նախ հռչակվում է

Տիմ Առան անունը (հայտնի է, որ այն միշտ անտեսված էր) արևելյան թագավորների շրջանում, և մինչև վերջերս պարսից արքունիքում Արցախ աշխարհը այդ անունով է ճանաչվում, որը կազմում էր ամբողջ նահանգի կամ Առան երկրի միջին մասը, Սյունիքից մինչև Կուր, որն այժմ Ղարաբաղ է կոչվում՝ անտառների, ագարակների, այգիների և նրանց ստվերների պատճառով: Այժմ այն ուսական ինքնակալության իշխանության տակ է, կովկասյան բաժնի մեջ և մայրաքաղաքի անունով կոչվում է Շուշի: Այդ արցախական մասը այժմյան Առանն է կամ Ղարաբաղը, որն այժմ տրոհված է երկու գավառի՝ **Ձըլաբերդի**՝ հյուսիսում և **Վարանդի**՝ հարավում. դրանք միջնադարյան գավառների անուններն են: Բայց երկրամասի միջին մասը՝ Խաչենը, կոչվում էր և ցարդ կոչվում է Գյուլիստան, որը գրավում է Արցախի հյուսիսարևմտյան մասը, այն է՝ Թարթառի աղբյուրների ավազանը. այժմ այն համարվում է Սյունյաց երկրի Զանգեզուր գավառի մի մասը: Սրանցից դուրս են մնում նահանգի հյուսիսային և արևելյան եզրերը, որոնք մտնում են Գանձակ և Զիվանջի գավառների մեջ. դրանք մենք Ուտիքի մեջ տեղադրեցինք:

Այսպիսով, հիշելով այն, ինչ որ Տիմ ժամանակներում իմացանք գավառների և իշխանությունների մասին, մեզ ցավ է պատճառում երկու-երեք գավառների և իշխանությունների նոր անունները չիմանալը, որի պատճառով էլ մեր աշխարհագրության մեջ Արցախը ստիպված տրոհում ենք ավելի փոքր և ավելի մեծ մասերի ու նրանց հետ՝ ավանդում: Եվ ինչքան որ մեզ ծանոթ է և մեր ձեռքի տակ է Տիմ գավառների դասակարգումը, մեր աշխարհագրության մեջ, ըստ մեր կարողության, դնում ենք Տիմ, միջին և նոր գավառներն ու բնակավայրերը:

Հին գավառներ	Միջին	Նոր	Բնակեցւայրեր
ա. Կողք	Տանձիք (")	Այրում	
բ. Բերդաձոր	Բերձոր, Աղախ (")	Այրում (")	
գ. Վայկունիք	Ծար, Հանդա- բերդ	Ջանգեզուր	Վայկունքի, Ծար Ականա, Հանդաբերդ Սյուսխան, Ղարախ (")
դ. Սյուսխան ուտան	Սյուսանաձոր	Չլաքերդ	Փառխոս, Ջեփա
ե. Քուստի- Փառնես	Փառխոս, Ջափե	Գյուլիստան	Գյուլիստան, Ջալաքաքերդ, Մեծկողմանք
զ. Մեծկողմանք	Խաչեն (վերին), Ծառաքերդ	Չլաքերդ	Մեծիրանք, Խաչեն, Կսապատ
է. Մեծիրանք	Խաչեն (ստորին), Ծառաքերդ	Գյուլիստան, Չլաքերդ	Ամարաս, Ասկերան
ը. Մյուս Հաքանդ	Ամարաս, Խաչեն	Չլաքերդ, Ծուշի	Ծուշա
թ. Պարզկանք	Խաչեն	Չլաքերդ, Ծուշի	
ժ. Մոխանք	Խաչեն (")	Վարանդին	Դիզակ (Տուգախ)
ժա. Հարժանք	Դիզա Վարան- դին (")		Վարանդին
ժբ. Պիանք			
ժգ. Քոտակ (")			

ՎԱՅԿՈՒՆԻՔ ԳԱՎԱՌ

95. Արցախի երրորդ գավառը, Կողքից և Բերդաձորից
 ճեւոտ, որոնք հարկ համարեցինք Գանձակ նախնգի մեջ մկա-
 14

քազրել, Վայկունիքն՝ է, որը պարզ կերպով առանձնացված է մյուս մասերից, որոնցից ավելի արևմուտք լինելով, երկու կողմից սահմանակից է Սյունիքին, արևմուտքից՝ Մողք՝ գավառին, որից անջատվում է արցախական Թարթառի և Գեղամա ծովի ավազանների բարձր լեռների անջրպետով, հարավից՝ Հաքանդով կամ այժմյան Զանգեզուրով, իսկ սահմանի ելքից՝ Արցախի Չլաքերդ գավառով, հյուսիսից՝ նեղ Քունկուր լեռով, որտեղ վերջանում է Այրում գավառը։ Երկիրը հարուստ է բարձրավանդակներով և լեռնանեղքերով, ջրաբքի է, օժտված քնության գանազան գեղեցկություններով, քանի որ ճանապարհորդները այդտեղով առանց հետաքրքրության չեն անցել։

Լեռներից ու բլուրներից բխում են շատ աղբյուրներ ու առվակներ, որոնք հավաքվում են երեք գետակների մեջ, որոնք էլ արևելյան սահմանում միանալով՝ իրար, կազմում են Թարթառ մեծ գետը։ Միջին գետը հենց Թարթառն է, որը բխում է գավառի հարավարևմտյան ծայրից, Արցախի ամենահեռավոր մասից՝ Սարյալ-Սըռչալ լեռից և, իր մեջ առնելով մանր վտակներ, իջնում է դեպի հյուսիս ու թեքվում դեպի արևելք։ Դրանցից առաջինը կոչվում է Խսթի-սու, երկրորդը ձախ կողմից խառնըվում է սրան, որն իջնում է հյուսիսից՝ Քունկուրից և Մոավի բարձունքից։ Դրա անունը չի նշված, ես կարծում եմ, որ այն Ականա գետակն է, ինչպես որ ստորև կասեմ։ Երրորդը կոչվում է Տուղխու-չալ, որը, թխելով Զանգեզուր լեռների թիկունքից, աջով իջնում է հարավից դեպի հյուսիս և խառնվում վերոհիշյալ գետակին։ Երեք վտակների միավորումից հետո Թարթառը հոսում է հարավից դեպի արևելք և, անցնելով Սիսական, Քուատի-Փառնես, Մեծ Կողմանք գավառների միջով, թեքվում է դեպի հյուսիս կամ ձախ, հոսում Մեծիրանքի միջով դեպի հարավ կամ աջ և Գյուլիստանի Մոլլա Իսմայիլ ավանի մոտով դուրս է գալիս Զիվանջի գավառը, Ուտիքի դաշտը։ Սա Կուրի

ձախակողմյան վտակներից գրեթե ամենահզորն է և ամենամեծը՝ Արցախի և Ոստիքի գետերի մեջ: Այն այդ կողմերի պատմության մեջ մեր նախնիների կողմից անվանվել է **Տրոտ** կամ **Տրոտական գետ**, իսկ պարսիկների կողմից՝ **Թերթեր**: Երկրամասի բնական պայմանների համաձայն՝ մեր նախնիները արևմըտյան կողմը կոչել են **գի** կամ **գիհի** ծառի պուրակներ, արևմըտյան կողմը, Տուրխու գետակի մոտ՝ բաղանիքի տաք ջրեր, որոնց կանոքադառնանք ստորև:

96. Այս գաղափարի անվան ծագման պատճառը, որը գրվում է նաև **Վայունիք** և **Վայկունիք**, մեզ է հասցրել մեր վիպահայր Խորենացին: Նա նշում է նաև ժամանակը՝ Փրկչի ծննդից 40 տարով առաջ. երբ Տիգրանն ու Արտավազդը կռվում էին պաղեստինցիների դեմ, «Վայկուն անունով մի ավազակ խոռվություն է բարձրացնում Հայաստանում և գրավում **Ամուր** լեռը, և այժմ այդ ավազակի՝ անունով լեռը կոչվում է **Վայկունիք**»¹¹, որի պատճառով արքան շտապեց վերադառնալ Հայաստան և երկիրն ազատել ավազակի ձեռքից, որը՝ **Կովկասի** այն կողմերից էր, թե՛ հայոց նախնիներից, հայտնի չէ: Ըստ երևույթին, նա երկար ժամանակ տիրել է այդ երկրամասին, և այն կոչվել է նրա անունով, իսկ առաջներում, ինչպես ցույց է տալիս պատմիչը, այդ լեռները, իրենց բնության համաձայն, կոչվել են **Ամուր**: Այդ բառը ուրիշներն էլ են համարում հատուկ անուն, այն նոր անունով կոչելով, ինչպես, օրինակ, Անեցին ասում է. «Վայկուն ավազակի անունով լեռը կոչվում է **Վայկունիք**»¹²: Այդ պատճառով թվում է, որ Սյունյաց մի այլ անվանի գաղափար էլ կար՝ **Վայոց ձոր** կոչեցյալ և ոչ թե այդպես կոչվեց

¹¹ Մովսես Խորենացի, Պատմության Հայոց, Տիգրիս, 1918, էջ 129:

¹² Մանուկ Անեցի, Հասարակածի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1898, էջ 50:

այնտեղ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի՝ սպանելու պատճառով, ինչպես որ մահաճգի պատմիչն է ասում¹³, որովհետև այդ անունը կա մեկ մեր հնագույն մաթեմիկների մոտ: Եվ այդ գաղափարի առանձին բաժանման պատճառով Թ դարի Աղվանից պատմիչը¹⁴ այն կոչում է **Վերին Վայկունիք**, որը 830 թ. մվանցին բաղանիկեցիք կամ բաղանակացիք, որոնք տասնհինգ տարի ասպատակեցին Բերձորն ու շրջակա գավառները, և մրանց դուրս վռնդեց քաջ Ապումուսեն: Սա հիշատակվում է Բերձոր և Սիսական գավառների միջև, հյուսիսից դեպի հարավ: Այդ բաղանիկեցիք, որոնք տասնմեկ տարի անց նորից են ասպատակում Սիսականն ու Ամարասը, անտարակույս Արցախի և Գեղամա կողմերի բնակիչներն են, և ըստ եղած կարծիքների, ինձ թվում է, որ ամուր գաղափար, այսինքն՝ հռչակված **Բաղանիքի** կողմերից են, որոնք՝ հիշատակվում են այն ժամանակներից: Իսկ այնուհետև այն բաժանվում է ոչ շատ և բազմապիսի բնակավայրերի (վիճակների), ըստ առաջադիմության՝ ավելի մեծ և ամուր շեների: Այսպես, արևմտյան կողմը կոչվում է **Ծար**, արևելյան ընդարձակ մասը՝ **Հանդաբերդ**, հյուսիսայինը, ըստ իս, **Ականան** է, և այդ բաժանումը կատարվում է Տրոտի վերոհիշյալ երեք վտակներին համապատասխան՝ անջրպետված լեռների բազուկներով:

ԱԿԱՆԱ, ԾԱՐ, ՀԱՆԴԱԲԵՐԴ

97. Խաչենի տերերի և իշխանների՝ արձանագրություններում, որոնք պահվում են վանքերում, շատ տեղերում նշվում են ԺԳ—ԺԴ դարերի բնակավայրերի անունները: Եվ **Ականան** պետք է լինի Հանդաբերդի ու Գեղամա ծովի մոտերքը, որով

¹³ Կղզկտ., էջ 322:

¹⁴ Անդ., էջ 340:

առաաշում են Սողքի լեռնային ու հարավային կողմերը, և Սողքի գյուղերի մեջ հիշվում է Ականքը ժՋ դարի սկզբին: Կիրակոս Պատմիչը¹⁵ ժԳ դարի կեսին ասում է Սարթախ խանի մասին, որը դարձել էր Զալալ իշխան, որից խել էին Ականք և Կարկառը: Թվում է՝ սա պետք է լինի գավառի հյուսիսում, և ինչպես որ Զակառի աշխարհագրության մեջ հիշատակեցինք, պետք է լինի մինչև օրս՝ հայտնի Կերկեր գյուղը կամ վտակը, որը գտնվում է գավառի հյուսիսում 20 մղոնից ոչ ավելի: Եվ այս ամենից ենթադրում են, որ այստեղ, Թարթառի հյուսիսային վտակների հովիտներում, պետք է գտնվի և Ականք, որ ցայժմ հեղինակներից ոչ մեկը չի հիշատակել, և արձանագրություններում կամ մի այլ տեղում չի հիշվում, նրանում էլ՝ ոչ մի շենք: Իսկ թղթերում նշվում է միայն Լեվ-գալե բերդը վտակի եզրին, որը, թվում է՝ այդ փոքր բնակավայրերի գլխավոր շենքն է եղել, իսկ թե այն ժամանակ՝ ինչպես է կոչվել և այժմ ինչպես է կոչվում, չգիտեմ:

Սրա ելքի մոտ, Չլաբերդ գավառի ծայրին է գտնվում Ցան-շախ՝ գյուղը: Սրանց մոտ էլ, իմ կարծիքով, գտնվում է Գլուխ կոչված փոքր բնակավայրը՝ Ականի կամ Ծարի մի մասը, քանի որ ինչ-որ հիշատակարանում Փոքր՝ Սյունիքի տեր Գրիգորը 1312 թ. նշում է իր իշխանության հիշյալ երկրամասը. «Փոքր Սյունիքի, Հանդաբերդի, Ականի, Գեղամա ծովակի բարձր լեռները և Սողքից մինչև Ծաղվազա», նրան է միացնում նաև մանր «մեր գավառները, որոնց անուններն են՝ Սոթ, Գլուխ, Բերդաձոր, Մոխանց» և այլն, և այլն: Բանի որ Բերդաձորը համարեցինք Կուրակի վերնաճովիտը, հարմար է այստեղ՝ Ականի մոտ կարծել և Գլուխը:

¹⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 858—859:

98. Ծար երկիրը գրավում է Ութիսու գետի հովիտը կամ Տրտուի միջին մասը, սահմանակից է Սողքին և երկուստեք պարսալած է լեռներով. անկասկած՝ հարուստ է այդ վայրը: Վերոհիշյալ բնակավայրերի հետ սա որպես գավառակ չի հիշվում, այլ Սողքի մի մասն է, իսկ ավանն էլ առանձին է հիշվում: Որ Սողքը Սյունիքում է գտնվում, աշխարհագիր Վարդանն էլ է վկայում՝ սրանց կոչելով անվանակից. «Սողքի գավառը Ծարի երկիրն է»¹⁶: Եվ մենք հարմար գտանք այս անունով կոչել ամբողջ երկիրը:

Ընդարձակ Ծար ավանը, որ գրքերում և արձանագրություններում գյուղ և գյուղաքաղաք է կոչվում, գտնվում է գավառի հարավային կողմում, այն վտակների միջև, որոնք Թարթառի միջին մասում են հոսում, հարուստ և արգավանդ մի վայրում, որը դարձել է անշուք և սակավամարդ մի վայր, և որը պետք է եղած լինի այդ կողմերի հին և գլխավոր շենք: Առաջինը Գրիգոր Մագիստրոսն է տալիս գիհի փայտյա եկեղեցու նկարագիրը. «Ասում են քեզ, որ մեր սեփական աղվանական աշխարհում կար՝ Ծար կոչված ավանը, և ես ինչ որ ասում եմ, կատակ չէ. վաղուց վրան աճել է գեղեցկատես գիհին, որից պատրաստված քիչ սյուներ չենք տեսել կոչարանում, հաստ ու ուժեղ, երկար ու գեղեցիկ գերաններ. այն սուրբ Հակոբի վկայարանն է: Տաճարի՜ ամբողջ գույքը կատարյալ է՝ տախտակները, խոյակները, սյուների պատվանդաններն ու գլուխները, դռները, սեմերը և հատակը ասում են, որ գիհի այդ մի ծառից են պատրաստված: Այդ գավառի այն տաճարում տեսել ենք նաև ընդարձակ սրահներ, միջանցքներ, որոնց չենք

¹⁶ Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, հրտ. Հայկ Պէրպէրեան, Փարիզ, 1960, էջ 12:

Քանդիպէլ ոչ մի տեղ, քացի այդ թագավորական քաղաքից»¹⁷։ Աղվանքի մեջ է մտնում և Ծարը՝ այն ժամանակ Արցախը Աղվանքի տիրապետության տակ լինելու պատճառով, որին, ըստ արձանագրության վկայության, տիրում էին Խաչենի իշխանները ԺԳ—ԺԴ դարերում, ինչպես որ ասում է Գրիգորի և Դուփի որդի Հասանի մասին, որը լինելով այդ կողմերի «և քազմաթիվ այլ գավառների իշխանը, ամենից շատ սիրում էր Ծար գյուղը՝ քաջ հայրենիքն ու պարգևները, որոնք արյան գին են՝ տրված հայոց թագավորների կողմից»։ Պետք է ասել, որ նա այն ոչ միայն սիրում էր, այլև գեղեցկացնում էր շինություններով՝ իրեն գործակից և եղբայր ունենալով Հովհաննես արքեպիսկոպոսին, որը Հաղպատի առաջնորդն էր և շատ շենքեր էր կառուցել այնտեղ։

99. Սա ըստ Թադեի վանքի արձանագրությունների «շինեց Գեղտամեջ սուրբ վանքը», որը մույն Ծարի վանքն է ավանի հարավում՝ գեղեցիկ մեծ եկեղեցով, որը շատ հին է, և նրա տեղի ու շինության մասին վկայում է արձանագրությունը. «Այն ժամանակ, երբ թաթարները տիրել էին շատ երկրների, մինչև օվկիանոս մեծ ծովն ու Ստամբուլը, Պոմսոսից մինչև Եփրատ գետը տիրելով գոռոզաբար, մեծ հարկեր էին պահանջում՝ նեղություն պատճառելով քողորին, մեծերին ու փոքրերին մատուցելով մահվան ու գերության։ Տեր Հովհաննես Դուփյանց, խղճով, տկար և նվաստ հոգի, այն ժամանակ, երբ մենք նեղության մեջ էինք, մեր նախաահայրերից մեզ հրաման հասավ գնալ մեր առաջին հայրապետների աթոռը՝ հուշակված Հաղպատ վանքը և դարձի՝ բերել մեր հարազատ ավագ եղբայր, հուշակավոր քաջ զորավար Հասանի հայրենի և սեփական տունը, եկեղեցուն և քահանաներին սիրող նրա որդի Գրիգորին, բարենամ-

¹⁷ Գրիգոր Մագիստրոս, Թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 221։

քաղ իր տիկին Ասփային, որը Սյունիքի կողմերի իշխան, մեծ կոմս Տարսայիճի դուստրն էր: Եվ մենք մայելով ձորակներին, որ այտտեղից, այնտեղից Ռոսում էին ջրեր, տեսանք որ նրանց միջև մի գեղեցիկ թլրակ կա, ես հավանեցի, մտա անապատ ու սկսեցի կառուցել մի մատուռ: Եվ այդ մպատակի համար եկավ գավառի իշխան, մեր եղբորորդի Գրիգորը, որն իշխում էր ման շատ այլ կողմերի և կամեցավ կառուցել սուրբ Աստվածածինը, որպես միջնորդ մեզ և բոլոր՝ քրիստոնյաների համար: Ես Տեր Հովհաննեսի շինության սկզբը դրեցի 2Ժ (1261) թվին»:

Իր դիրքի համաձայն էլ ստացել է **Գետամեջ** անունը, որտեղ վանքից առաջ եղել է վաղեմի մի շեն, քանի որ Գեղարքունի (Ծարի մուտքից մոտ 20 մղոն հեռու)՝ այդ կողմերի վրա իշխող վանեվանքի արձանագրության մեջ Ծարպոսի Բագրատունին ասում է, որ 903 թ. վանքին է տրվում **Գետամեջը** այլ չորս գյուղերի հետ միասին: Արձանագրությունները միշտ այս անունով են հիշում վանքը և ոչ թե **Ծարից**: Օրինակ, Խութի կամ Թաղեի արձանագրություններում ասվում է Հովհաննեսի եղբայր Գրեգինի թոռ Սարգսի մասին, որին տրվել են շատ վանքեր «գեղեցիկ զանգակներ... (և) Գետամիջում՝ Ծար գյուղաքաղաքում, Եկեղեցու շուրջը կան տոհմի իշխանների խաչազարդ գերեզմաններ, ինչպես որ ասվում է Խութի արձանագրությունում. «Գետամեջը մեր գերեզմանատունն է, մեր պապերից մեզ մնացած», և 1430 թ. Սայտի թողը՝ վերոհիշյալ Սարգսի որդին տաճարի դռանը մի մեծ խաչավեմի վրա արձանագրում է. «Աստծու օգնությամբ ես՝ մեր ազգի մեծ իշխան, քաջ և հաղթող զորավար պարոն Ծանշի որդի Սայտիս, Փոքր Սյունիքի Ականի, Հաթերքի, Հանդաբերդի և Գեղամա ծովակից մինչև Ծաղվանք տեղերի տերս, ՊԷԹ (1430) թ. կանգնեցրի մեր հայր Ծանշի խաչը. ովքեր որ երկրպագում են, թող՝ աղոթքների մեջ հիշեն»:

Այլ արձանագրություններ չեն նշում, և ոչ մի առաջնորդ

չի հիշվում: Եվ թվում է, որ երկար ժամանակ չեն չի մնացել
որովհետև ԺԵ դարի կեսին Խուսի վանքի արձանագրություն
ներում իշխանները (պայազատները) վկայում են, որ այդ ժա
մանակ և՛ դրանում, և՛ Խաթրի «վանքերում մարդ չկար, որ
առաջ կար և չեն էր պահում»:⁴ Եվ տոհմը, որ այստեղ մինչ
ուր սերունդ ցույց տրվեց, դրանից այն կողմ չի հիշվում այս
տեղ, այլ կհիշենք Խաչենում, մասնա ալ իշխանների, որոնք Խա
չենի շատավիդի ճյուղերից են, որոնք տիրել են Արցախի արև
մուտյան և հարավային կողմերին: Գյուղաքաղաքի անունը հրո
շակվեց, որը բնիկներից մեկը ԺԶ դարում կոչում է Փոքր Սյու
նիք, ինչպես և Խաչենը:

100. Հետագա դարերում Ծար երկրից և ավանից դուրս ե
կան անվանի շատ մարդիկ, ինչպես՝ Հովհաննես Վարդապետ
ԺԶ դարում, որն ապրեց Թադեի վանքում, մեռավ 1583-ին
թաղվեց Սյունիքի Վասակաշենում: Նրան անվանակից և ժա
մանակակից Հովհաննես Վարդապետ՝ Ծարեցի պատմիչը, որ
իր ժամանակի անցքերը պատմում է մինչև ԺԶ դարի վերջի
տարին, նրա պատմության մի մասը տպագրվել է Առաք
պատմիչի Պատմության հետ, իսկ մնացած մասը մեզ անծա
նոթ է: Մատթեոս Սարկավազը՝ հայկական տպագրության հաս
տատման համար քրտնաջան վաստակավորներից մեկը, Ժ
դարի կեսին, 1655 թ. գալով Եվրոպա և դեգերելով Վենետիկում
ու Հռոմում, ձեռնարկում ու Ամստերդամում կառուցում
տպարան, որը բարգաւաճման հասցրին Ոսկանյանները, որոն
հետև անժամանակ մեռնում է Մատթեոսը, 1660-ին:

1250 թ. Ծարում սկսում է գործել Դավիթ անունով մ
խաբեքա, մի աղանդակ մարդ, որը «չքավորներից և աղքատ
ներից էր, պահում էր նրանց ջրաղացը ...և դրանով կերակրո
ւ իր փնոջն ու որդիներին...: (Սա խաբվելով դեկից)՝ սկսում
քարոզել, թե Քրիստոսը երևաց իրեն և ասաց, որ ինքը պետ

Է փոխի աշխարհը և թծկություն անի: Նրան միացան ուրիշները և՛ սկսեցին տարածել նրա համբավը՝ նրան կոչելով Դավիթ միայնակյաց ու սքանչելագործ: Եվ բռնությամբ խլելով նրա տան ձիթահանքի գերանը՝ բարձր խաչ պատրաստեցին, տնկեցին եկեղեցու դռանը, մորթեցին զվարակ (արջառ) և նրա մսից, ռակորներից, խաչի տաշեղներից, ջրաղացի կորեկի հատից, որպես՝ օրհնության նշխարք, տալիս էին բոլոր ուխտավորներին, որոնք գալիս էին զանազան կողմերից: Նույն քանաարկուն, որ Ռորդորեց նրան, դրդեց ամբողջ գավառին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, երեցներին, ազատ մարդկանց, հիվանդներին, ցավազարներին այն համբավի համար գնալ նրա մոտ, առաջինը ինքը կեղծավորելով, ոչ մեկին դեռաքրիստոսին չէր նմանեցնում: Նա այսպես էր քարոզում. Ո՞վ եմ ես, մեղավոր մի աղքատ, բայց Քրիստոսը ինձ հրամայել է քարոզել՝ երկուշաբթի օրը պաս պահեցեք, հայհոյանք՝ մի տվեք, եկեք, համբուրեցեք ինձ, և թող ներվեն ձեր մեղքերը մինչև ձեր յոթերորդ սերունդը»: Ըստ տարբեր տեսակի հիվանդությունների՝ անում էր նաև այլ անմտություն ու խաբեություն, որոնցով «բոլորի միտքը իր կողմն էր գրավում, և այնքան մարդ էր հավաքվում նրա մոտ ժողովի, որ մինչև անգամ տեղը չէր բավականացնում: Եվ քանի որ ամառվա ժամանակն էր, մարդիկ, դուրս գալով դաշտերն ու սարերը, գիշերը այնտեղ էին մնում և կատարում էին զանազան չարիքներ..., և շատերը գնում էին ընծաներով, ոսկով, արծաթով, զվարակով, ոչխարով..., այլ երեցներ եկան և միացան նրանց՝ հարստության տիրանալու նպատակով: Մարդիկ ծառայում էին նրան, լվանում էին նրա ոտքերը և ջուրը շաղ տալիս իրենց ու ժողովրդի վրա...», որը լսելով Վանական մեծ Վարդապետը, նրա աշակերտ, այդ դեպքերը պատմող Կիրակոսը և ուրիշներ, զգուշության ու կշտամբանքի գիր գրեցին, իսկ Տեղ Գրիգորիս եպիս-

կոպտը! Դադիվանքի առաջնորդը, եկալ «շատ քահանաների
հետ այն գյուղը, քանի որ այն նրանց թեմի մեջ էր մտնում,
խաչով, ավետարաններով և՛ գիշերային պաշտամունք կատա-
րելով, խաբված մարդուն կանգնեցրին մեջտեղում, որպեսզի
թերևս նրա միջից դուրս ելնի պիղծ ոգին: Եվ երբ նրան հարց-
նում էին, թե ինչ է տեսնում, ասում էր, որ երբ բերանքսիվայր
ընկնում է երկրի վրա, երկրից [աստված]՝ իրեն է երևում և
խոսում իր հետ: Ապա եպիսկոպոսն ու երեցները վերցնելով
խաչը, որը տնկել էր խաբեքան, կամեցան էին ջարդել: Ծարժ-
վեց ամբողջ բազմությունը և սրերով ու դազանակներով կամե-
նում էր սպանել նրանց, իսկ նրանք, դուրս գալով ամբոխի մի-
ջից, անենթներով խիստ նզովում էին հանդգնողներին: Նրան-
ցից ոմանք զոջացին, գնացին և աղաչեցին եպիսկոպոսին՝ ար-
ձակել իրենց անենթի կապանքներից: Եվ այն մարդուն տվեցին
նրանց ձեռքը: Եվ երբ տանում էին նրան, հանդիպեցին գառ-
նեցիք, որոնք գալիս էին մեծ դռնից, այն մարդը նրանց՝ աղա-
չեց, որպեսզի նրանք իրեն ազատեն եպիսկոպոսի ձեռքից, քա-
նի որ իրեն գառնեցի էր համարում և նրանց ազգակից: Նա ժո-
ղովրդի առաջ ասում էր, թե ինքը Արշակունիներից է, հետևա-
բար իր որդիներից մեկը պետք է լինի թագավոր, իսկ մյուսը՝
կաթողիկոս, և նրանց վրա պետք է կատարել սուրբ Սահակի
տեսիլքը: Այնուհետև եպիսկոպոսը այն մարդուն տվեց նրանց
և երդում պահանջեց, որպեսզի նա այլևս չմոլորեցնի մարդ-
կանց, ահա այսպես հազիվ վերացավ չարը»¹⁸:

101. Ծարի հարավում նշվում է միայն **Ծիպիլ** գյուղը, որը
պետք է լինի մենաստանի մոտ, և նրա անունով էլ պետք է
կոչվի Իսդիսու գետակը, իսկ հյուսիսում, գետի ձախ կողմում՝
Գյունեյ-Բեյի արևմտյան կողմում, **Քեչդաքն** է: Նրա հյուսի-

¹⁸ Կիրակոս Գանձակեթի, էջ 321—328:

սային կողմում Քելվածիրն (°) է, որից հյուսիս՝ **Սերֆինաւը**, սրանից արևելք, գետի աջ կողմում՝ **Չիրքինը**, որոնց մասին ոչ մի տեղ չի ավանդված: Ինձ՝ թվում է՝ այդ տարածքում պետք է լինի հին **Հդերկա** գյուղը, ուր է դարի սկզբին Գեղամա երկրից եկավ ոմն ճգնավոր Հովսեփը, ծերունի եպիսկոպոս Միհրի օրհնությանը եկեղեցի շինեց և այնտեղ տեղավորեց սուրբ Ստեփաննոսի, Գևորգի, զորավար Անդրեի նշխարքները, որոնք Տաճնիքի ճգնավոր Մխիթարը բերեց Երուսաղեմից ու Տորոսից: Դրանց վրա Հովսեփը ավելացրեց մաս Հովհաննես Մկրտչի նշխարքները, որոնք բերել էր Գեղարքունիքի Պոմ վանքից: Եվ վկայարանը, ըստ Աղվանքի պատմիչի տեղեկությունների¹⁹, շինեցին ոմն Փոքրիկ անունով հյուսնը և մրա որդի Հովհաննեսը:

102. **Հանդաբերդում**, որն ընկած է՝ Տուդխո գետակի ընդարձակ հովտում, հարավարևմտյան կողմերում և աղբյուրների մոտ, նշվում են **Պաշդիպելի** և **Շեքերեմ** գյուղերը, իսկ հարավարևելյան կողմում, հարավից դեպի հյուսիս գնացող հոսանքների մոտ՝ **Գալապունը**, **Իրզան** կամ **Իրծան**, աջից՝ **Հիրխիջևանը**, ձախից, այսինքն՝ արևմուտքից՝ **Ասերիխը**, **Քյապեպաշին**, **Չալքենդը**, **Հաճիսումլուն**: Սրանց մոտ են գտնվում տաք ջրերի անվանի բաղանիքները, որոնք նշում է **Ապիքերեմ** (ջերմաջրեր) անունով պարսիկ ոմն աշխարհագիր. Դրանց տեղը նշում է Կիրակոսը Դավիթ խաբերայի պատմության մեջ, երբ Ծարի մասին ասում է, թե այն պետք է լինի «**Հանդաբերդի** մոտ, որտեղ Ջերմուկն է»²⁰: Թ դարի հնագույն պատմիչը ևս՝ նշում է նույնը և մրա մոտ էլ՝ **Հանդուն**, որը **Վայկունիքում** է, մեկ գյուղ էլ կա այս անվամբ, քանի որ Ատրներսեսի՝ Սահլ Սյունի Հայ-

¹⁹ Հմմտ., Կղնկտ., էջ 280—282:

²⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 322:

կազմի որդու՝ Աղվանից հարստության ժառանգ Ապրասանիկի հետ փեսայանալու մասին ասում է. «շինում է Հանդու բերդը և իր ապարանքը, Վայկունիք կոչված գյուղում, որտեղ գրանդվում են արքունական բաղանիքները»²¹: 900 տարի հետո Վայկունի ավազակի դաստակերտը կամ գահը փոխելով Սյունի-Աղվանքի իշխանության մոր աթոռով՝ նա երկար ժամանակ չկարողացավ վայելել խաղաղության մեջ, քանի որ Բուղան այլ իշխանագլուխների հետ միասին նրանք էլ գերի տարավ Սամառա, որտեղից շատ տարիներ անց նա վերադարձավ: Երկրամասի պայագատները մինչև ԺԵ դարի կեսը, ինչպես ցույց տրը վեց Սայտինի արձանագրության մեջ, կոչվում են նաև Հանդաբերդի տերեր: 1271 թ. Գանձասարի արձանագրության մեջ գրում է նաև Հանդաբերդցի ունև Սասնան՝ նվեր տալով վանքին իր կին Մահանի հիշատակին: Այժմ այդ բերդի տեղը չի մշվում, բայց ես՝ կարծում եմ, որ այն պետք է լինի Չայքենդի մոտ, այսինքն՝ Վայկունիք գյուղը:

ԲԵՐՁՈՐ, ԶԱՎԵ, ԶՈՒՍՏԻ-ՓԱՌԵՆՍ, ՓԱՌԻՍՈՍ ԳԱՎԱՌԵՐԸ, ԶԵՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ (ՎԻՃԱԿ)

103. Կուրանի ձորաճովտի արևմտյան կողմը՝ Կուրակի պատսպարանը, որը կազմում է Մոսկ լեռան արևելյան կողմը կամ Այրում և Չլաբերդ գավառների անջրպետը, իմ կարծիքով, հին Բերդաձոր գավառն է, թեև բազմիցս ասացինք, որ Այրումի՝ մեջ է մտնում, բայց չենք կարծում, թե նա ամբողջովին ամփոփվում է նրանում, քանի որ Արցախի հին ոչ մի այլ

²¹ Կղմկտ., էջ 340:

գավառի մեջ հնարավոր չէ այն տեղադրել, քան Բերդաձորի, որի անունն էլ պետք է բխեցնել տեղի բնությունից, բազմաթիվ ամրոցների ու խոր ձորերի քարափների առկայությունից, բայց աշխարհագրի²² շատ օրինակներում և պատմիչների մոտ **Բեր-ձոր** է անվանված, որն այլ իմաստ է տալիս՝ արգավանդություն: Սակայն կարծում եմ, որ այն հնչյունական կամ բարբառային աղավաղման արդյունք է:

Ըստ Խորենացու, այն պետք է լինի Վայկունիքի մոտ, նրան կից, որը Աղվանքի աշխարհագրության մեջ ներկայացվում է ալեկի երկար ձևով: Այդ նույն բանը հաստատում է նաև Աղվանքի Պատմիչը՝ այն դասելով բաղանիկեցիների կողմից նվաճված գավառների շարքը. «Վերին Վայկունիքը, Բերձորը, Սիսականը և այլն»²³: Սրանք գավառների նվաճումից առաջ, 830-ին ասպատակելով «սրերով ու նիզակներով կոտորեցին Բերդձոր գավառի ավանները՝ Ուռեցը, Կառնակաշը, Հակարին, Տափարը»: Այդ պատճառով Ստեփանոս Աբխասաթը բերեց Բաբան բռնակալին և կոտորեց նրանց, բայց՝ իրեն էլ դավեցին: Սակայն դրանց անունները կամ տեղը ինձ ծանոթ չեն:

104. Երկրամասի ելքի կողմում նշանակված է մի փոքր գավառ, որը հնում կրում էր **Զավե** անունը: Այն Խորենացին չի հիշատակում, այլ տեղադրում է Աղվանքում, միացնելով Հալառտանից, Ուտիքից, Արցախից գրաված քսան կամ քսանչորս գավառներին. «Ծիկաշեն Գարդման, Կողթ, **Զավե**, **Քուստի-Փառնես** և այլն»²⁴, որը պատմության մեջ ոչ մի անգամ չի հիշատակվում, այլ մինչև այժմ հայտնի է **Զելվա** անունով և պետք է լինի նույն կողմում, Ղարա-չայ կամ Կուրան գետի մոտ: Այն

²² Հմմտ., Մ. Խորենացի, Մատենագրութիւնք, Վեներիկ, 1843, էջ 608:

²³ Կղմկտ., էջ 327:

²⁴ Մ. Խորենացի, Աշխարհացոյց:

հանգամանքը, որ այժմ էլ այդ գավառը ընկած է մեղ շերտով, ինչպես հնում, վկայում է նրա՝ **Քուստի-Փառնես** մեծ գավառի մի մասը լինելու մասին: Այն պետք է գրավի հիշյալ գետերի հովիտը, որը և հաստատվում է պատմիչների կողմից. այն դըրվում է նույն գավառներին կից: Այսպես, օրինակ, այդ բանը հաստատվում է վերոհիշյալ աշխարհագրի և Աղվանքի պատմիչի կողմից²⁵: Նա Սահակ Անդայի մասին ասում է, որ Թ դարում նա տիրել է Գարդման և Քուստի-Փառնես՝ գավառներին, քանի որ այն ժամանակ Գանձակը ամուր և՛ անվանի պետությունն էր, և ընդարձակ Գարդման գավառը իր տիրապետության տակ էր առել նաև այժմյան Գանձակի գավառը, որին հարավից սահմանակից է Քուստի-Փառնեսը, արևմուտքից՝ Մեծ Կողմանքը: Եվ «Միսայել եպիսկոպոսը Մեծ Կողմանքի և Քուստի-Փառնես **նահանգի**», այսինքն՝ այդ երկու գավառների, որպես մեկ ամբողջության, եպիսկոպոսն է: Է դարում այդ տեղանունը նշված կա այդ տարածության և մեծ իշխանության մեջ:

105. Այս գավառը առավելապես ծաղկում ու հզորանում է Թ դարում, է՛լ ավելի հռչակվելով ԺԳ դարում, քայց տակավին ոչ թե Քուստի-Փառնես, այլ Փառխոս անունով: Անկախ անունների նմանությունից կամ տարբերությունից, պատմական նշաններից պետք է ենթադրել, որ այն միևնույն գավառն է: Քանի որ Վարդան Պատմիչն ասում է, թե Մամ տիկինը եկել է Փառխոսի իշխան Գրիգորի մոտ և նրանից խել Շամքորի գավառը²⁶, որն իր տեղում հիշեցինք: Դրանից էլ հայտնի է դառնում, որ այն Փառխոսի մի մասն էր կամ էլ նրան կից

²⁵ Կղևկո., էջ 341:

²⁶ Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վեներիկ. 1862 էջ 100:

էր: Մխիթար Գոշն ասում է, որ Գանձակի մեծ երկրաշարժի ժամանակ շարժվում են շատ տեղեր «Փառիսոսի և Խաչենի գավառներում»²⁷, որից պետք է ենթադրել, որ Փառիսոսը ընկած էր Գանձակի և Խաչենի միջև: Ասողիկը Գագիկ Ա-ի մասին ասում է, որ նա տիրել էր «Փառիսոսի, Խաչենի, Վայոց ձորի սահմաններից սկսած»²⁸, որն սկիզբ է առնում արևմուտքից՝ Վալկունիքից և, ձգվելով Խաչենին զուգահեռ, հասնում է երկրամասի սահմանին: Եվ նույն ինքը այլ տեղերում²⁹ ասում է՝ երկրամասի թագավորների վերացման մասին՝ Գագիկի (որը տիրել էր այդ վայրերի սահմանամերձ շրջաններին) և Գանձակի տիրակալ Փատլունի մասին, որոնք կոչվելով միմյանց դեմ, մեկը մյուսից խլում էր երկրամասը: Դա ևս ապացուցում է, որ այդ երկրամասն ընկած էր այդ երկուսի իշխանությունների միջև: Փառիսոսի այդ թագավորները նույն Աղվանքի թագավորներն են՝ Սյունյաց ազգականները, որոնք Ժ դարի կեսին կրկին փայլեցին արքայական փառքով: Իրենց անվանը նոր փառք ավելացրին Սենեքերիմ և Գրիգոր եղբայրները, որոնք մահացան 1008-ին «և նրանց երկրամասը կոչով իրար միջև բաժանեցին Հայոց Գագիկ արքան և Գանձակի ամիրա Փատլունը», որը, ըստ Վարդանի, բռնեց Փիլիպեն՝ իր քարերար Գրիգորի որդուն, հոր մահից՝ հետո սպանեց նրան և աշդպիտով տիրեց երկրին³⁰: Սակայն նույն ցեղից կրկին բողբոջեց իշխանների և թագավորների տոհմը Աղվանքում և Խաչենում, ինչպես ցույց կտրվի առաջիկայում: Եվ դրանով իսկ շատ պարզ կերպով

²⁷ Ալիշան Ղ. Հ., Հայաստանում, Վենետիկ, 1801, էջ 861:

²⁸ Ստեփանոս Տաթևեցի, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 256:

²⁹ Անդ, էջ 283:

³⁰ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 100:

ապացուցվում է, որ այլ էին Փառիսոսի հարստության թագավորները, և այլ՝ Սյունյաց Բաղա հարստությանը, թեև նրանք խնամիներ էին և սերում էին Առանյան մույն ցեղից: Եվ երբ նրանք նահանջեցին Խաչեն, Փառիսոսը Գանձակի տեղերի իշխանության տակ ընկավ և ԺԱ—ԺԲ դարերում այն հիշվում է որպես այդ նահանգի մի մեծ մասը: Այնտեղից դուրս եկան հոյակապ մարդիկ՝ Աղվանքի մի քանի կաթողիկոսներ և տաղանդավոր Հովհաննես Սարկավազ Վարդապետը:

Վրաց պատմիչը ավելի վաղ, այն է՝ մեր Արտաշես Արշակունի արքայի օրոք, հիշատակում է **Փառիսոսի դուռը**, որից դուրս ելան, ասում է, վրացիները և կովկասյան ասպատակները ու Վանանդը, Բասենը, Նախիջևանը ավերելուց հետո, անմիջապես անցնելով Կուր գետը, գնացին Կառքեջ³¹: Բայց ես չգիտեմ, թե ինչ տեղի է համապատասխանում այս դուռը: Այդ հին գավառները կամ Կուրանի հովտում գտնվող մի մասը այժմ գտնվում են Զրբեթո մեծ գավառի հյուսիսային կողմում և համարվում են առանձին բնակավայրեր (վիճակ), օտար լեզվով **Իկիրմիստեթ** (քանչորս)՝ «ներանում մույնքան գյուղ լինելու պատճառով», դրանց թվում են նաև **Ջելվան** կամ **Ջելվան** և մեզ ծանոթ հին ու նոր նշանավոր շատ տեղեր:

106. Աշխարհացուցում Մոսկի արևելյան ստորոտներում նշվում է նոր **Պուլանըզ** մենաստանը, որը, չգիտեմ, կոչում են նահատակված հավատացյալ Թաթարի անունով, թե՞ մի այլ կապակցությամբ, կամ էլ գուցե աղավաղված է այդ անունը: Նրա մոտ, լեռների ստորոտներում, Կուրակի վտակների մոտ են գտնվում **Պուզլուզը**, **Մոնաշիտը**, **Էրգեն** և այլն, որոնք, թվում է, քանչորսից են, որոնց մի մասը ավերակ է ու անմարդաբնակ: Դրանք գոյություն են ունեցել անցյալ դարի վերջին և դարիս

³¹ Զոռանշեր, Համառոտ պատմութիւն Վրաց, Վենետիկ, 1884, էջ 82:

սկզբին, որոնց տիրում էին հայկական առանձին իշխաններ (մելիքներ), և ցարդ հայտնի է Փրիդոնյանների անվանի տունը:

Սրանց մոտ, ավելի հեռու լեռներում, Կուրալի և Կուրանի անջրպետներում է գտնվում **Բերիս** գյուղը, որ, կարծես, Փառիսոսի բուն տեղում է, որի անունով էլ այդ կողմերում ասվում է այժմ ամայի քաղաքի տեղը: Հների մոտ այս անունով քաղաք կամ ավան չի հիշատակվում, նպատակահարմար է այն կարծել գաղաթի անունից և այդտեղից է՝ Սարկավազը: Բայց նրանք ժ դարից հիշում են Փառիսոսի վանքը, որի կործանման ժամանակ առաջնորդն էր Պետրոս Վարդապետը: Նա ընտրվեց Աղվանքի կաթողիկոս և տասներկու տարի անց «հրաժարվեց աթոռից, և նրան հաջորդեց Փառիսոսի վանական տեր Մովսեսը»³²: Եվ մինչև օրս այն ճգնափորների ամայի մեմաստանն է:

Բերիսից հյուսիս է գտնվում **Ռեյադը**, արևելքում, Կուրանի ձախ ափին՝ **Ղարաչինար** մեծ գյուղը (Սև Սոսի), աջից՝ **Ղարա-յաքան**, Բերիսի հարավ-արևմուտքում, նույն Կուրանի մոտ՝ **Ազնա-քենդ** երկու գյուղերը, որոնց մոտ է գտնվում **Մաճաքեկ** ավանը, հյուսիս-արևելքում, Չրքերդի ու Մեանշիրի սահմանամիջում՝ **Ջեյվան** կամ **Ջեյվալը**: Այն ընկած է Կուրանի աջակողմյան մի վտակի մոտ, մի արգավանդ վայրում, որը իր անունով էլ կոչվում է, և դրանից էլ ծագում է գաղաթի **Ջավե** հին անունը:

Աշխարհացույցում այսքան բան է նշված Փառիսոսի հռոջակավոր գաղաթի մասին, որի փառքն ու անունը ավելի հին են, քան նախորդ նշվածները:

107. Այս բնակավայրի հյուսիսային կողմում, Կուրակ գետի մոտ պետք է փնտրել **Ջարդունի** դաշտակի տեղը, որտեղ նախատակվեց Ս. Եղիշե առաքյալը Գիսից գալու ճանապար-

³² Կիրակոս Գանձակեցի, էջ 199:

հին. «դիցամոլ կոապաշտների զոհարանի տեղում նահատակ-
 վեց, և հայտնի էլ չէ, թե ում կողմից կատարվեց (նահատակու-
 թյան) գործը: Եվ այնտեղ, մահապարտների փոսի մեջ ընկավ
 նրա պատվական նշխարքը և ծածկվեց այն տեղում, որը երկար
 ժամանակ **Հոմենք** է կոչվում»³³: Հայտնավորք գիրքն ասում է,
 որ ոչ թե նշխարքները, այլ հենց ինքը՝ սուրբը իր մի աշակեր-
 տի հետ միասին «ընկավ մի շատ խոր և թունավորաբնակ փոսի
 մեջ՝ մարմնով շատ այլ չարագործների հետ»: Նշխարքների
 մասին ասում են, թե դրանք Թայտնի են եղել Վաչագանի Ժա-
 մանակներից, իսկ ըստ Պատմիչի «շատ ժամանակ անց աստ-
 վածալախ մարդկանց տեսիլք է երևում, և մի խումբ գալիս է
 փոսի մոտ ու այնտեղ տեսնում իրար՝ վրա կիտված շատ ու-
 կորներ: Նրանք առհասարակ տարակուսեցին, բայց դիզեցին և
 գիշերները աղոթքներով հսկեցին այն: Եվ առավոտյան մեծ
 երկրաշարժ եղավ, և այնտեղ եղողները ընկան գետնին: Անա-
 պատում բարձրացավ ուժեղ քամի և անսուրբ մարդկանց ու-
 կորները սփռեց ամբողջ դաշտով մեկ, իսկ տեղում մնացին
 միայն առաքյալի նշխարքները: Ունեկան գլուղի մեծահարուստ
 ումն Ստեփանոս՝ քահանա հափշտակեց նրա միայն գլուխը,
 անապարելով նստեց իր երիվարն ու հեռացավ: Երբ բազմու-
 թյունը ընկավ նրա ետևից, մթամած մառախուղը փայլատա-
 կումներով նրանց միջից անցնելով,՝ սարսափեցրեց նրանց, ո-
 րոնք վերադարձան հավաքատեղի: Տեսիլքով հայտնված սուրբ
 Եղիշայի նշխարքները տարան, տեղավորեցին Ունեկան ավա-
 նում, որտեղ դրվեց նրա գլուխը սուրբ քահանա Ստեփանոսի
 ձեռքով: Այնուհետև այնտեղից տեղափոխեցին Ներս-Միհրի
 սուրբ վանքը (Ուխտ), որն այժմ կոչվում է Զրվշտիկ, որը նույն
 ինքը Եղիշա առաքյալն է՝ ի փառս ամենակալ տեր Աստծու:

³³ Կղնկտ., էջ 10—11:

Երկար ժամանակ անցնելուց հետո բարեպաշտ Վաչագանը Եղիշայի մահատապալության փոսի վրա հուշապատն կանգնեցրեց: Եվ արքայի սենեկապանը, առանձնապես այնտեղ, իր կյանքին վերջ տվեց այդ հուշապան վրա»⁸⁴:

108. Այդ փոսի տեղը, այն է՝ **Հռենքը** կամ Աղվանքի խոր Վիրապը այժմ չի հիշվում, քայց **Ուռեկանն** ու **Ջրվշտիկը** հայտնի են: Առաջինը **Հոռիկ** է կոչվում, որը գտնվում է արևմուտքում, **Ջեյվայից** ոչ շատ հեռու: Այն **Ուռեկն** է, որը պահել է հին ամունը և ոչ թե այն ծագում է **հյուր** եկ ձևից, ինչպես կարծում են տեղացիները, որպես թե այնտեղ գիշերով հյուրընկալվել է Վաչագան արքան: Ինչպես որ անհայտ են սրբի մահատապալության հանգամանքները, նույնպես և անհայտ է նշխարքի առաջին գյուտի ժամանակը: Թվում է՝ Վաչագանի ժամանակ կամ նրանից հետո այնտեղ կառուցվում է **Գտավանքը**, այսինքն՝ **Գյուտի վանքը**: Գյուտը եղել է Վաչագանի օրոք, ինչ-որ մեկի կարծիքով՝ 489 թ. և սեպտեմբերի 29-ին՝ ըստ Հայսմապուրքի: Ասում են՝ **Գյուտ** է կոչվում այն գյուղը, որտեղ Վաչագանի ժամանակ հայտնվեցին նշխարքները. դա հիշում է մահ Գյուտ վանքի վանահայրը Եղիա կաթողիկոսի ժողովում, Աղվանքում. արդյոք սա վերոհիշյալ **Պուլանըզ վանքը** չէ:

Հոռիկում մինչև օրս կանգուն մնացել են 1279 թ. կառուցված մի եկեղեցի և 1284 թ. կառուցված ժամատունը, ինչպես որ ցույց են տալիս արձանագրողները. մեկը գրում է. «2ԻԸ (1279) թվին, տեր Ստեփանոսի քահանայության օրոք. այս եկեղեցին կառուցող տեր Հովհաննեսին, իր ծնողներին, եղբայրներից հիշեցե՛ք հանուն Քրիստոսի»: Մյուսը գրում է. «2ԼԳ (1284) թվին, աշխարհակալ Ապաղա խանի տերության, տեր Ստեփանոսի հայրապետության և Նորադեմի, Սրադեմի, Գարապիջիմի իշխանության ժամանակ, ես՝ տեր Հովհաննեսս,

⁸⁴ Անդ, էջ 11—12:

շինեցի գավիթը՝ ի ճիշատակ ինձ, իմ ծնողների և եղբայրների»։ Եկեղեցու շուրջը կան տոհմիկ մարդկանց գերեզմաններ, որոնց թվում նաև Բեկլար իշխանինը, նրա մոտ էլ՝ վերջին ժամանակներս նշանավոր մարդու՝ Մելիք Ադամի քարաշեն ապարանքը։ Եկեղեցու սահմանում կան նաև բազում այլ շենքեր։

109. Գտավանքից պակաս չէ նաև **Ներս Միհրի** վանքը, որը կոչվում է **Ներսմիհրական միաբանություն (ուխտ)**, ուր Վաչագանը տեղափոխեց սրբի նշխարքները, որի հետևանքով էլ նրա անունը ընդհանրապես **Ս. Եղիշե** է կոչվում։ Ինձ թվում է՝ Ներս Միհր իշխանը վանքը կառուցողն է, և թերևս երկար ժամանակ վերակացուներ նշանակվեցին նրա ցեղից այդ տեղի համար։ Այդ է պատճառը, որ նրանք կոչվում են վանքի վանահայրեր, ինչպես, օրինակ, սրբազան Քչիկը՝ Եղիա կաթողիկոսի օրոք, Ը դարի կեսին, Գտավանքի վանահայրը և ուրիշներ։ Այն մասին մեզ քաջ հայտնի են դարձնում Աղվանքի կաթողիկոս Սիմեոնի այն կանոնները, որոնք սահմանեց Եղիան, ըստ որի «շատերից տրտունջ եմ լսում, թե շատ տեղերում եկեղեցիներին վանակա՝ նությանք հանդերձ զինվոր՝ մարդիկ են տիրում, որոնք իրենց չար գործերի պատճառով արժանի չեն եկեղեցի մտնելու, ուր մնաց եկեղեցական հասությո՞ւն ու հացը ուտելու։ Այդ մասին էլ Ներս Միհրի վանահայր սրբազան Քչիկը գրել է, թե աղվանից իշխան Վարազ Տրդատը մի փոքրիկ գյուղակ է տվել սուրբ Խաչիս՝ սպասավորելու իր հոգու փրկության համար, իսկ այժմ Փուսան-Վեհ անունով հեծյալը, անառակ կյանք վարելով, գրածը մեջտեղ է բերում, թե Աղվանքի իշխանը իրեն է տվել այդ եկեղեցին վանականությանք, որպեսզի ինքը հոգ տանի...։ Եվ թող Փուսան-Վեհը չտիրի այդ եկեղեցուն՝ ըստ սուրբ հոգու հրամանի»³⁵։ Եղիա կաթողիկոսը ժողովի կանոնների այս պատ-

³⁵ Ամդ., էջ 309:

ճենը տվել էր Քշիկին՝ պահելու, ինչը և նա կատարեց:

Ծառ հին է վանքի Զրվշտիկ անունը, որով և մինչև օրս կոչվում է: Այն գտնվում է նույն Հոռիկի արևմտյան կողմում, դժվարանցանելի ձորամիջում, որի պատճառով էլ անապատ է կոչվում: Այդ վանքում, ապում է մի հիշատակարանում, գրանդվել է Տիրամոր վերափոխման պատմությունը, որը Քերթո-ղաճայրը և Մանդակունին հրատարակեցին: Պահպանվել են ԺԳ դարում կառուցված շենքերը: Եկեղեցին փոքր է և կառուցված է կանոնավոր ձևով, ամնշակ մեծ քարերով Վաչագանի դատակերտի հիմքի վրա հետևյալ արձանագրությամբ. «ՈՂԴ (1245) թվին ես՝ սուրբ միաբանության Սերոբ սարկավագս, նախկին հիմքի վրա շինեցի սուրբ Առաքյալ վանքը. ձեր ա՛ղոթքների մեջ հիշեցե՛ք»: Գավիթը ևս անշուք ձևով է շինված, 1264-ին, ինչպես վկայակոչում է արձանագրությունը. «ԶԺԴ (1264) թվին ես՝ Խաչատուրս, աստծու կամքով շինեցի այս ժամատունը, առաջնորդությամբ տեղ Սիմեոնի. աղաչում եմ՝ հիշեցե՛ք հանուն Քրիստոսի»: Սերոբին և Խաչատուրին օգնել են և ուրիշները, ինչպես որ գրում են. «Մենք՝ Առաքել վարդապետս և Զաֆան իշխանի որդի Թեոդորոսս, Աստծու օգնությամբ կառուցեցինք այս եկեղեցին և ժամատունը՝ ի հիշատակ մեզ և մեր ծնողների»:

Կան և ալ համառոտ արձանագրություններ, ինչպես՝

Ա. «Ես՝ Գրիգորս, Աստծու կամքով շինեցի Ուտապատ եկեղեցին, ավետարան գնեցի և Քերթ հողամասը նվիրեցի սուրբ միաբանությանը: Առաջնորդ տեղ Սիմեոնը և միաբանները Համբարձման տոնի ժամանակ երկու ժամ պատարագ արեցին»:

Բ. «Ես՝ Սերովբ քահանաս, Աստծու կամքով երեք գիրք տվեցի սուրբ ուխտին: Առաջնորդ տեղ Սիմոնը և միաբանները Բարսեղի տոնի առթիվ պատարագ կատարեցին»:

Գ. «Ես՝ Դավիթս և իմ ամուսինը միաբանեցինք սուրբ ուխտի հետ և խաչ նվիրեցինք: Առաքյալների տոնի ժամանակ մեզ համար երեք պատարագ կատարեցին»:

Դ. «Մենք՝ Առաքել Վարդապետս, Ծրվանի թոռ տեր Մատթեոս եպիսկոպոսս, Մհանշի որդի Տիրանս, Աստծու կամքով շինեցինք այս եկեղեցին, սալեցինք ժամատունը՝ ի հիշատակ մեզ և մեր ծնողների. ԶԾԸ (1509) թվին»:

Ե. «Ես՝ տեր Մատթեոսս, Աստծու կամքով սալեցի այս եկեղեցին 2ԿԶ (1317) թվին, իսկ զանգակատունը շինվեց 2ՀԲ (1323) թվին. հիշեցե՛ք աղոթքների մեջ»:

Զ. «Ես՝ Հովհաննեսս, Աստծու կամքով՝ միաբանեցի սուրբ Առաքյալին, այս սուրբ նշանը տվեցի ավագ եկեղեցուն, Սիմեոնի առաջնորդության ժամանակ, և միաբանները Ղազարոսի տոնին երկու ժամ պատարագ տվին: Կատարողները օրհնվեն Աստծու կողմից. 2ԽԱ (1292) թվին»:

Մի այլ արձանագրություն էլ գրված է մի փոքրիկ մատուռի մասին, որտեղ հանգչում է քարեպաշտ Վաչագան արքան, որի շնորհիվ Աղվանից հավատը դարձել է հաստատուն ու փառավորված: Մատուռի վրա գրված է. «Աս է Վաչագան թագավորի հանգիստը. թող աստված ողորմի հայրապետին, նրա ծնողներին և նրանց, ովքեր շինեցին աս եկեղեցին տեր Սիմեոնի առաջնորդությամբ. դա 2ԼԵ (1286) թվին էր»: Գավթում կան ուրիշ տապաններ էլ, դրանց թվում նաև 1656 թ. ժողովների կողմից սպանված Մելքիսեթ առաջնորդի տապանը: Մեմաստանը շրջապատված է քարուկիր պարսպով: Կանգուն են մնացել սենյակներն ու ընդարձակ սեղանատունը:

Զրվշտիկին մոտիկ, քարքարոտ տեղերում կան մեծ շենի ավերակներ: Այդ շենը մայրաքաղաք են կոչում: Նրա մոտ են գտնվում Մելիք Աղամի քարաշեն գեղեցիկ՝ ապարանքը և մի մատուռ՝ կառուցված Փախրադիանի իշխանության և Սուքիասի

առաջնորդության ժամանակ, 1260 (2Թ) թվին, որից էլ պարզ է դառնում, որ այդ տեղում եղել է մենաստան: Ինձ թվում է, որ Ներս Միհրին մոտիկ պետք է եղած լինի և **Հոսեփի վանքը**, որի վանահայրը Եղիա Կաթողիկոսի ժողովի ժամանակ հիշատակված Գրիգորն էր:

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ-ՌՈՍՍՍՏԱԿ

110. Կուրանի և Թարթառի միջով հոսում է ձկնաքեր (կարմրախայտ) **Ինճե** գետը, որը, ինչպես ինձ թվում է, բխելով Մոսկի արևելյան բլուրներից, անցնում է Ոստիքի Ճանճիթ գավառը: Բայց չի նշվում նրա գետաբերանը, այն է՝ Կո՛ւր գետն է թափվում, թե՞ մի այլ տեղ: Հարկ է մտածել, որ հնում այն պետք է եղած լիներ Քուստի-Փառնեսի կամ Մեծ Կողմանքի մի մասը, որոնք Աղվանքի գավառների մեջ են մտնում: Օրինակի համար, վերոգրյալ Զավեն կամ **Ռոսաստակը**, որը Աղվանքի պատմիչը համարում է Մեծ Կողմանքի մի մասը³⁶, աշխարհագրի մոտ նշված է **Ուտռուտակ** կամ **Ուտռոտակ** սխալագրությամբ: Անտարակույս այն պետք է ընկած լինի Թարթառի և Ինճեի միջև, բայց թե դրա ամբողջ հովիտը Արցախի որ մասն է գրավում, չգիտեմ:

Միջին դարերում, երբ այլազգիները իրենց ձեռքը գցեցին այս տարածքը, այն կոչվում էր Գյուլիստան,՝ որպես և մինչև օրս է կոչվում, գետի ձախ ափին գտնվող բերդավանի հետ միասին, որն ընկած էր **Ազնաքենդ** գյուղերից հարավ:

Խթրավանքի մի արձանագրությունում **Գոլաստյան** է կոչվում: Ասվում է նաև ԺԲ դարի սկզբի այդ կողմերի արքայազն-իշխան Վասակի մասին, որը, գնալով այնտեղ, ազատում է այն

³⁶ Կղևկո., էջ 200

օտարների՝ ձեռքից և այնտեղ բնակեցնում իր որդուն: Այնտեղ բերվում է մի մեծ խաչվեմ, որի վրա էլ արձանագրվում է այս բանը:

Արցախում, Ինճեի հովիտներում, ըստ Ջալալյանի, դեպի ձորամեջ ընկած գետափին, նշվում են ճգնավորների՝ **Ռադի-պեկի** անունով ամայի վանքը, իսկ գավառի սահմանում, Գյուլիստանից ավելի հյուսիս-արևելք՝ **Թալիշ** գյուղավանը: Գետի փոխան, մի բարձր վայրում գտնվող Գանձասարի արձանագրությունում հիշատակվում է Աբով հայրապետը՝ Թալիշի իշխան Հովսեփի որդին, որը 1657 թ. իր կին Հերիքնազի հետ միասին օգնում է նորոգելու սուրբ աթոռի երկու եկեղեցիները: Սրանց ցեղից են սերում ԺԸ դարի անվանի և քաջ մարդիկ՝ Մելիք Հովսեփը և Մելիք Բեկարը: Թալիշից հյուսիս նշվում է Թուրուս գյուղը:

ՉԱՐԱԲԵՐՂ (ՉԼԱԲԵՐՂ), ՄԵԾ ԿՈՂՄԱՆՔ ԳԱՎԱՌՆԵՐԸ

111. Ըստ այժմյան վարչատնտեսական բաժանման՝ գրեթե Արցախի կեսը գրավում է **Չլաբերդ** մեծ գավառը, որին սահմանակից են հյուսիսից Այրումը, սկզբից՝ Ծևանշիրը, հարավից՝ Վարանդիները, արևմուտքից՝ Ջանգեզուրը: Մինչ այժմ մեր նկարագրածները՝ Փառխոսը, Ջևան և Գյուլիստանը, ընկած են նրա հյուսիսային կողմում: Նրա միջին մասը՝ Տրոտու կամ Թարթառ գետի մեծ հովիտը, **Չարաբերդի** բուն տարածքն է, որը հնում ամուր բերդ էր՝ հիշատակված է դարի սկզբից: Ինչպես կարելի է գուշակել պատմությունից, ԺԱ և ԺԲ դարերում, Աղվանքի թագավորների թուլացման ժամանակ, Չլաբերդը հասնում է բարգավաճման, ընդարձակման և կոչվում **Ճառաբերդի աշխարհ**: Այն ժամանակ սա եղել է Փառխոսի և Խաչենի միջ-սահմանը, որոնք այժմ ամբողջովին մտնում են նրա մեջ:

Ըստ Արցախի վաղնջական տրոհման՝ բուն Չարաբերդը՝ Քուստի-Փառնեսի կամ մանավանդ **Մեծ Կողմանք** գավառի մի մասն է, որի սահմանը Տրտուի հյուսիսային կամ ձախակողմյան ափերն են, թերևս մի նեղ շերտով այն կողմն անցած, հարավայինը՝ Մեծիրանքը, որը հետագայի բով խաչենն է, այսինքն՝ Վալկունիքի արևելյան և Թարթառի հարավային կողմը, որի մասին կխոսենք ստորև:

Այս **Մեծկողմանք** գավառը, որը հայտնի է նաև **Մեծկունիք** կամ **Մեծունիք** անուններով, հնում արցախական շատ մարզերից ավելի նշանավոր էր և նույնպես պետք է բնակեցված եղած լինե՞ր քաջ և երևելի մարդկանցով, որից էլ պետք է ստացած լինի Մեծիրանք անունը: Այն աչքի է ընկել նաև ամրությամբ, պատմիչը⁸⁷ այն անվանում է ձորերով և անտառներով շատ հարուստ վայր, թեև նույն պատմիչը գրում է, որ հոգները Ե դարի կեսին ասպատակել ու ավերել են այն, որի մասին շուտով կպատմենք:

Եվ սա ըստ իր գրված դիրքի **Միջնարցախ** գավառ է կոչվում: Այն ուներ հին և առանձին եպիսկոպոսարան **Տաղձանք** կոչված տեղում: Հիշատակվում են հետևյալ եպիսկոպոսները՝ Զ դարի կեսին Ղևոնդը, Է դարի կեսին Դավիթը, նրա հաջորդ Իսրայելը, Միսայելը (*), Դավիթը, որը 768 թ. կաթողիկոս նշանակվեց, Հովսեփը, որը 848 թ. կաթողիկոս նշանակվեց, Սամվելը, որը 877 թ. կաթողիկոս նշանակվեց, Սահակը, որը կաթողիկոս էր Ժ դարի առաջին կեսին:

Քուստիփառնեսի եպիսկոպոս Միսայելի (եթե տարբեր լինի Իսրայելից) Ս. Խաչին ձոնած ներքողը հասել է մեզ:

Թ դարի կեսին Մեծ Կողմանքի կես մասին իշխում էր քաջ Ապունուսեն, որը հերոսացավ Քշիթ լեռան վրա: Դրանից հետո,

⁸⁷ Կղնկո., էջ 98:

Փառիսոսի և Մառաբերդի քարգավաճման ժամանակ, գրքերում այդ անունը այլևս չի երևում, բայց հետագա դարերում նորից լսվում է: Այն մինչև օրս առանձին իշխան է կառավարում: 1722 թ. Խաչենից այնտեղ եկան լեկերը և ասպատակեցին, իսկ երկրի տեր Թարկանդուլի սուլտանի թոռ Քալպ-Ալի-Բեկը փախավ Ծար երկիր և ապա, իր որդուն որպես պատանդ՝ նրանց տալով, վերջը տվեց ասպատակությանը և վերադարձավ իր տեղը:

112. Մոավի արևելյան կողմում ընկած են գավառի երկայնահատ լեռները, որոնք գրեթե ձգվում են Թաթթաոն գագաթնո, և դրանցից սկսվելով մի վտակ, նույն ընթացքով շարժվելով դեպի արևելք, միանում է գետին: Խառնարանի մոտ է գտնվում հին ու անվանի **Չարաբերդը**. այն մախ այդպես է կոչում Կաղանկատվացին, իսկ հետո Գոշը³⁸ կոչում է **Մառաբերդ**, նրանից հետո մինչև այժմ գավառը կոչվում էր **Չլաբերդ**, **Չլբերդ** կամ **Չրբերդ**: Իսկ բերդն այժմ կոչվում է **Ջրբերդ**, նաև **Ջերմուկ**, աշխարհացույցի քարտեզում՝ **Աճումբուզ գալե**՝ կառուցված քարե մի բլուրի վրա, որն անմատչելի է երեք կողմերից, իսկ չորրորդը ամրացված է գետով: Այս ամրոցն է հասնում է դարի սկզբի Աղվանից Վիրո կաթողիկոսը, որը ազատվել էր պարսից կապանքներից, Խոսրովի սպանությունից հետո և, հանդիպելով հոների կամ խազիրների արքայորդի Ծաթի ասպատակներին, կաթողիկոսն «իր մոտ է հավաքում բոլոր մեծամեծներին, այդ մեծ երկրի թագավորությունների որդիներին, գավառապետներին, գյուղապետներին, քահանաներին, դպիրներին, որոնք այն ժամանակ գտնվում էին այնտեղ՝

³⁸ Հմմտ. Հայաստանում, էջ 397:

Զարաբերդ ամրոցում»³⁹, և խորհրդակցեց ու գնաց Պարտալ, Ծաթի մոտ:

ԺԲ դարի կեսին ապրում էր Տողան անունով մեկը՝ Դարի որդին, Մառաբերդ երկրի և նույն դղյակի իշխանը: Որը գոռոզանալով կամեցավ տիրել Առանին և կովեց ում Թուրքմանի հետ Հերքան բերդում ու սպանվեց: Օտար բռնակալներից հետո այդ բերդին տիրեցին Խաչենի իշխանները, բայց նրանցից այն նորից խլում են թուրքերն ու վրացիները, մինչև որ թաթար Սարթախ խանը այն վերադարձրեց մեծ իշխան Հասան Ջալալին, որի հայրենիքն է համարում ժամանակակից Կիրակոս պատմիչը ԺԳ դարի կեսին⁴⁰: Դրանից հետո գրքերում այլևս չի հիշատակվում Զարաբերդը, որը հետագա դարերում մարտերի ժամանակ շատ անգամ ամուր ապավեն է եղել:

113. Զարաբերդից մի փոքր արևմուտք, լեռան ստորոտի մի ձորում է գտնվում **Երից-Մանկանց** կամ **Դանիելի վանքը**, որը աշխարհացույց քարտեզում գրված է **Քիբերդի Վելի վանք** անունով, որի մասին հիշատակություններ կան միայն արձանագրություններում: Այն կառուցել են Աղվանից Սիմեոն կաթողիկոսն ու նրա եղբայրը ԺԷ դարի երկրորդ կեսին: Այն կանգուն մենաստան է՝ քարով շարված սենյակներով, պարզունակ քառակուսի եկեղեցով... երկար և լայն չորս սյուների վրա: Եկեղեցու դռան պատերի վրա կան արձանագրություններ.

«ՌԺ թվին, Պարսից մեծ արքա Սուլեյման Եաֆի ժամանակ, ես՝ Սիմեոն, Աստծու շնորհիվ Աղվանից կաթողիկոսս, շինեցի այս եկեղեցին իմ հարազատ եղբայր Իգնատիոս Վարդապետի հետ՝ միասին. մենք մեծաշենցի Սարգիս քահանայի ոք-

³⁹ Կղզկա., էջ 157:

⁴⁰ Հմմտ. Կիր. Փանակեցի, էջ 358—359:

դիմերն ենք: Ձեր աղոթքների մեջ հիշեցե՛ք, նոր Սիոնի ոթդի-
մեր, տերունական դոմով մտնելիս և ելնելիս. առենք»:

Իսկ խորանի ճակատին չափածոյով գրված է.
«Կառուցվեց նոր ուխտի պատարագի
եվ փառքի տաճարն ու Աստծու տան
Նվիրական այս հարկը,
Որը Տեր Հիսուսը մեզ ավանդեց.
Այն կառուցվեց երկու հարազատի
Սիմեոն կաթողիկոսի և Իզնատիոս Վարդապետի
եվ շատ այլ աշխատողների կողմից:
Կյանքի դիվանի մեջ գրված է,
Որ սույն եկեղեցու կառուցումն
Ավարտվեց Հայոց ՌԺԺԳ թվին՝
Ի փառս անճառ Տեր Հիսուսի:
Ովքեր աղոթում են և երկրպագում,
Ողղամտորեն թող այս նկատեն:
Եվ մեր անձանց, է՛լ առավել մեր մարմնավոր
Ծնողների՝ Սարգիս քահանայի, մեր մոր
Եվ այլ աշխատողների համար
Թողություն խնդրենք»:

Ըստ Զալալյան օրինակի՝ այս ՌԺԺԳ (1664) թվականը
բացահայտ սխալ է և վերևում ասվածին ճակատակ ու անհնար,
որովհետև այն ժամանակ կաթողիկոս չի եղել, իսկ եթե ՌԺԾԳ
(1704) թվական կարդանք, այն ևս անհնար է, որովհետև այն
ժամանակ վախճանված էր Սիմեոնը:

Պատի աշ կողմում գրված է. «Այս եկեղեցին կառուցող վար-
պետ Ուստա՛ Սարգսին հիշեցե՛ք հանուն Քրիստոսի»: Իսկ նրա
կողքի արձանագրությունում վանքի վերաբերյալ հիշատակ-
վում է. «Մեր աշխատանքը ավարտի հասցրինք՝ աստվածաւեր-

ների ու ողորմածների միջոցով ու օգնությամբ. սուրբ Դանիել մարգարեի և երեք սուրբ Մանուկների պատվական նըշխարքները, որոնք դրված են այստեղ, մեծամեծ հրաշագործություններ են կատարում: Այստեղ այն կառուցվեց մեր փրկության,՝ մեր քազում մեղքերի թողության, մեր հոգևոր ու մարմնավոր ծնողների, ինչպես նաև բոլոր աշխատողների համար. մեզ և վանքի միաբաններին հիշեցն՝ք ձեր սուրբ աղոթքների մեջ»:

Կասկածելի է նշխարքների մասին՝ եղած այս տեղերի ավանդությունը, քանի որ, մեր կարծիքով, սրբերի մարմինները երկար ժամանակ մնացել են Բաբելոնում, հետո տարվել Կոստանդնուպոլիս, այնտեղից փոխադրվել Վենետիկ և ապա բաշխվել Եվրոպայի տարբեր կողմերում:

114. Այդ Մեծաշեն գյուղը, եթե նույնը չէ, ապա ինձ թվում է, որ այն Խոտորաշեն գյուղի մոտ պետք է լինի, որը մոտ է վանքին և այժմ ամայի է. քանի որ եկեղեցին կառուցող Սիմեոն կաթողիկոսը կոչվում է Խոտորաշենցի և Չարաբերդցի: Այս գյուղից էր նաև մյուս Սիմեոն կաթողիկոսը՝ առաջինի ազգակիցը, որը մեռավ 1810 թ.:

Այս երկրամասում ուրիշ գյուղեր չեն նշվում, բացի Չարաբերդի արևմտյան կողմում, Թարթառի ափին նշվածներից, որոնք են՝ Ղարապուլազը, Թանկուր-յուլուպեյը, նրանցից ավելի վերև գտնվող Հասանրիսը կամ Հասանարիսը, որը թերևս ծագում է Զալալյանց Հասան իշխանների անուններից: Ե՛լ ավելի վերև, հյուսիսարևմտյան կողմում Թարթառի մի վտակին է միանում Ռզաճըզը: Բայց մեր նախնիները այս Մեծ Կողմանք գավառում նշում են նաև այլ նշանավոր վայրեր ու դեպքեր Ե և է քարերում: Այդ ավելի հոչակավոր վայրերից է Աստղաբլուք լեռը, որը մինչև այժմ ճանաչվում է աթ աճունով. դա գեղեցիկ անուն ու բնություն ունեցող մի՛ առանձին, ծաղկազարդ բլուր է:

115. Ս. Մեսրոպի Գիսից մեկնելուց և նրա մահվանից հետո, որի մասին իր տեղում խոսեցինք, նրա մնացած աշակերտները գնալով Երուսաղեմ, այնտեղից վերցնելով սրբերի ճշխարքները և բազում սուրբ սպասքները, նաև իրենց առաջնորդ Աթանաս անունով վարդապետին ու երկու այլ քահանաների, վերադառնում են և, հասնելով Մեծկունիքի ձորերը «նաճապարհի կիրճում երկու խմբի են բաժանվում», ինչպես ասում է պատմիչը⁴¹։ Դա ևս ցույց է տալիս, որ այնտեղ, Մուավ և Չարաբերդ լեռների միջև, թերևս նույն Փառիսոսի դարպասի մոտ լեռնանցք է եղել։ Մի գունդը գտնում է «այն տեղում, որիմ Աստղաբլուր են կոչում, որը գտնվում է հյուսիսային կողմում, իսկ երկրորդ գունդը բանակ է դնում Տրտու գետի այն կողմում, Չղախ կոչված անտառապատ պուրակի հովտում, որովհետև ուխտով միմյանց խստացել էին այդ տեղում կատարել ամենասուրբ Զատկի տոնը»։

Եվ եղավ, որ այն ժամանակ հոգևոր մեծ հրոսակախմբերով շարժվեցին դեպի արևմուտք, որոնցից մի հզոր գունդ, Կուր գետից անցնելով Ուտիքը, «ասպատակեց Մեծկունիքը։ Ավազակների համբավի ձայնը լսելով՝ երուսաղեմյան չղախաբանակ գունդը, բոլոր ճշխարքների մասունքները ամփոփելով արծաթյա երկու կողովների մեջ, թաքցնում է հողի մեջ։ Եվ իսկույն հասնելով օրհասական այն գուժարկու աղմուկը, անխուսափելի տարակուսանքը, տարածվելով հողմացալտ անձրևի նման և անցնելով ծովի ալիքի նման, հասնում է Աստղաբլուր։ Նրանք, չըկասկածելով այդ երևույթների վրա, հանկարծակի հանդիպում են անխնա սրի խոցոտման։ Եվ գրավելով ոսկու և արծաթի սպասքները՝ սուրբ ճշխարքները խառնիխառն կերպով ցրում էին բլրի վրա և այնտեղ նահատակում քահանաների ավա-

⁴¹ Կղնկտ., էջ 98—99։

գին՝ երանելի Աթանասին, իսկ մնացածներին գերում և այդ նույն տեղում էլ փակում են», որոնց հետ էլ «Ոստիքի գալա-
ռից Թագուհի անունով մի կնոջ, որը այդ երկրի բնիկ ազատ-
ներից էր, Բագին գյուղից», որին հյուսիսի զորավարը կամենում
էր առնել կնության: Գավառը գերելուց հետո, [իշխանը] վերց-
նում է նրան, նահատակվածների ընկերներին և բերում է նույն
Աստղաբլուր վայրը ու իր սպասավորների հետ միասին աղա-
չանքով, սպառնալիքներով հորդորում կնոջը՝ հնազանդվել:
Երբ չեն կարողանում համոզել համառ Թագուհուն, նրա ձեռ-
քերը կապում են ետևը ու նրան մագերից քարշ տալիս անա-
պատում անտառի սուր փշերի վրայով: Խփում էին նրա դեմքին
և մարմինը ամբողջովին պատառոտում, դրանից հետո սուե-
րով կտրում են երանելու գլուխը: Այսպիսի կովի է հանդիպում
սուրբ տիկինը և Քրիստոսի աստվածային պսակով պսակվում
մեծն այն Թագուհին: Դրանից հետո նույն գիշերը, քանի դեռ
ուրախանալով դեգերում էին այլազան իշխանն ու նրա զորա-
կանները, կատարելով ուրախ խրախճանք, հանկարծակի Տիրոջ
կողմից նրանց երեսց մի զարմանալի նշան: Բոլորը իրենց աչ-
քերով բացահայտ տեսնում էին մի լույս, որը ծագել էր այն տե-
ղում, որտեղ նահատակվեց սուրբ Թագուհին, իսկ՝ անտառում
ցրված նրա հագուստի ծվենները աստղերի նման փայլվում
էին և երկար ժամանակ աստղանման լույս սփռում սուրբ նա-
հատակների վրա, որը, տեսնելով մարդկանց բազմությունը,
այդ նույն տեղն անվանեց Աստղաբլուր, որպես և կոչվում է
մինչև օրս: Դրանից խիստ զարմանում ու մեծ ահի տակ է ընկ-
նում իշխանը: Նա հրամայում է իր մոտ կանչել քահանաճե-
րին: Նրանցից սովորելով փրկության ճանապարհը՝ նա հավա-
տում է կենդանի Աստծուն և հրամայում է հավաքել սրբերի ցըր-
ված նշխարքները, փաթաթել սուրբ կտավով ու թաղել բլրակում:

Տերունական տոնի ժամանակ կրկին հավաքվում էին մեծ խումբերով՝ նույն նահատակների հիշատակի համար»:

Հավատացյալ զորավարը կոչվեց Թեովփիլոս և, արձակելով գերիներին, վերադարձրեց «Կրիական գետի ափը, կամըրջանման նավահանգստի մոտ», որը, կարծեմ, Թարթառի գետաբերանի մոտ է,¹ և մինչև օրս այնտեղից ձորեր են անցնում դեպի Կուր գետը, որից այն կողմ բնակվել էր հոների թագավորը: Լսելով զորավարի մասին՝ նա կանչեց և նահատակեց նրան 30 մարտիկների և երկու քահանաների հետ միասին, իսկ նրա որդիներին ուրիշ շատ մարդկանց հետ ուղարկեց տարբեր կողմեր:

Դար ու կես անց, քաջ Զվանշերի իշխանության օրոք, Իսրայել անունով մի հոգեկիր մարդ ճգնում էր Աստղաբլուրի մոտ «Մեծկունիք գավառի վերին կողմում, մի բարձրավանդակ լեռան վրա իր Գլխի վանք մեմաստանում», որը Չարաբերդի լեռներից մեկն է, բայց չգիտեմ, թե Գլխի վանքի որն է և ինչ պատճառով է այդպես կոչվում: Ինձ թվում է՝ լեռան պատճառով է ասվել Գլուխ, ինչպես որ Կատարի վանքը Դիզափայտում: Այնտեղ նա հայտնաբերում է նշխարքները² և «շտապ հասնում է եպիսկոպոսանոցի եկեղեցական ավանդ», Դավիթ եպիսկոպոսի մոտ ու պատմում եղելությունը: Կաթողիկոսի հրամանով նա ուրիշների հետ միասին գնում և գտնում է թաքցրած նշխարքները, որոնց մասին մենք կխոսենք ստորև, Մեծարանի աշխարհագրության մեջ: Այնտեղ մենք կպատմենք Իսրայելի ձեռքով կողովը այս Գլխի վանք բերելու մասին, ուր և հետագայում փոխադրվեց մեսրոպյան խաչը, որը գտավ Գիսում: Տարիներ անց (677—682) Հայաստանից բերում է մեր Ս. Լուսավորչի ծննդի մի մասը Հեղինե տիկնոջ միջնորդությամբ, որը Աղվանից տանից էր, Գրիգոր Մամիկոնյանի՝ այն ժամանակվա հայոց իշխա-

նապետի և նշխարքները Թորոանից Վաղարշապատ փոխադրողի հարսը:

ՄԻՍԱԿԱՆ ԳԱՎԱՌ-ՂԱՅՆԱՂ

116. Այն երկիրը, որ տեղադրված է արևմուտքից Մեծ-կողմանքի, իսկ արևելքից Վայկունիքի միջև, և որի միջով երեք վտակների միավորումից հետո սահմանով իջնում է Թարթառ գետը դեպի հարավ մոտ 12 մղոն, հետո թեքվում դեպի արևելք, պետք է Արցախի Սիսական գավառը լինի, նույն ինքը Սիսական ուտանը և Սիսական գավառը, որը այդպես է կոչվում Սյունիքին մոտ լինելու պատճառով: Նրան հարավից սահմանակից է Խաչեն գետի սկիզբը՝ որի հարավում էլ գտնվում է Հաբանդ գավառը:

Այսպիսով, թեև պատմիչի տեղեկությունները սակավ են, բայց դրանք ցույց են տալիս, որ Սիսականը պետք է ընկած լինի Վայկունիքից հարավ-արևելք, քանի որ, ինչպես վերևում նշեցինք, քաղանիկեցիների մասին ասվում է, որ նրանք նվաճել են Բերձորը, Վայկունիքը, Սիսականը, Հաբանդը, Ամարասը և այլն, իսկ երկրորդ անգամ (841 թ.) վնաս են պատճառել Սիսանձորին և Ամարասին. այս գավառը Սիսանձոր է կոչել Աղվանից պատմիչը, իմ կարծիքով՝ Թարթառի այդտեղով հոսելու պատճառով: Միջին դարերում այն համարվեց Խաչենի վերին մասը, որը Հանդաբերդի տերերի՝ ժառանգությունն էր: Մեր նախնիները Սիսական գավառում այդ անունով շեն բուրրովին չեն հիշատակում, բայց այդ նույն Ուտան անունը հուշում է, որ այդտեղ վաղնջական ժամանակներից սիսական իշխանների կողմից պետք է հիմնադրված՝ լինի մի հզոր քաղաք կամ դքսակ: Ոչ մի տեղ չի հիշատակվում երկրամասի գավառական նոր անունը: Ինձ թվում է, որ «ա Ղայնաղ երկիրն է, որի

հետ միասին կաթողիկոս Եսայի Զալալյանը հիշում է Չարաբերդի վրա իշխող մի Բեկի, որը լեկերի պատճառով փախչում է նրա թիկունքում գտնվող Ծար երկիրը: Բայց և՛ սա, և՛ ամբողջ գավառը՝ (վիճակը) հետագոտման կարիք ունեն: Գավառում նշվում են Մուսլի հարավից և Յանջախի սկզբից **Քեշիքենդը**, սրանից հարավ **Աղտավանը**, սրանից էլ հարավ, Թարթառի՝ մոտ՝ **Շապոն**, սրա էլքի հյուսիսային կողմում՝ **Ռոնաթաղը**, արևմուտքից, վերջինի աջ կողմում, գետի հարավում՝ **Քոզտուն** կամ **Քոստին**: Ըստ իս, Հարու բերդի տեղն է, որը հիշում է Մխիթար Գոշը⁴²: Այն գրավել և ավերել է Ելտկուզը, քանի որ այլ քարտեզում (տախտակ) նրա տեղում նշված է **Ղարի-քյոփ-րիվ** անունով կամուրջը, որի վրայով լեկերը 1722 թ. անցկացրին Վարանդիանից և Խաչենից վերցրած գերիներին:

117. Վերին Խաչենի իշխանների օրոք, ԺԲ—ԺԴ դարերում, նրանց գահն ու ամրոցը **Հաթերքն** էր, որը գրվում է նաև **Հայթերք** և **Խաթերք** անուններով: Այն ցարդ կոչվում է նույն անունով և գտնվում է Թարթառի ափին, բայց թե որ կողմում՝ ճշգրտությամբ չի նշվում: Այդտեղ ավելի պատվավոր էր իշխանը, քան սահմանամերձ շրջանից շատերը, ինչպես որ մեզ հնարավորություն է տալիս գուշակելու Մխիթար Գոշը իր Դատաստանագրքի հիշատակարանում, 1184 թ. «Խաչենի կողմերում քիչ թվով իշխաններ մնալու ժամանակ, կրոնավոր Վախտանգի Հասան անունով որդու և նրա որդի Վախտանգի ժամանակներում Հաթերք անունով դղյակին տիրում էին այլ իշխաններ⁴³, որոնց և ինքն ապավինել էր, նեղվելով Գանձակի տաճիկներից, Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի սադրանք-

⁴² Հայապատում, էջ 339:

⁴³ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975/ էջ 26:

ներից, ինչպես որ ցույց է տալիս Կիրակոսը⁴⁴: Իսկ ինքը քողարկելով ասում է «այն հալածանքների մասին, որոնք հասան մեզ ոչ թե օտարներից, այլ հարազատներից»: Եվ այն գրքերը, որոնք սկզբում նվիրել էր Ստեփանոսը, ընծայում է Հասանի որդի Վախտանգին, որովհետև նրա հայր Հասանը, ըստ աղբեղինակի վկայության և Դադիվանքի արձանագրության, 40 տարի իշխելուց հետո ճգնում էր այն մեծաստանում: Նույնպես և նրա կինը Մամախաթունը՝ Կյուրիկե երկրորդ արքայի դուստրը, որի համար էլ նրանց որդի Վախտանգը կոչվում է թագավորազն և Հաթերքի ու ամբողջ վերին Խաչենի տեր: Սրա որդիները՝ Հասանն ու Գրիգորը, ծնված Քուրդ մեծ իշխանի դուստր Արզու խաթունից, երբ՝ անժամանակ սպանվեցին նրա ազգակիցների կողմից ԺԳ դարի առաջին քառորդին, Հաթերքը տվեց իր ժառանգներին՝ մեծ խնամակալ (աթաբեկ) Իվանեին, 1226 կամ 1227 թ., որը նույն տարին էլ մեռավ, իսկ նրա մահից հետո իշխանությունն անցավ նրա տոհմի մերձավորներին՝ Համդաբերդի և Ծարի իշխաններին:

Հետագայում այդ տեղի մասին հիշատակում է Առաքել պատմիչը,¹ որն ասում է, որ 1576 թ. այլ գաղթականների հետ Հաթերք գյուղից Պարսկաստան են չվում եղբայրներ Օղլան քեշիշը և Ղարաբեկը: Այժմ մի գեղեցիկ եկեղեցի կա Հաթերքում, որտեղ պահվում է մի անվանի խաչ տեղի անունով:

118. Հաթերքի մոտ պետք է փնտրել **Խաթրավանքը** կամ **Խթրավանքը**, թերևս հենց ավանի անունով, որը, ինչպես ասացինք, սկսվում է 10 տառով և վերջանում հոգնակիի մասնիկով: Թերևս այն պետք է լինի Թարթառի հարավում Վալկունիքի վերջում, որտեղ Քիբեդդի աշխարհագրությունը նշում է **Չիրիքդար վանքը**: Պատմիչները այս մեծաստանը չեն հիշա-

⁴⁴ Նիր. Գաճակեցի, էջ 200:

տակում, որով և շինարարության պատմությունն ու ժամանակը անհայտ են մնում, միայն արձանագրությունների միջոցով պարզվում է, որ նա՝ բարգավաճման է հասնում ԺԲ—ԺԴ դարերում, որովհետև նրա կողքին, **Ջումի** կամ **Խումի** կոչված խաչվեմի վրա կա Վասակի եղբոր՝ վերոհիշյալ Վախտանգ կրտսերի մասին հետևյալ հիշատակությունը. «Երբ ՈԾ (1201) թվականն էր, Վասակ բարեպաշտ իշխանիկը՝ կյուրեկ թագավորի թոռը, Հաթերքի, Հանդարերդի, Հավքախաղացի տեր Սակոի (Վախտանգի) թոռ Հասանի որդին, նույն աթոռակալ Վախտանգի եղբայրը, խաչեր է բերում, բայց ժամանակ չունենալու պատճառով չի կարողանում կանգնեցնել, որովհետև գնում է Գուլաստան և Աստծու օգնությամբ այն գրավում անօրեններից և այնտեղ բնակեցնում իր որդուն, իսկ ինքը մահատակվում է քրիստոնյաների համար: Նրա վրա շատերի աչքի առաջ լույս իջավ, իսկ հետո ՈԾ թվին, նրա որդիներ Խոյդան ու Խոչախը նրա հոգու հիշատակի և իրենց կյանքի երկարատևության համար հուշարձան կանգնեցրին: Ովքեր երկրպագում են, թող հիշեն իրենց աղոթքների մեջ»:

Պահպանվել են նաև **Ջաքարեի** և **Իվանեի** քրոջ՝ **Խաչենի** Գրիգոր իշխանի կնոջ՝ **Դուխի** արձանագրությունները, որոնցում ապվում է, որ նա ՈՀԴ (1225) թ. կառուցում է գավիթն ու մատուռը. «ՈՀԴ թվին ես՝ Սարգսի դուստրս, **Ջաքարեի** և **Իվանեի** քույր **Դուխս**, կառուցեցի այս գավիթն ու մատուռը, ավետարան տվեցի և իմ հոգու համար ընծայեցի Հանկաբակն ու Հակոտիկը: Աստվածածնի երեք օրերը պատարագ արե՛ք. ով որ խափանի, Աստծուց թողություն չունի»:

Եկեղեցում կան նաև այլ ազնվազարմ տիկնոջ հիշատակություններ, այն է՝ **Տաբալիճ** Օրբելյանցի դստեր **Ասփեի**նը, ԺԳ դարի վերջին, ինչպես որ նա արձանագրում է. «Քրիստոսի շնորհիվ ես՝ արքայաշուք իշխան **Տաբալիճի** և իմ մոր **Մինա**

խաթունի դուստր Ասփես և այս լուսանկեր եկեղեցու շինարարության ժամանակ ինձ՝ քրիստոսապաակ կնոջս, օգնություն ցուցաբերած մեծափառ իշխան Գրիգորը, որ կամեցավ (‘) մեծ քահանայապետ Տեր Հովհաննեսի միջոցով, իմ արդար ունեցվածքի հաշվին կառուցեցին բեմք սեղան՝ Քրիստոսին զոհեր փառուցելու համար, որպեսզի Ծննդյան, Տյառնընդառաջի, Զատիկի, Վարդավառի, Աստվածածնի, Սուրբ Խաչի տոների թողոր շաբաթ և կիրակի օրերին բոլոր եկեղեցիները կատարեն այդ տոնը ինձ համար: Ես տվեցի նաև մեր վերին ընտիր հողն ու ջուրը: Մերոնցից կամ օտարներից որևէ մեկը էթե խափանի պատարագը, թող հեռացվի (Աստծու) Որդու փառքից»:

Զախակողմյան խորանը կոչվում է Ս. Պրոկոպիոս, որի մոտ պետք է լինի Տեր Հովհաննեսի գերեզմանը և արձանագրություն. «Սուրբ Պրոկոպիոս. այս եկեղեցին կառուցող մեծ տեր Հովհաննեսին՝ Դուրի որդուն, մեծ իշխան Հասանի եղբորը, հիշեցն՝ք ձեր աղոթքների մեջ»: Աջակողմյանը Ս. Մինասն է, որտեղ կա Մինա տիկնոջ հիշատակը, գուցե և տապանը. «Հանուն Քրիստոսի ձեր աղոթքների մեջ հիշեցն՝ք Մինախաթունին՝ Զալալ մեծ իշխանի դստերը և Տարսայիճի կնոջը»:

119. Վանքի ներքևում Ասփեի կարևոր շինության հիշատակի համար կանգնեցված է անթվակիր խաչարձան. «Աստծու կամքով ես՝ մեծ իշխան Տարսայիճի և Մինախաթունի դուստրըս, աղվանից տեր մեծ իշխան քաջ Հասանի որդու՝ հսկայազոր Գրիգոր իշխանի կինս, կանգնեցրի այս խաչը, շինեցի կամուրջը, որպես հիշատակ մեր, անցյալի, ներկայի և ապագայի մարդկանց հոգիների համար»: Բայց այս նոր կամուրջի մասին մեզ ոչ մեկը տեղեկություններ չի տալիս, միայն Հարի կամուրջը նշում են Հյուրաբաղ գյուղի մոտ, մի այլ կամուրջ էլ՝ Յանջախի մոտ: Ժ. դարի Խոթախանքի՝ արձանագրություններում ապփում է այն մասին, որ Խաչենի Սարգիս իշխանը զան-

գակ է դրել այս և այլ վանքերում: Արձանագրությունների տեղերը անծանոթ են. **Հանկարակի երկիրը** թերևս կարելի է ուղղել **Ցանկարակ** ձևով, իսկ **Հակուսին** կամ **Հակուռին**, ըստ մի այլ օրինակի, թերևս Բերձորի Հակարի գյուղն է: Իսկ **Ջումի** կամ **Խումի** խաչը, որը այսպես տարբեր ձևով են գրում Ծախաթունն ու Ջալալյանը, թվում է, որ տարբեր է **Պում** գյուղից, որտեղից էր Աղվանից կաթողիկոս Փիլիպպոսը ԺՋ դարի կեսին:

120. Մյուսը էլ ավելի հռչակված և հին մենաստանն է, Թարթառի ձախ կողմում, **Լաչին գայա** լեռան դիմաց: **Խուրավանքը** Խուր գյուղի անունով է, որը հիշվում է արձանագրություններում. այն հաճախ կոչվում է **Դադի** կամ **Դադոյի վանք** և ոչ թե **Թադեի**՝ մեր մեծ Առաքյալի անունով, այլ նրա աշակերտի անունով, որի մասին ասում է այդ վայրերին ծանոթ Վանական Վարդապետը. «Դադին, որը յոթանասունից մեկն էր, Թադեոսի հրամանով գնաց մեծ Հայք ու հյուսիսի կողմերը և, լսելով Աբգարի մահվան մասին, վերադարձավ, մտավ Փոքր Մյունիք, որտեղ էլ թաքուն ճգնելով վախճանվեց: Այդ տեղում վանք կառուցվեց և կոչվեց նրա անունով»: Այս բանը հիշում է և Միխայել Ասորի՝ ու նրա մահվան տեղը **Դադիա** կոչում⁴⁵: Այլ արձանագրություններում գրված է և **Տաթեի վանք** ձևով:

Վանքի շինարարության ժամանակը հարկ է դնել առաջին դարում, ինչպես որ Գոշը **Առաքեղադիր**⁴⁶ է կոչում այդ ուխտը: Գրքերում առաջին անգամ հիշվում է Աղվանքի պատմության մեջ, Թ դարի սկզբին, երբ Ներսես Փիլիպպյանը Աղվանքի գահի պալազատներին «սպանեց մի ժամում, **Խորաձորում**, որը կոչվում է Դադոյի վանք»⁴⁷: Տեղի հիման վրա նկարագրվում է

⁴⁵ Միխայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, էջ 33:

⁴⁶ Հայապատում, իջ 386:

⁴⁷ Կղնկա., էջ 340:

վանքի դիրքը, որը շրջապատված է եղել գեղեցիկ և պտղատու ծառերով: ԺԲ դարի կեսին Գանձակի Չափի իշխանը, հարձակվելով Խաչենի կողմերի վրա, «այրեց նաև սուրբ առաքելադիր վանքը, որը կոչվում է Դադուի վանք»⁴⁸: Կիրակոս պատմիչը հիշում է «Դադույի վանքի եպիսկոպոս Տեր Գրիգորիսին»⁴⁹, որը կաթողիկոսի հետ գնաց Ծար՝ ի հերքումն Դավիթ մոլորեցուցչի: Բնակարանների հետ միասին թեպետ կանգուն է այս մենաստանը, բայց ամայի է: Կանգուն է մնացել նաև սրածայր կաթողիկեով եկեղեցին՝ կառուցված Վախտանգ Բ-ի տիկնոջ Արզու խաթունի կողմից 1214 թ., իսկ նրա շուրջը կան մեծապատիվ մարդկանց գերեզմաններ: Նրա խորաններից մեկում գտնվեցին ձեռագիր մատյաններ: Անխաթար է մնացել բարեպաշտ տիկնոջ գեղեցիկ արձանագրությունը. «Ամենակալ Աստծու և նրա միածին որդի Հիսուս Քրիստոսի շնորհիվ ու ամենասուրբ Հոգու պարգևներով ես՝ Քրիստոսի աղախին Արզու խաթունս, մեծ իշխանաց իշխանի դուստրս, Հաթերքի և ամբողջ վերին Խաչենի տիրոջ թագավորագն Վախտանգի տիկնս, մեծ հույսով կառուցեցի այս սուրբ եկեղեցին իմ ամուսնու, զավակներ Հասանի ու Գրիգորի գերեզմանոցի տեղում, որոնք անժամանակ վախճանվեցին, որովհետև իմ մեղքերի համար Աստված ինձ խրատեց և իմ գլխից վերացրեց երկուսի վայելուչ պսակը, քանի որ իմ անդրանիկ որդին՝ Հասանը ապանվեց պատերազմում թուրքերի ձեռքով քրիստոնեական հավատի համար, և երեք տարի անց իմ կրտսեր որդի Գրիգորը, բնության պարտքը հատուցելով, գնաց տիրոջ մոտ՝ անմխիթար սգի մեջ ! թողնելով թշվառ մորը: Բայց որովհետև իրենց կենդանության ժամանակ նրանք մտադրվել էին այդ տեղում կառուցել եկեղեցի, բայց

⁴⁸ Աճ., էջ 353:

⁴⁹ Երբ. Գանձակեցի, էջ 327:

չհասցրին անժամանակ մահվան պատճառով և ինձ ավանդեցին՝ անպայման կատարել իրենց սրտի փափագը: Եվ հաճեց ստնելով ես մեծ հույսով ու աշխատանքով կառուցեցի այս քավարանը՝ նրանց, իմ դուստրերի և իմ ամբողջ ցեղի հոգու փրկության համար: Այժմ աղերսալի աչքերով խնդրում եմ բոլոր նրանց, ովքեր երկրպագում են այս խորանին, թող հիշեն իրենց աղոթքների մեջ վերևում գրվածը: Ավարտվեց ՈԿԳ թվին ի փառս Աստծու՝ և սուրբ ուխտի նորոգության համար: Եվ եղբայրներիս կամակցությամբ հաստատեցինք սուրբ եկեղեցու ժառանգության սահմանները՝ Ապահեն, Եզնարածանց, Բչան, Վայոց ձորի Կանաչավոր գյուղերն իրենց ազարակներով ու սահմաններով,՝ ինչպես և Արփա երկու տունը: Ավագ խորանի պատարագը վերը գրվածի համար ամխափան պետք է կատարվի: Եթե որևէ մեկը՝ լինի իշխաններից, առաջնորդներից կամ որևէ այլ անձանցից, փորձի խափանել այս հաստատված կարգը, թող խափանվի նրա հույսը Քրիստոսի նկատմամբ, և նա դատապարտվի Աստծու կողմից»:

121. Կան և Վախտանգի ծնողների՝ Հասանի և Մամայի հնագույն արձանագրությունները. «Աստծու կամքով ՈԼԱ (1182) թ. ես՝ Վախտանգի որդի Հասան, Հաթերքի, Հանդաբերդի, Խաչենաբերդի, Հավթախաղացի տերս, որպես իշխանապետ մնացի Խ տարի, շատ պատերազմներ մղեցի և Աստծու օգնությամբ հաղթեցի իմ թշնամիներին: Ես ունեցա վեց որդի. բերդերն ու գավառները տվեցի նրանց ու ես եկա վանք, իմ եղբայր իշխան Գրիգորեսի մոտ և կրոնավոր դարձա, մեծ չարչարանքով ու բազում հնարքներով Հագուից (կամ Ագուից) բերեցի այս խաչքարը ու կանգնեցրի այս սուրբ նշանը, որպես հիշատակ իմ հոգու համար: Ովքեր երկրպագում են, թող աղոթքների մեջ հիշեն»:

«Ես՝ Հասանի կին Մամա թագուհիս, Կյուրիկ թագավորի

դատրու, որպէս տեր մնացի և տարի: Հայրենիքը թողնելով մեր որդիներին՝ ես ու իմ ամուսինը եկանք այս վանքը, Տեր Գրիգորիսի և նրան անվանակից մեր որդու մոտ: Հագնվեցինք ճգնափորի միան, և ես կանգնեցրի այս խաչը, որպէս հիշատակ իմ հոգու համար: Ովքեր երկրպագում են, թող հիշեն իրենց աղթքների մեջ»:

Թվում է, որ հետևյալ արձանագրությունը նվիրված է սրանց մերձավոր Վախտանգին. «Աստծու կամքով ես՝ Սմբատի որդի Վախտանգս, Հիսուս Քրիստոսի ծառաս և իմ ամուսինը՝ Քրիստոսի աղախին Հանան, միաբանեցինք Դադի վանքի հետ, մեր ժառանգությունից՝ սկսած Չիչխա ձորի բերդից մինչև Խոզենակի այգին, տվեցինք վանքին, արեցինք նվերներ. մեծ ծախսով ու մեծ հույսով կանգնեցրինք մի մեծ խաչ: Մենք՝ բնակիչներս, Տեր Գրիգորիսը և միաբաններս, սահմանեցինք բոլոր եկեղեցիներում Հովհաննես Նանայի, Վարդանանց և Վախտանգի տոներին երկու օր ժամասացություն կատարել: Արդ, ով ընծաները և ունեցվածքը խլի սուրբ վանքից կամ խափանի ժամասացությունը, ՅԺԸ (318) հայրապետների՝ կողմից նզովվի և մեր մեղքերի տերը դառնա»:

Թվում է, որ Վախտանգը Լիպարտյան Սմբատի որդին է, որի մասին արձանագրվել է 1265 թ. «Աստծու կամքով ես՝ Սմբատ իշխանս՝ մեծ Լիպարտի որդիս, միաբանեցի Դադի վանքի սուրբ ուխտի հետ Տեր Հովհաննեսի առաջնորդությամբ և գնեցի Խրնտաշանց այգին, Եղեգիսում իմ գնած ձիթհանքը, ստացված արդյունքները, կանաչապատ գյուղը և այլն, որոնք հաստատեցի բարի ծախսով, տվեցի սուրբ կաթողիկեին: Տեր Անաստասը և մյուս միաբաններս սահմանեցինք մեկ ժամերգություն բոլոր եկեղեցիներում Զատիկի կիրակիի հարության օրը: Ով որ խլի մեր տվածը կամ ժամերգությունը խափանի, ՅԺԸ հայրապետների կողմից նզովված լինի»:

Այդ ևույն ժամանակ և Մամքանը՝ երկրի մեծ իշխան Հասանի կինը, շնորհում է բազում կալվածքներ, 1267 թ. «ՉԺՁ թվին Աստծու օգնությամբ ես՝ արի Հասանի կին Մամքան և մեր որդի Գրիգորը, լինելով այս տեղերի տերերը, որոնք հաստատել էին մեր իշխանները, մեր սուրբ միաբանությանը՝ տվեցինք Չուրեկանց, Ծաճուռանց Զվատեղը: Ես՝ Գրիգորս, մեր բաժին Ծագունանց հողերը տվեցի իմ որդի Տեր Սարգսին: Ով որ խլի սուրբ միաբանությունից, կդատապարտվի Աստծու կողմից: Մեր միաբանները սահմանեցին սուրբ Ստեփաննոսի տունի ժամերգությունը, որը նվիրված է իմ մորը և իմ կնոջը՝ Ասփեին: Ով որ ժամերգությունը խափանի կամ ընծաները խլի, կդատապարտվի Աստծու կողմից: Բացի դրանից, մեր բաժին Մոխրաբակը ևս տվեցինք սուրբ միաբանությանը»:

Սրանց սերունդները ԺԴ և ԺԵ դարերում ամրացրել ու ավերացրել են նվերները, ինչպես որ արձանագրվում է ընդարձակ կերպով. դրանց մեջ մեզ համար կարևոր են վանքի և Վախտանգացի ու Հասանյանց տոհմի մասին տեղեկությունները, որի համար դրանց կանդրադառնանք ստորև:

122. Դուսի որդիներն ու թոռները և նրանց կալվածքը.

«Իշխանաց իշխան Սարգսի դուստր, բարեպաշտուհի Դուփը, որի ամուսինն էր բարեպաշտ Խաթրա Գրիգորը, իսկ նրանց որդին՝ քաջ ու հաղթող զորավար, Ականի, Հանդաբերդի, Սոթքի, Ծաղղաքի և բազում այլ գավառների մեծ իշխան Հասանը, ամենից շատ սիրում էր իր հայրենի Ծար գյուղը և քաջության պարգևները, որոնք տրված էին հայոց աշխարհակալների կողմից՝ որպես արքան գին: Նա ուներ Քրդի դուստրը Մամքանին, իրենց որդի բարի Գրիգորին. նրա ամուսինն էր Ասփը՝ Սյունյաց կողմերի իշխան, Տարսայիճ կոմսի դուստրը: Նա շատ ունեցվածքով ու ծախսերով փարթամացրեց Սոտաթ վանքի սուրբ միաբանությունը, որովհետև կառուցեց տնճարը,

դարպասը և այլ ուրիշ արդյունավետ գործեր արեց: Իսկ մյուս որդին՝ Տեր Հովհաննեսը,¹ կառուցեց Գետամեջ սուրբ վանքը: Գրիգորի որդի Վահրամը և սրա որդի Սարգիսը ևս բազում օգտակար գործեր կատարեցին: Դրանցից մեկը Տաթև, Խթրի, Գետամեջի,² Ծար գյուղաքաղաքի վանքերի գեղեցիկ զանգակներն են, որ կան մինչև օրս: Սրա որդին էր Հասանը, որից էլ սկսվում է Դուփի ցեղը, որոնք են՝ Ծահնշահը՝ Ուլուքեկանց Պապը, Ալբուղիներ՝ Հայտնեցուց Պապը, Ջահանշենը՝ Ծահանդեցուց Պապը: Հասանի որդին էր Ապուղենը, նրա՝ որդին՝ Դուրսուն, իսկ նրա որդին՝ Այսիներ: Եվ սրա ժամանակ, իսմայելացիների հզորացման, հայոց թագավորության թուլացման ու հայոց իշխանների ցիրուցան լինելու ժամանակ, այլազգիները հարձակվեցին և Մուլք մեծ իշխանին՝ Բեթալ Հասանին, ամորձատեցին «մալ արարին»: Պարոն Այսիներ գնաց դիվան, երեք տարի աշխատեց և, շատ բան տալով, այլազգիների ձեռքից ազատեց վանքերը, որոնք Տերը կտա իրեն որպես վարձ իր ծառայության համար»:

«Ամենակալ Աստծու և մեր Տեր Հիսուս Քրիստոսի կամքով գրվեց մեր այս իշխանական հրամանը. մենք՝ Տուրսունա, Սետեն, Պոռշը, Գրիգորը, Հասանը, մեր եղբայրներն ու որդիները, այս հաստատ հրամանը տվեցինք Տեր Ավագ Եպիսկոպոսին ու նրա եղբայր Մանվել արեղային՝ նրանց լավ հավատարմության համար, որպեսզի մեր հայրենի աթոռ Դադիվանքը, Խաթրավանքը, Գետամեջը, որ մեր գերեզմանատունն է՝ մեր պապերից մեզ մնացած, նրանցը լինի, քանի որ այդ վանքերում մարդ չկար, որոնք սկզբում շեն էին պահում ու լուսավորում եկեղեցիները. այդ պատճառով ուղևորվեցինք և դրանք նվիրեցինք սուրբ աթոռին, նրանց հանձնեցինք նաև երկու իշխանությունը՝ եպիսկոպոսությունը և պարոնությունը: Ինչպես որ մեծ կաթողիկոս՝ Տեր Վարդանը Դադիվանքը, Խաթրավանքը

քը, Հաղպատը իր վիճակով տվել էր Տեր Աթանասին ու Տեր Սարգսին, նույնպես և այս հոգևոր Տեր Գրիգոր կաթողիկոսը այս աթոռը հաստատեց վիճակով ու շրջաբերականով»:

«Ամենակալ Աստծու կամքով ես՝ Սեյտիս՝ պարոն Հասանի թոռս, պարոն Ծանշիի որդիս, մենք՝ Գրիգոր Հասանս, Պեկին, Ալթունքը՝ պարոն Վահրամի՝ որդիները, պարոն Հասանի թոռները, ես՝ Այտինս՝ պարոն Տուրսունի որդիս, պարոն Ադբուղի թոռս, ես՝ Ծանշեա՝ պարոն Հասանի որդիս, պարոն Զահանշի թոռս. մենք՝ չորս եղբայրներս, մեր վանքերից տվեցինք Ապահենը, Խույթը, Խոզենակը՝ իր չորս սահմաններով, սկսած Զափարի հանդից՝ Զագունաց ագարակ գյուղի, Բոնշի աղբյուրի, Թողանանց գետի, Պետրոսապահի հետ միասին, իսկ մեր պապերը տվել են Սոխանանցը, Ծովատեղը, Զաջորանցը, Զալբեկանցը, Ցրդնոտնը, Ծիոմանանցը, Գրիգորաթաղերը, Դադիվանքը՝ իր քաղատակերով, Հերանանց Հակառակաբերդով, Նավի աղբյուրով, Բերդաքարով, Կռապաշտի ձորով, Ողնով, ինչպես նաև Ծաղկանցը, Եզնարածանցը, Խոզենակուց մեծ այգին Մանանաձորի հետ միասին: Տվեցինք Ավագ Եպիսկոպոսին, որը մեր մեծն է, քանի որ նրա պարտականությունն է դեկավարելը: Նա Աստծով ազատ է, իսկ եթե ուրիշ մարդ է դեկավարում, տասանորդը անպայման առնում և տալիս է վանքին: Սա եղավ մեր առաջին ուխտը Աստծո և սուրբ Թադեոսի առաջ: Ով մեզանից հետո այս կարգը խաթարի կամ կալվածքները խլի՝ լինի՝ մեր որդիներից, թոռներից, թե ազգականներից, Աստծո առաջ մեղապարտ է, աներես, ՅԺԸ հայրապետների կողմից նզովված, Կայենին և Հոդային դասակից: Իսկ եթե այլազգի և թուրք լինի, իր հալաղը թող հարամ լինի, և իր մարգարեի (փեղաճափար) կողմից նզովված լինի. ամեն»:

Այս ամենից հետո նոր նորոգվող տեղում ԺԶ դարի կեսին

արձանագրված է մի խաչվեմի վրա, երեք վանքերի **Երկու-
երիս** կոչված տեղում:

«Համուն Աստծու ես՝ Տեր Գրիգորս, երեխա ժամանակվա-
նից եկա եկեղեցու դուռը, շատ աշխատանք կատարեցի՝ Ծան-
թամաղի իշխանությանը վանքն ավերեցին, ես չհամաձայնեցի,
նրա շենը գնեցի և շինեցի. կառուցեցի երեք ջրաղաց, հիմնեցի
երեք այգի և եկա սուրբ Առաքյալի դուռը, շինեցի Խութքը, որ
այս եկեղեցու ունեցվածքն է հավաքում. այգիները, բանջարա-
նոցները, ջրաղացները և այլ բաներ եկեղեցուն նվեր տվեցի:
Արդ, ով որ այս գյուղերը կամ կալվածքները ջանա՝ խել սուրբ
Առաքյալից, ՅԺԸ հայրապետների կողմից կնգովվի, Հուդայի,
Կայեմի և Քրիստոսին խաչողների բաժինը կստանա, մեր մեղ-
քերի տերը կդառնա: Իսկ ով որ շեն պահի և մեզ հիշի, Քրիս-
տոսից հատուցում կստանա. ամեն: ՌԷ թվին»:

123. Այս Գրիգորը վանքերի առաջնորդների մեջ արձա-
նագրվածներից վերջինն է, իսկ մյուսներն են՝

Տեր Գրիգորիս՝ Վախտանգ Ա-ի որդին, 1181.

Տեր Հովհաննես, 1265.

Տեր Անաստաս, 1265.

Տեր Սարգիս՝ Հասան Գ-ի որդին, 1267.

Տեր Վարդան, ԺԵ դարում.

Տեր Ավագ, ԺԵ դարի կեսին.

Տեր Գրիգոր, 1558:

Իսկ երեսունից ավելի հիշատակված վայրերի արձանա-
գրություններում, թեև շատ փոքր ագարակներ կան, բայց մեզ
հայտնի չեն նաև շատ գյուղեր, ձորեր, բերդեր, ինչպես, օրի-
նակ՝ **Չիզխաձորի բերդը, Մանանայի ձորը, Սուխանանց ծովա-
տեղը, Ցրդնոտնը** և այլն, ինչպես նաև **Հագուն կամ Ագուն**, որը
հեռավոր վայրերից է թվում, որտեղից էլ քաջ Հասանը մեծ
չարչարանքով ու բազում հնարքներով բերել է մեծ խաչքարը,

որի վրա մի այլ ընդօրինակող այդ տեղի անունը գրում է Աղուկամ Հաղու ձևով:

124. Հգիտեմ այդ նույն Դադոյի, Խթրավանքի, թե մանավանդ ուրիշ վանքերի հետ է Խաղայի տունը, որը հիշում է Կիրակոսը՝ վարդապետներից ոմանց մասին ասելով. «Խաչենի սուրբ վարդապետներ, միմյանց հարազատ Գրիգորիսը և Տեր Եղիան, որը (վանքը) Աստված զարդարել էր երկու մարդով, այս աշխարհից տեղափոխվեցին Քրիստոսի մոտ և գտնվում են աստվածափառ Խաղայի տան պահեստում. առաջինը վախճանվել է ՈԶԷ (1238) թ., իսկ Եղիան՝ ՈՂԸ (1249) թ.»⁵⁰: Սրանց տապանագիրը ընդօրինակում են Զալալյանները, բայց չեն նշում որոշակի տեղը, այլ Խթրավանքի արձանագրությունների թվում նշում են առանց վերնագրի. «Այս է գերեզմանն ու շիրիմը վեհիմաստ ու արդյունավոր վարդապետներ, սուրբ միաբանության առաջնորդներ Գրիգորի և Տեր Եղիայի. ովքեր կմտնեն խորանը, թող հիշեն հանուն Քրիստոսի, աղաչում եմ ձեզ՝ նաև Գրիգոր եպիսկոպոսին հիշեցե՛ք հանուն Տիրոջ: Երկուսն էլ գտնվեցին Գանձասարի եկեղեցու օծման նավակատիքի ժամանակ, և ինչպես խոսքերից երևում է՝ Եղիան վախճանվել է 1249 թ., որը այն վանքի առաջնորդն էր, որի տեղը մեզ՝ անծանոթ է, բայց ստույգ երևում է, որ անունը Թադեոսի աշակերտի անունով է, որի մասին ասում է նույն Վանական Վարդապետը. «Եղիշեն և Խաղան յոթանասունից երկուսն են, որոնք Թադեոսի հրամանով գնացին Աղվանքի կողմերը և այնտեղ վախճանվեցին»⁵¹: Այսպես վկայում է Քրիստոսի երեք

⁵⁰ Կիր. Գանձակեցի, էջ 270:

⁵¹ Տե՛ս Միխայել Աստի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ

աշակերտների մասին, որոնք հյուրընկալվել են Արցախի անձուկ մարզում:

ԽԱՁԵՆ

125. Անվանի գավառը, ինչպես նաև **Խաչենի աշխարհը**, հիշվում է Դ դարից **Խաչյանք** տոհմի անունով, Ներսես Մեծի և Արշակունյաց արքաների զահմամակում, որը հետագայում երկար ժամանակ անծանոթ է մնացել պատմություններում: Այն միջին դարերում իր իշխանությունը տարածեց նաև վերը նկարագրված Թարթառի հյուսիսային կողմերի գավառների վրա, հասնելով մինչև Գեղամա ծովի ափերը և Չրբերդի ամբողջ գավառը, մինչև որ այդ երկրամասը կոչվեց **Փոքր Սյունիք**, որը հայոց նահանգներից (աշխարհ) մեկն էր: Առավելապես նրա միջին և հարավային կողմերը կոչվում էին **Խաչենք** կամ **Խաչենի երկիր**՝ սրանում գտնվող գլխավոր բնակավայրի անունով. սա **Ներքին Խաչենն** է:

Աշխարհագրի բառացանկում ասվում է. «Խաչենը սուրբ Խարապետի գլուխն է, Գանձասարն է»⁵², որը վկայում է այն մասին, որ այնտեղ է եղել երկրամասի կենտրոնը, այսինքն՝ Խաչենի բերդը, թեև այժմ անհիշատակ է: Գանձասարի Չի (1271) թ. մի արձանագրությունում այն կոչվում է Սուրբ Խաչեն, որը ապացուցում է, որ այն իր անունն ստացել է սուրբ Փայտից (խաչից) քրիստոնեության առաջին դարերում, սուրբ Մեսրոպից ավելի առաջ: Իսկ երկրի տեղությունն ու պայազատները բարգավաճման են հասել Թ դարում, երբ հիշվում է նախ

⁵² Վարդան Վարդապետ, Աշխարհացոյց, Փարիզ, 1960, էջ 11:

Խաչենի բերդը. Աղվանքի իշխան Վարազ Տրդատի՝ կինը, դավադրությունից խուսափելով, «առնում է իր մնացած դստերը՝ Սպրամին (կամ Ապրսամիկին) և գիշերով մեծ՝ դավադրությամբ մտնում է Խաչենի բերդը... Սպրամին ամուսնացնում է Սահի որդի Ատրնեբսեհի հետ, որը Հայկազյանց՝ տոհմից էր և Սյունիքի տերը», որի սերունդները հասան արքունական աստիճանի Սյունիքում և Արցախում, որտեղ կոչվեցին Փառխոսի թագավորներ։ Եվ այդ ցեղից ուրիշները Խաչենի իշխաններ ու պայազատներ դարձան, որոնցից հիշվում է ոմն Գրիգորը ժդարի կեսին, որը հյուրընկալվել էր Անանիա կաթողիկոսի կողմից։ Եվ դրանից առաջ Պերփեռուծեն Կոստանդին կայսրը հիշում է Խաչենի իշխանին, նրան դասելով մեծաշուք իշխանների շարքը, որոնց մասին՝ պատշաճ է համարում գրել նամակի վերնագրում։

128. ԺԲ դարի սկզբին Խաչենի պայազատները բաժանվում են երկու գլխավոր տոհմի, որոնցից մեկը տիրում է վերին Խաչենին, այսինքն՝ Վայկունիքին և Սիսականին, գահը պահելով Հաթերքում, մյուսը՝ Ներքին Խաչենին՝ ունենալով Խաչենաբերդ գահանիստը։ Արձանագրություններում և պատմիչների երկերում առաջինները կոչվում են **Պերսումյանք**, իսկ երկրորդը՝ **Սակոյանք**։ Առաջիններին ազգակիցներ ենք գտնում մինչև ԺԶ դարի կեսը, իսկ երկրորդին՝ ԺԳ և ԺԴ դարերում։ Դրանցից հետո երկուսը կոչվում են մի՝ Հասան-Ջալալյան տոհմ անունով, որոնցից հետագայում նշանակվեցին Աղվանքի կաթողիկոսներ, և ցարդ գոյություն ունեն տոհմի ճյուղերը։ Օգտվելով դյուրմբռնելի արձանագրություններից ու պատմություններից՝ նշանակեցինք նրանց հաջորդական կարգը, որքան որ կարողացանք. թվերից մեկը ցույց է տալիս նրանց ապրած տարիները, իսկ մյուսը՝ մահվան, որտեղ դրվում է խաչանշան (+)։

Գանձասարի արձանագրություններում կարդացվում են

սրանց ամվանակից այլ պայազատներ ժԵ—ԺԶ դարերում, որոնց՝ հաջորդականությունը չկարողացանք նշանակել, ինչպես նաև հենցից շատերին, որոնք հիշատակված են Կիրակոսի կողմից որպես հնագույն խաչենցիներ. այսպես՝ Հաղբակյանները ԺԳ դարի սկզբում, որոնք այլուր կոչվում են Վարդանանց ազգ, և Ծահապունյաց բնիկները, որոնց նյութագրությունը տրված է Կեչառուքի արձանագրության մեջ:

127. Փառիսոսի թագավորների վերացումից հետո Գամձակի ամիրաները սկսեցին նեղել Խաչենի իշխաններին. նախ Փառլունը ձեռք գցեց գավառին, որին հակառակվեց Գագիկ Ա Բագրատունին: Բայց երկրի իշխանները, պատասպարվելով իրենց ամրոցներում, բռնակալներին պակաս նեղություն չստանալեցին: ԺԲ դարի կեսին, 1146 թ., Գամձակի Չավլի իշխանը Վրկին գնաց Խաչենի, Տանձիքի և Ադախի կողմը, քանի որ նրա ձեռքի տակ չմնացին այն դղյակները, որոնք նա առաջին անգամ առել էր. այնտեղի ազատվածներից մնացածները, որոնք թաքնվել էին անտառներում, նորից են գրավում իրենց բերդամրոցները և ապստամբություն մղում տաճիկների (թաթարների) դեմ: Այդ պատճառով նեղվելով՝ Չավլին դիմում է նրանց վրա՝ վրեժխնդրության համար. նա չնայած ամրոցները չկարողացավ առնել, բայց՝ ամբողջ գավառը իսպառ ավերեց: Այրեց և սուրբ առաքելադիր ուխտը, որ կոչվում է Դադուի վանք, և ինքը չվեց—գնաց Մարաց աշխարհը»⁵³:

Սակավ ժամանակ անց և բռնակալ Ելտկուզը «պատերազմը չէր դադարեցնում Խաչենի իշխանների դեմ, որովհետև երբեմն գաղտագողի գնում էր, գրավում Հարու ամրոցը և բռնիքին առհասարակ սրի քաշում»:

Դրանից հետո իշխանները հզորացան, գերազանցեցին թա-

⁵³ Հայապատում, էջ 836:

թարմերին և իրենց ցեղը խառնեցին ժամանակի ազնվագույն տոհմերի՝ Կորիկյանների, Բաղացիների, Զաքարյանների և Քուրդյանների հետ: Եվ այդ ժամանակամիջոցում կառուցվեցին երկրի սուրբ վանքերը, որոնց գլուխը կանգնեցին անվանի և իմաստուն մարդիկ, որոնցից ոմանք գնացին Գուգարքի կողմերը և դարձան մեծահամբավ՝ Հաղպատի աթոռի առաջնորդներ, ինչպես, օրինակ, Բարսեղը ԺԲ դարում և Հովհաննիսյանները ԺԳ դարում, ուր գնաց և Տեսումեն Խաթունը և կառուցեց Տիրամոր եկեղեցին: Նրա հետ այնտեղ գնացին և նրա եղբայրները, որոնք այնտեղ ապրեցին և մեռան:

Սրանց եղբորորդի Հասանը՝ փաղաքշաբար Զալալ-Դեյ Կոչվածը, Խաչենի իշխանների մեջ անվանի եղավ, փառքով և շինարարությամբ աչքի ընկավ Գանձասարում, որի արձանագրության մեջ նրան և նրա հորը թագավոր են անվանում:

Ա

ՎԱՍԱԿ

ՍՄԲԱՏ,

ԳՐԻԳՈՐ (1148—50)

ՎԱՆՏԱՆԳ Ա

ՀԱՍԱՆ Ա (1141—1184), ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՍ (1182)


ՍՄԲԱՏ, ԽՈՅԱԴԻՆ, ԳՐԻԳՈՐ, ՎԱՆՏԱՆԳ Բ (1182), ԳՐԻԳՈՐԻՍ,

ՎԱՍԱԿ (+1201)

ԽՈՅԱԴԻՆ, ԽՈՉԱՆ ԴԱՎԻԹ


ՎԱՍԱԿ (1237)

ՍՄԲԱՏ, ՀԱՍԱՆ Բ. (+ 1244), ԳՐԻԳՈՐ (1212)



Բ

ՆԵՐՔԻՆ ԽԱՅԵՆՑԻՔ




ՄԱՐԻՆԵ, ՆԱՍՐԱ ԴՈԼ, ՀԱՄԱՆ ԶԱԼԱ ԴՈԼ, ԶԱՔԱՐԵ, ԻՎԱՆԵ
(1214—1281)

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1271)
ՄԱՄԱ ԽԱԹՈՒՆ, ԱԹԱԲԵԿ (1281—82), ՌՈՒԶՈՒՔԱՆ ԿՈՆ,
ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆ

ՊԱՐՈՆ ԶԱԼԱ

(Երկու Զալալների միջև պահպանում են 2 կամ 3 ցեղեր):



Նրա կինն էր Մամբանը՝ Բաղաց թագավորի թոռը։ Նրա խընդրով և մեծն Վանականի հրամանով ուն Տեր Իսրայելը՝ Գրիգորի եղբայրը (ըստ իս՝ Եղիան է հիշատակել), վկայաբանությամբ սահմանեց՝ ըստ հայկական և հռոմեական ամիսների, և առաջինը սա է հիշվում ստույգ ժամանակով տոնավեպ՝ մատնանում։ Այս Ջալալը, առաջինը նեղվելով թաթարներից, աստվածային ողորմություն գտավ, և Մարդախ խանը նրան վերադարձրեց Չարաբերդը, Ականան, Կարկառը, որոնք գրավել էին իրենից։ Բայց բանասարկու մարդկանց միջոցով նա հանձնվում է Արղուն խանի ձեռքը։ Մինչ նրա դուստր Ռուզուքանը՝ ուն Բոր թաթար իշխանի կինը, աշխատում էր փրկել նրան, անօրենները շտապեցին չարաչար մահվամբ սպանել բարյացապարտ մարդուն, 1261 թ.։ Եվ նրա որդի Աթաբեկը բերել տվեց նրա նշխարված մարմինը և թաղեց Գանձասարում։

Սրանից սկիզբ է առնում Հասան-Ջալալյանների ցեղը, որոնցից է Ջալալբեկ իշխանը իր երկու ևեթորոտքիների հետ։ Նա 1586 թ. հայոց այլ մելիքների հետ միասին գաղթեց Պարսկաստան, զգվելով՝ օսմանյաններից, որոնք 1579 կամ 1580 թ. թալանեցին ու ավերեցին Խաչենն ու Չարաբերդը։

128. Բայց հզոր և իշխանավոր մարդիկ չպակասեցին Խաչենի տնից և հետագա դարերում. Մյունյաց մելիքների հետ միասին մինչև մեր դարը նրանք գրավեցին վիճակների ու գյուղերի վերականգնությունը։ Լեկերը 1722 թ.՝ արշավեցին Ուտիք և հատան մինչև Խաչենաձոր, ավարի ենթարկելով երկիրը, մեծ վնաս պատճառեցին։ Մեկ տարի անց խաչենցիները, միանալով Ուտիքի կողմերի բնակիչների հետ, կանգնեցին օսմանցիների և պարսիկների դեմ։ Եվ ԺԸ դարի վերջերին, բռնակալ Փանա խանի օրոք, ինքնագլուխ իշխանությամբ փառավորվում էին Հովսեփ Մելիքը և նրա որդի Բեկլարը՝ գորավոր և կորովի մարդիկ, և նրանց նման Ադամ Մելիքը, որը նրանցից էլ առաջ

անցավ փառքով և հերոսությամբ, և որի մեծաշեն վիմատաշ տապարանքները մինչև օրս կանգուն կան գավառի տարբեր կողմերում: Մելիք Ծահնագարը՝ մեծահանձար և քաղաքագետ մի մարդ և ուրիշները՝ Մելիք Ալլավերդին, Մելիք Բաղդասը, Մելիք Եսային, Մելիք Միրզախանը, մնացին պարսից հպատակության տակ: Նրանց սերնդից ոմանք և այժմ պատվի են արժանանում ոռոսաց դոանը:

129. Զալալյանների իշխանության ժամանակ Խաչենի սահմանը ձգվում էր դեպի հարավ, հասնելով մինչև Ծուշիի կողմերը, որ մոտ է Գարգար գետին, իսկ ամբողջ երկիրը մրա ու Թարթառի միջև է, որոնց միջով, բարգավաճ հովտով, հոսում է Խաչենագետը, որն իջնում է Գանձասարի՝ և Ծահթախտի լեռներից, որոնք գտնվում են **Գըրք-կյոզ** լեռան վերջում՝ Խաչենի, Զանգեզուրի, Վայկունիքի միջնասահմանում: Խաչենագետը աջից ընդունում է մի մեծ և մի քանի փոքր վտակներ: Բայց մշակավոր երկրի բնական կերպարանքը, բացի Ծուշիի կողմերից և արքունական ճանապարհից, մեզ լավ ծանոթ չէ՝ այստեղով հետաքրքրվող ուղևորների չանցնելու պատճառով:

Արցախի և Ուտիքի այլ գետերի մյան Խաչենագետն էլ ձորերով է իջնում, որի հետևանքով էլ այդ մասը **Խաչենաձոր** է կոչվում: Մեր նախնիներից Կիրակոսը հիշում է, թե ինչպես 1240 թ.¹ Խաչենում սարսափելի ու խոշոր կարկուտ է տեղում, որի հետ էլ թգաչափ ձկներ են թափվում, որ «մենք մեր աչքով չտեսանք, ասում է, բայց շատերը կային և հավաստիացնում էին, թե իրենք ականատես են եղել»⁵⁴:

Ըստ հին աշխարհաբաժանման՝ երկրի հյուսիսային կողմը՝ Թարթառի անջրպետը՝ և Խաչենի արևմտյան հովիտը, սեփականացրել էր **Մենծիրանքի** գավառը, արևմտյան կողմը՝

⁵⁴ Կիր. Գանձակեցի, էջ 321:

Մյուս Հաքանդը կամ **Ամարասը**, հարավային կողմը՝ **Պանծկանք** գավառը և **Շուշի**ի այլ գավառներ: Դրանց համաձայն՝ մենք էլ **Չրքերդ** գավառի մնացած մասը բաժանեցինք երեք մասի, դրանք կոչելով հին գավառների և նրանց նոր բնակավայրերի անուններով՝ **Մեծիրանք** (և **Կսապատ**, **Ամարաս** և **Ասկերան**, **Պանծկանք** և **Շուշի**:

ՄԵԾԻՐԱՆՔ—ԿՍԱՊԱՏ

130. Արցախի հայտնի գավառներից մեկը **Մեծիրանքը** կամ **Մեծյուրյանքն** է, որն ավելի լավ է կոչել **Մեծարունիք**: Այն ֆեր առաջին պատմիչները չեն հիշատակում, բացի **Աղվանքի** պատմիչից, **Զ—Թ** դարերի մոտակայքում: Սա համարվում է խաչեմցիների հին ցեղի օրրանը: Ուներ եպիսկոպոսական հին աթոռ **Ս. Հակոբի** անվանի վանքում, որի առաջնորդները հիշատակվում են **Զ** դարից, ինչպես ցույց կտրվի ստորև:

Այս գավառը տարածվում էր **Տրտու** գետի աջ կողմում, արևմուտքից դեպի արևելք և ձգվում դեպի հյուսիս: Նրա հարավային կողմին մոտիկ հոսում են գետակներ, որոնց ակունքները հայտնի չեն: Դրանցից մեկը, իմ կարծիքով՝ **Կսապատի** մոտով անցնողը, կոչվում էր **Չղախ**, և պատմիչի նկարագրությամբ նրա սահմանները կոչվում են «**Չղախյան հովիտ**, **Ասպարիսան** դաշտակ **Տրտու** գետի ափին, որը գտնվում է **Մեծիրանքի** վիճակում (գավառում)»⁵⁵, որտեղ կանգ են առել **Մեսրոպի** աշակերտները, որոնց թաքցրած նշխարքները հայտնաբերվեցին է դարում: 821 կամ 822 թ. պարտավցիները ասպատակելով **Ամարասը**՝ եկան այստեղ «և ամրացան **Մեծիրանքի** գավառում,

⁵⁵ **Եղևկո.**, էջ 208:

Շիկաքար կոչվող տեղում»⁵⁶, որոնց կոտորելով Քաջ Սահի Սմբատյանը՝ գերի վերցրեց: Երեսուն տարի անց՝ (մոտավորապես 853 թ.) «անձրևների շատությամբ Մեծիրանք գավառում տեղատարաբի է վերածվում, և հեղեղի ընթացքը՝ հասնում է **Դաստակերտ** գյուղը, որը գտնվում է գետերի միացման տեղում, որտեղից խաշնարածների ութ հարյուր վրան տարավ, որոնք Կովկասից եկել էին ամառային արոտավայր»⁵⁷: Գետերի միացման տեղում կարծես Խաչենագետի վտակն է, որը՝ աջից (հարավից) է հոսում:

131. Հյուսիս-արևելքում, Տրտուի ջրաժանի սկզբում, սույն գավառի և Ճվանջերի սահմաններին մոտիկ, կա երկու գյուղ՝ **Ուլու-դարաբեկ** և **Քյուչյուկ-դարաբեկ**, այսինքն՝ Մեծ և Փոքր: Փոքրի հարավում է գտնվում աշխարհագիրների նշած **Կասպատ** կամ **Քասաբադ** մեծ ավանը՝ հեռվից շրջապատված լեռներով, իսկ մոտիկից՝ այգիներով. այն գեղեցիկ մի վայր է, ինչպես ես կարծում եմ ոռոգվող Չղախ գետով, որը տորթակեզ ամռանը շողում է լեռների շուրջը: Ունի գեղեցկաշեն եկեղեցի՝ բարձրացած չորս սյուների վրա, կառուցված 1686 թ.: Այժմ այդ գավառում դրանից մեծ և բազմաբնակ բնակավայր չկա, որի հետևանքով էլ նրա գլխավոր գյուղն է և, ինչպես կարծում եմ, այդ կողմի տեսուչի նստավայրը:

Սրա հարավային կողմում գտնվում են **Քյուկ-յադախ** և երկու **Ճան-յադախ** գյուղերը, արևելքում **Քեզանին** է, իսկ արևմտյան կողմում գյուղ չի նշվում: Ըստ աշխարհագծի՝ այդ **Քյուկ-յադախը Մոխրաբակ** գյուղը պետք է լինի, հիշատակված Զալալյան Սարգսի կողմից: Այնտեղ կա երկու գեղեցկաշեն եկեղեցի, որոնցից մեկը Տիրամոր անունով է, իսկ մյուսը՝ Ինը-

⁵⁶ Աճղ, էջ 326:

⁵⁷ Աճղ, էջ 333:

Մատանց (°), ինչպես նաև Մելիք-Աղամի մի հույակապ ապարանքը⁸⁸:

132. Այս հովտում և Ասպարիսաձև դաշտակում, որը իր շուրջը գտնվող լեռների շնորհիվ է այդ ամունն ստացել, ինչպես վերևում և այդուր ասացինք, մի քանի օրով հանգրվանեցին Մեսրոպի աշակերտները, որոնք եկել էին Մեծկունիքից: Եվ երբ հոնական ասպատակները մոտենում են, աշակերտները այնտեղ թաղում են Երուսաղեմից բերած նշխարքները և մեկնում, բայց չեն կարողանում ազատվել ավազակների ձեռքից, և նրանցից նահատակվածները որպես սրբություն ծածկված են մնում շուրջ 200 տարի, մինչև որ Աստծու այդ Իսրայելին տեսիլք երևաց, և նա իր վիճակի եպիսկոպոս Դավթի հետ գալով Մեծիորանքի կողմերի եպիսկոպոս Հովելի մոտ, որի թեմի մեջ էր մտնում Չղախը, սկսեց որոնել երազում տեսածները: Արդ՝ նրանք Մեծիկողմանքի Ըոռասատակ գավառից Տրոտի վրայով անցնելով Չղախյան հովիտը, «դուրս գալով տեղավորվեցին նշանավոր անտառում, բարձրավանդակ տեղում, մի սարավանդակ վայրում: Այնտեղ կար փայտաշեն մի մատուռ՝ խեցիներով երեսապատված, խաչանիշ զարդաքանդակներով դրվագված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված: Արդ՝ այդ լուրջ հայտնի դառնալու ժամանակ աճապարանքով հավաքվեցին պատվական մարդիկ, քորեպիսկոպոսներ, հարյուրների սարկավազներ, գլխավոր գավառապետներ և մեծամեծներ, գործակալներ, տղամարդկանց ու կանանց ժողովրդական բազմություններ, որպեսզի բոլորը մասնակցեն Աստծու սքանչելագործությանը:... Եվ երեքօրյա պատի ժամկետը լրանալիս Արասուն Իսրայելը բաժնը ձեռքն առավ, խոնարհվեց բոլորի

⁸⁸ Հռիմ. Զաղայանց Մարգիս, Մանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփիսիս, 1842, էջ 180:

առաջ և, ուղիղ մայելով նկատված տեղը, հրամայեց աներկյուղ փորել: Եվ այնտեղ մեկտեղ հավաքված բազմաթիվ մարդիկ, մասնակցելով այդ գործին, իրենց զգեստներով կրում էին հողը հեռու: Նրանք աշխատանքից հոգնելով՝ չկարողացան տեղի չափի ու բաղձալի գանձը գտնել: Ապա այնուհետև արևելյան կողմի փայտաշեն հարկը քանդեցին, ուր դրված էր Տիրոջ մեղսաքավիչ պատարագի սեղանը: Այնտեղ հետախուզելով և որոնելով՝ սեղանի տակ մոտ մեկ կանգուն փորեցին: Հանկարծակի այնտեղից շատ քաղցր ու անուշ բուրմունք տարածվեց: Եվ լցվելով հաճելի առատությամբ՝ շատերի հոտոտելիքները մշտապես քաղցրացրեց: Այդ հոտը ճշգրիտ կերպով նմանվում էր խնկերի ու զանազան ծաղիկների ազնիվ բույրերին, մինչև որ բոլորը առհասարակ զարմացան: Եվ երբ փորեցին տաք թիզ, գտան երկու արծաթյա արկղեր, որոնց վրա դրված էր կապարե կնիք: Վերջինիս վրա հաստաճեղույս մեխերով մեխված էր մի ոսկեձույլ տախտակ, և նրա վրա գրված էր ասորերեն և հայերեն...:

Ապա եպիսկոպոսները Իսրայելի և պատվավոր քահանաների հետ միասին առանձնացնում և բաց էին անում սրբության տապանակների մատանու կնիքը ու այնտեղ գտնում Քրիստոսի փրկարար խաչի մի մասը: Նույն ինքը՝ արքեդիական քրթեպիսկոպոսը կարդում է ոսկեձույլ տախտակի գրությունը, որը հետևյալն էր, թե՝ «Առանձնացված մատուցքները Երուսաղեմի սրբերինն են»: Իսկ Մեծիրանքի հովվապետ տեղ Հովելը, երբ տեսնում է այդ աստվածային հրաշքը, իր լայնածավալ գիտությամբ նույնպես բազմաբեղուն կերպով ծաղկում էր և ամբողջ սրտով գոհանում Աստծուց...: Եվ որովհետև իր նահանգում էր գտնվում նախապես սահմանված վայրը, որտեղ ծածկված էր կենսատու լույսը, ուստի չսպասեց որպես ճամփորդ կամ հանցավոր որևէ մեկի կողմից շնորհ ստանալու, այլ ինքը

դարձավ տնօրինող՝ ու հսկող դրանց վրա, իբրև իր գանձերի վրա: Եվ տապանակներից մեկը որպես պատիվ ինքն է առնում և տանում եպիսկոպոսանոցը: Սակայն դրանից խիստ դժգոհ էր Աստծով մարդը... քայց մի պահ նա թույլ տվեց և իր հեղության համաձայն ոչ ոքի չամբաստանեց, այլ առավ մնացած տապանակները և Դավիթ եպիսկոպոսի հավանությամբ Տիրոջ պաշտամունքը կատարող բազմաթիվ քորեպիսկոպոսներով, քահանաներով՝ ամբողջ ժողովրդով տարավ իր բնակավայրը և սաղմոսներով, օրհնություններով, լուսավառ լապտերներով ու մոմերով Տիրոջ սրբությունը ուղի գցած իջեցրեց Գլխովանքի սուրբ եկեղեցին»⁵⁹: Եվ ապա այդ դեպքերի մասին գրեցին կաթողիկոսին, իսկ հավելված նամակում ասվում է նաև կնիքով հաստատված կողովների մասին. «վրան հոռոմեական՝ փականքով կապարեն կնիք, որից էլ կախված էր ոսկեծույլ մի տախտակ»⁶⁰: Եվ դրանք կաթողիկոսին և Մեծն Զվանշիրին ցույց տալուց հետո Խարալեյը իր մասը տանում է Գլխովանք, իսկ Հովելը իր մասը՝ Ս. Հակոբի վանքը:

133. Չղախից հարավ ընկած է մեկ ձորահովիտ ևս՝ Թաթթառ և Խաչեն գետերի միջև. դա **Գապարտն** է կամ **Ղաթարթուն**, որի արևելյան կողմում էլ համանուն գյուղն է, իսկ արևմտյան կողմում՝ **Գազանճը** և **Քեղանին**: Խաչենագետի հովտում, վիճակի հարավարևելյան ծայրում, գետի աջ կողմում, մի բարձրավանդակի վրա գտնվում է **Բարուխ** գյուղը, իսկ նրա հարավում՝ **Տաշ-պաշը**, դրանից ավելի վերև, արևմտյան կողմում՝ **Շալվան**, սրա հյուսիս-արևմուտքում, գետի ձախ կողմում՝ **Ախմաք** գյուղը. սրա և վերոհիշյալի միջև գետերի միացման տեղն է, և այնտեղ, նրա անկյուններից մեկում կարելի է հան-

⁵⁹ Կղնկտ., էջ 205—208:

⁶⁰ Աճդ., էջ 210:

դիպել **Դաստակերտ** գյուղին, որ հեղեղվեց հազար տարի առաջ: Հասան-Ջաղայանը Արցախի արձանագրությունների ժողովածուներում այդ գյուղը կոչում է **Տաստակեր**, որտեղի եկեղեցում էլ ընդօրինակված է մի արձանագրություն, ըստ որի այն կառուցվել է Սարգիս եպիսկոպոսի կողմից, 1281 թ. «21 թվին Աստծու կամքով, Արղունի իշխանությամբ տեղի Ստեփաննոսի հայրապետության ժամանակ, Փախրատինի որդիներ Իվանի և Սատրատինի ամիրայության օրոք, ես՝ Տեր Սարգիսս, կառուցեցի ժամատունը, զուգեցի գավազանները՝ ավետարանները, Ստողոգինը, Եսային: Ովքեր աղոթում են, թող ողորմությամբ հիշեն հանուն Քրիստոսի»:

Ախմաթի հյուսիս-արևելքից նրան մոտ է գտնվում **Պալազայա** գյուղը, իսկ հյուսիս-արևմուտքից նույնպես նրան մոտիկ՝ **Տավշանը**, որը հայոց աղբյուրներում **Առաջաձոր** է, հիշատակարաններում՝ **Առջաձոր**, բայց ըստ իս ավելի ճիշտը **Արջաձոր**ն է: Խաչեն գետի ձախ կողմում, Գանձասարի ելքից չորս մղոն հեռու, ապառաժոտ ու մացառոտ ձորավայրում, հայկական 100 տներով գյուղն է, որտեղ կա քարաշեն եկեղեցի, կառուցված կամ նորոգված 1668 թ. Դավիթ քահանայի կողմից, որի օրոք գյուղի ավագն էր Յաղուր բեկը, իսկ Ագառգալիինը՝ Պահարը: Բայց եկեղեցու դռան վրա ամրացված է 1253 թվի մի խաչվան. «2Բ թվին ես՝ Աթուսալի որդի Վաչես, խաչ կանգնեցրի պարոն Թուրքին. ովքեր կկարդան, թող հիշեն հանուն Քրիստոսի»:

Արջաձորի մերձավոր վայրերը հիշատակվում են կանոնների մեջ, 1458 թ., որոնցում հիշվում են նաև Մերաթի որդի Շահնշահը, Արղուրի թողը և Ջալալ Մեծի որդու, Մեջլիսի որդու, Ուլուբեկի Աղաբաստ տան Արաբա-հողը (ուր սպանություն էր կատարվել), իսկ սահմանները կոչվում են **Առաջաձորի ջուր, Մեծ Շահառ, Դիցարած քարեր, Արապա ճոթեր,**

Մով, Արխե աղբյուրի հող, Հավաքի խոռ, Որդյաց խաչի խոռ, Բարտոն, Բարի ջրաղաց Խաչեն գետի վրա. այս հանգամանքներին վկա են եղել Աղվանքի Հովհաննես Կաթողիկոսը, Գանձասարի առաջնորդ Եղիա եպիսկոպոսը, Զալալի որդի Աղաբաստը (որը այդ կողմերի ազնվագույն տանուտերերից է), Աթաբեկ Ամիր Հասանը, նրա եղբայրները և Դուրսունի որդի Միրզազին:

Արջաձորի հյուսիս-արևելքում բարձրանում է **Չիլեթ լեռը**, որը հայերը կոչում են **Չափարած խաչ**՝ նրանում գտնվող մի ցանկապատ խաչվեմի պատճառով, և այնտեղով է անցնում ճանապարհը դեպի հյուսիս:

Գետակի աղբյուրների տեղերում գտնվում են **Սալտարան, Խորխան, Հազարգոխ (՝), Հնձախոտ** կամ **Հնձախութ** հանգըրվանները կամ ձմեռանոցներ՝ ու ագարակները, որտեղ զբոսնելով եին նաև Գանձասարի վանքի կալվածքները, որոնց մոտ կան եկեղեցիների ավերակներ կամ լքված մատուռներ, խաչարձաններ և գերեզմաններ,¹ որոնցից մեկն էլ բլրի գագաթին գտնվող **Կարմիր եկեղեցի** կոչվածն է, որը դեռևս կանգուն է: Նրա մոտ կան կարմրաքար խաչվեմեր, որոնց արձանագրությունները ճշգրտված չեն: Գապարտի կոչվող աղբյուրների վայրի և սարահարթից հոսող Թարթատի միջև ընկած է **Հրնձախոտ** բուն գյուղը, որը ալլազգիների կողմից **Յայնի** է կոչվում:

Հնձախոտ ձմեռանոցի սկզբից, մեկ մղոն հեռավորությամբ գտնվում են **Աղբերքջան** ձմեռոցն ու գոմերը, Այն ուամիկները կոչում են **Ըխալըքջան** կամ **Խըբըքջան**, որտեղ գտնվում է Սկյանդար (՝) նահատակի մի ուխտատեղ-եկեղեցին, ուր գատկի օրերին տոն և հանդիսություններ¹ են կատարվում: Նրա կարմրաքար սյուների ու դռան վրա և գերեզմաններում երևում են արձանագրություններ, որոնք դեռևս չեն վերծանված: Հրն-

ձախուրի հյուսիսային կողմում, մի լեռնաբլրի լանջերին կա հեկիզմներ (ռամիկների արտահայտությամբ՝ Պեմեմ-կյումեր) կոչվածը: Լեկերի և պարսիկների ասպատակություններից այդ տեղերը ամայացան ԺԸ դարի երկրորդ կեսին, իսկ այժմ պատկանում են Արջաձորին: Սահմանները անտառախիտ են, որտեղ կան երկանաքարի և կարմիր ջրաղացքարի լքված քարահանքեր:

134. Խաչենագետի և նրա վտակ Քոլատակի միջև, երկուսից մեկ մղոնաչափ հեռավորությամբ գտնվում է Մեծիրանքի հնագույն, նշանավոր ու հայտնի Ս. Հակոբի մենաստանը, որը կոչվում է նաև **Մեծիրանքի վանք՝** կառուցված բարձր բլուրի վրա՝ Գրք-կյոլ լեռան արևելքում անտաշ քարերով կառուցված երեք եկեղեցի կա: Նրանց առջևի մասում գավիթն է, իսկ շուրջը՝ վանքի մութ սենյակները: Իսկ մյուս արձանագրություններից, ասում է Սարգիս Ջալալյանը, կարելի է գուշակել, որ մենաստանը կառուցվել է ԶԳ թվին, որը Տիրոջ 634 թիվն է, բայց հարկ է կարծել, որ այն ավելի վաղ է հիմնադրվել, քանի որ այնտեղ էր տեղադրված Մեծիրանքի եպիսկոպոսի աթոռը, և սուաջին եպիսկոպոսը հիշատակվում է Տեր Աբասը, Զ դարի կեսին, որը և 552 թ. Աղվանից Տան կաթողիկոսություն վերակոչվեց: Այդ դարի վերջում եպիսկոպոսը Սիմեոնն էր, որին հիշում է Աբրահամ կաթողիկոսը իր թղթում⁶¹, իսկ Է դարի կեսին՝ Հովել եպիսկոպոսը, որի ժամանակ Չղախյան հովտում տեղի ունեցավ մասունքների գյուտը, և կողովներից մեկը բերվեց այստեղ: Նրանից հետո հիշվում է Զաքարիան, որին ձեռնադրեց Ներսես կաթողիկոսը, Է դարի վերջում կամ Ը-ի սկզբում: ԺԳ դարի կեսին Սարգիսն ու Վարդանը առաջնորդ կարգվեցին, իսկ շատ դարեր անց հիշվում է Գրիգոր եպիսկո-

⁶¹ Եղևկո., էջ 276—279:

պոսը, որի հիշատակը գրված է Մծբինի Ս. Հակոբ եկեղեցու արձաթյա պահարանի վրա. «Նորոգվեց ՌՇԽ (1691) թվին Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով»: Քանի որ այդ սրբիմ է նվիրված, դրա համար էլ առանձին արձանագրություններում (օրինակ, Գանձասարի արձանագրությունը) կոչվում է Մծբինի աթոռ: Այժմյան եկեղեցին կառուցվել է Խորիշահ տիկնոջ կողմից, 1212 թ., որի որդիները՝ մեծն՝ Զալալ-դոլն ու Զաքարեն և վերին Խաչենի իշխանները, նրանց հետ մասն ուրիշները, վանքին նվիրել են գյուղեր և ագարակներ, ինչպես ցույց կտրվի այլ արձանագրություններում, որոնց մեջ վերջին թվականն է 1293-ը: Բայց կան մասն անթվակիր արձանագրություններ, ինչպես պայազատ իշխան Զալալի որդի Հովհաննես կաթողիկոսի խաչարձանը: Թվում է, որ մյուս խաչվեմը մա է կանգնեցրել վանքի գավիթում և մակագրել՝ «Ես Հովհաննես կաթողիկոսս, կանգնեցրի այս խաչը իմ հոգու փրկության համար»: Այնտեղ է գտնվում մասն նրա գերեզմանը՝ «Այս է Աղվանքի կաթողիկոս Տեր Հովհաննեսի գերեզմանը. ԶԺԹ», որից հայտնի է դառնում նրա վախճանվելու թվականը՝ 1470:

135. Մեծիրանքի վանքի արձանագրությունները.

Ա. «ՈԿԱ թվին Աստծու կամքով ես՝ Վախտանգի տիկին, մեծն Սարգսի դուստր, Զաքարիայի և Իվանեի քույր Խորիշահըս, վերստին կառուցեցի Մեծիրանքի եկեղեցին՝ իմ հոգու փրկության և իմ զավակների բարեխոսության համար. ԱՆ (իմա՝ մի քառասուն) ժամերգություն թող լինի ինձ և իմ ծնողների համար: Վախտանգին և ինձ ձեր աղոթքների մեջ՝ հիշեցնե՛ք»:

Բ. «2ԽԲ թվին ես՝ Հեջուբի եղբորորդի Մավիս, դարձա սուրբ ուխտի միաբան, գնեցի Խաչեղիքի սուրբ Աշանը և տվեցի վանքին: Իմ տերը և միաբանները խոստացան սրա դիմաց ժամերգություն կատարել»:

Գ. «Զալալի հրամանով ես՝ Վահրամա, Հասանը, Սմբատի որդիները մեր հոր հոգու համար Ծաղատեղի հողը տվեցինք Մծբինի աթոռին: Տեր Վարդանը և միաբաններս Հասանի, Սմբատի, Թամարի համար ժամերգություն տվեցինք. ով հողը իդի և ժամերգությունը խաբանի, ՅԺԸ (318) հայրապետների կողմից թող նգովվի»:

Դ. «ՈՂ թվին ես՝ Մեծիրանքի տան Սմբատի որդի Գրիգորս, Տեր Սարգսի ու Տեր Վարդանի առաջնորդությամբ սուրբ նշան ավետարանը և Ակեսավերը իր հողով ու իշխանությամբ տվեցի Զալալին ու միաբաններին»:

Ե. «Աստծու կամքով ես՝ Տեր Հովհաննես կաթողիկոսս, մեծ իշխան Զալալի որդիս, կանգնեցրի խաչը իմ հոգու փրկության համար. ովքեր երկրպագում են, թող հիշեն աղոթքների մեջ»:

Զ. «Աստծու կամքով մենք՝ Սարգսի որդիներ Ուքանս և Պապքանս, որդու հոգով (”), Զալալ-դդի իշխանությամբ, ընծաներով միաբանվեցինք սուրբ նշանին. Տեր Վարդանը և միաբանները տվեցին տասը ժամերգություն. ով խափանի, թող դատապարտվի Աստծու կողմից»:

Է. «ԶԱ թվին թագավոր Զալալ-դդի հրամանով ես՝ Հեջուբի որդի Սմբատս, Էգատեղը տվեցի Գրիգորին. նրանք թող ժամերգություն կատարեն»:

Ը. «Ես՝ Խաչենի տեր Վախտանգի որդի Զաքարես, Կոռի երկիրը տվեցի Մեծիրանքի սուրբ նշանին, և սրանք Վարդավառի տոնի ժամանակ ժամերգություն տվեցին ինձ և իմ տիկին Արդու Խաթունի համար. ով խափանի ժամերգությունը, թող դատապարտվի Աստծու կողմից»:

Սակավ անգամ հիշատակվելու պատճառով անծանոթ են սրանց տեղերը, այն է՝ **Ծաղատեղը, Ակեսավիրը, Կոռի երկիրը**, թերևս դա նույն Բոռի Հանդ կոչվածն է, Քոլատակի արձանագրությունում նշվածը:

136. Հյուսիս-արևելքի վանքերից կես մղոնից մի փոքր ավելի հեռու է գտնվում **Տամկալե** կամ **Տամողլի** գյուղը, իսկ հարավի վանքերից մեկ մղոն հեռու՝ **Քոլատակ** գյուղը: Այս կամ սրան մերձավոր անունով բնակատեղիներ շատ տեղերում ու կողմերում են նշվում, որոնք աշխարհագրագետները գրում են **Քյուլադաք** կամ **Քյուլադակս** ձևերով: Ինձ թվում է, որ նշված են տեղի հանգամանքները, այսպես՝ ագարակի, գերեզմանոցի և այլնի տեղերը. օրինակի համար Դադիվանքի արձանագրության մեջ՝ «Դադի վանքը իր Քոլատակով»: Այնտեղ կան գերեզմաններ, մահարձաններ, և մի խաչարձանի վրա գրված է 1243՝ «Ի ՈՂԲ թվին Աստծու, Խաչենի տերերի, Ջալալի և իր որդի Աթաբեգի ողորմությամբ ինձ՝ Հուսարեցի վարդապետ տեր Վարդանիս, իշխանները տվեցին հողը, իսկ ես գնեցի **Բոռի** հանդը, **Շեղջատափը**, երկրի տնատեղը և Գանձասարի վանքին նվեր տվեցի իմ հոգու համար: Սրանք Վարդանանց տոնի ժամանակ տարին երկու ժամերգություն տվեցին: Ով հայրենիքը զրկի սուրբ ուխտից, թող նզովվի ՅԺԸ (318), հայրապետների կողմից և իմ մեղքերին պարտական լինի»:

Գերեզմանոցում, մի մահարձանի վրա հականե-հանվանե հիշատակվում են Ջալալյան երկու պաշազատներ, այսպես՝ «Այս է Մեհրաբ Աղայի տապանը». և նրա մոտ՝ «Ես Մեսրոպ Բեգի որդի Ջալալ Բեգս, կանգնեցրի իմ հոգու տապանը (հիշատակը). աղոթքների մեջ հիշեցե՛ք մեզ»:

137. Ս. Հակոբի վանքի դիմաց և նրան մոտիկ (կարծես հյուսիսային կողմից) մի բարձրակատար և անմատույց ժայռի վրա գտնվում է **Հավախադաց** կամ **Հավքախադաց** բերդը, որն անունն ստացել է իր դիրքի պատճառով: Ան ալազգիները մինչև օրս կոչում են **Սաղսաղան-քալեսի**, այսինքն՝ կաշաղակի անունով: Թվում է, որ բերդը հնում էլ այդպես է կոչվել և թերևս այդ անունից ու տեղից էլ ստացել իր **Կաշեղաց** խաչ անունը,

որը հիշատակվում է Մեծիրանքի արձանագրություններում: Սույն բերդը կառուցել է Սահյան Ատրնեսունի որդի Գրիգորը, **Թ** դարի երկրորդ կեսին, որին ԺԲ դարում տիրում էին Վախտանգյանները: Իսկ թաթարների հարձակման ժամանակ, 1238—38 թթ., եղել է Ջալալի իշխանության տակ: Այն այլ բերդերի հետ միասին ամուր պաշտպանված էր, քանի որ փախստականներից «շատերը ամրացել էին այն ապահով վայրերում, որոնք տեղի դժվարության պատճառով Հավախաղաց էին կոչվում, և մարդիկ ապահով կերպով ապաստանում էին այդ ամրոցներում: Բայց քանզի Տերը երես թեքեց մարդկանցից, թշնամիները հանկարծակի խուժեցին ամրոցները և մարդկանց մի մասին սրի քաշեցին, իսկ մի մասին էլ գահավեժ արեցին: Ընկածների շատությունից գետինը ծածկվում է, և արյունն, առու կազմելով, հոսում էր իբրև ջուր: Ոչ ոքի չխնայեցին, և երկար ժամանակ նրանց ոսկորները երևում էին իբրև քարակույտներ»: Ցարդ երևում են ամրոցի, հին բնակարանների մնացորդները և լճան մի մեծ ջրավազան:

138. Սրանց հյուսիսային կողմում, Խաչեն գետի ձախ կողմում, կան նշանավոր այլ բնակավայրեր, ինչպես՝ Տամկալեի հյուսիսում, Արջաձորից մեկ մղոն դեպի արևմուտք գտնվում է **Պազարքենդ** գյուղը, որը հայերն անվանում են **Վաճառ** գյուղ: Իսկ տեր Հասան Ջալալյանը արձանագրություններում վերնագրել է **Մմակահող**: Այդ արձանագրությունները մեզ տեղեկություններ են տալիս մեծն Հասան-Ջալալդղլի իշխանության օրերի մասին՝ ծանուցելով այնտեղ գտնվող սուրբ Ստեփաննոսի մատուռների և 1229 թ. նրա կառուցած եկեղեցու մասին: Այնտեղ կարդում ենք. «Աստծու շնորհիվ ես՝ Վախտանգի և Խորիշահի որդի, Խաչենի տեր Հասան, կառուցեցի այս սուրբ եկեղեցին, երբ սուրբ Ստեփաննոսի մատուռները հայտնվեցին այս տեղում ՈՀԸ (**1229**) թ.: Ջատկին ժամերգություն սահմա-

նեցի ինձ և իմ հոր համար»։ Մասունքները թերևս է դարձում ծղերկքից բերածները լինեն, որոնք մենք վերագրեցինք Վայկունիքին, որովհետև այդ տեղը Վայկունիք գետից 4 կամ 5 փարափս հեռու է գտնվում. այն Տուդիսն է։

Կարճ ժամանակ անց, այն է՝ 1251 թ. Զալալի տիկին Մամբանը կառուցել է մի այլ փոքր եկեղեցի, որի արձանագրությունն է՝ «Ես՝ Զալալ-դուլի տիկին, Սյունյաց Բաղուց թագավորի թոռ Մամբան թագուհիս, կառուցեցի եկեղեցիները և իմ Այլընձա հողը ընծա տվեցի իմ հոգու համար. սպասավորները թող ինձ համար երկու պատարագ կատարեն, իսկ ծընընդյան ութ օրերը՝ իմ ծնողների համար մինչև իմ մեռնելը։ Ով իմ տվածը խլի կամ ժամերգությունը խափանի, թող դատապարտվի Աստծու և սրբերի կողմից. 2 թվին»։

Եկեղեցու գավիթում կանգնեցված են խաչվեմեր, որոնցից Սպիտակ կոչված մեծ խաչի վրա 1507 թ. Վելիճանը արձանագրել է. «ԶԾԶ թվին Աստծու կամքով ես՝ մեծն Աղբաստի թոռ, պարոն Սայտունի որդի Պելիճանս, կանգնեցրի այս խաչը»։ Մի այլ փոքր խաչի վրա գրված է. «Աստծով կամքով ես Գրիգոր կաթողիկոսս, կանգնեցրի այս սուրբ խաչը իմ հոգու ՝ փրկության համար. անվանակոչման օրը կանգնեցրի սուրբ խաչը պարոն Մելյաբի փրկության համար, Հայոց ՌԺԲ թվին»։

139. Վաճառից երկու մղոն դեպի արևմուտք. մոտավորապես գետի մեջտեղում նշվում են Սյունաքալ վանքն ու գյուղը։ Եթե նշմարիտ լինի գրածը, ապա Գանձասարին մոտիկ ու կից քարածայր ու անառիկ բլրի գագաթին պահպանվել են Խոյախան կամ Խավախան բերդի ավերակները։ Մեր նախնիները այն գրում են նաև Խավխան և Խոխանաբերդ ձևերով, որոնք վերջիվաճ են ասրսկերենից, ինչպես գրում է Կիրակոս Գանձա-

կեցի՞ն⁶²։ Ինձ թվում է, որ այն ծագում է **Խեհան** բառից, որ նշանակում է **փափագող**, որպես թե տենչալի։ Սա անշուշտ **Խաչենի բերդն** է, անվանի տոհմի բնիկ նստավայրը, որովհետև զըրքերում, արձանագրություններում, իշխանների հիշատակարաններում այն նշվում է Խոյախան կամ Խաչենի բերդ ձևերով, միայն թե բոլոր տեղերում ոչ միատեսակ։ Ուրեմն հայտնի է, որ այն երկրամասի անունով Խաչենի բերդ է կոչվում կամ էլ Խավխան հատուկ անվամբ։ Եվ քանի որ պարսկերեն այդպես էր անվանվում, ուրեմն այստեղից էլ կարելի է ենթադրել բերդի հնության մասին։ Բացի դրանից, այն այդպես էր անվանվում նաև Միհրական տոհմի կողմից։ Իսկ իշխանության սկզբնավորումը պետք է ընդունել Առանից։

Պատմիչների կողմից Խաչենի բերդը առաջին անգամ հիշատակվում է Թ դարից, երբ՝ Դադոյի վանքի Խորաձորում իր ազգականների կողմից սպանվեց Ստեփանոս Միհրականը. «սպանվածի կինը այդ աղետներից զինվում է առնական քաջությամբ, վերցնում է իր ողջ մնացած դուստր Ապրսամին և գիշերային տաժանելի ուղևորությամբ (դժվարին լեռներով գնալով) մտնում է Խաչենի բերդը։ Իր տան մասին բարիք խորհելով՝ Ապրսամին ամուսնացնում է Սահլի որդի Ատրներսեհի հետ...։ Այս Ատրներսեհը շինում է Հանդու բերդը»⁶³։ Դրանից հետո այդ արձանագրության մեջ, Դադի վանքում կարդում ենք. «Հաթերքի, Հանդաբերդի, Խաչենաբերդի և Հավախաղացի տերը»։ Իսկ Խավախանդ անունը հիշվում է մի փոքր ավելի առաջ,՝ նույն Հասանի ժամանակ, ԺԲ դարի կեսին։ Նրա տերը կոչվում էր Վասակի որդի Գրիգոր, որը համարվում է Հասանի հորեղբորորդին։ Սա գնաց Մառաբերդի տեր իր փեսա Տողանի

⁶² Հմմտ. Կիր. Գանձակեցի, էջ 269։

⁶³ Կղևկտ., էջ 340։

մոտ, «որպեսզի նրա միջոցով վրեժ լուծի Դեսրումի որդի Հասանից՝ իր եղբայր Սմբատի համար, որին սպանել էր նա պատերազմի պատճառով: Նրանք միմյանց նկատմամբ ունեին անմիտ թշնամանք և այդ պատճառով իրենց դուստրերին կնության էին տալիս աղազգիներին: Եվ այդ պատճառով էլ Գրիգորը համարձակվեց գալ իր փեսա Տողանի մոտ»⁶⁴, և նրա հետ կովելով մի թուրքմենի դեմ, Դիվախոռ լեռան մոտ, պարտվեցին: «Տողանն սպանվեց, սպանեցին նաև Գրիգորին, իսկ նրա հետ էլ այլ ազատների: Եվ չնայած նրանց թաղեցին այնտեղ, քրիստոնյաների գավառում, բայց մի տարի անց վերցրին, բերին Գանձասար կոչված վանքը, որը նրա նախնիների տապանատունն էր, և նրան այնտեղ թաղեցին»⁶⁵:

Գոշ վարդապետի այս խոսքերը մեզ հնարավորություն են տալիս ըմբռնելու խաչեմցիների տոհմի՝ երկու մասի բաժանվելու պատճառները:

ԺԳ դարի կեսին այս բերդում էր նստում բազմիցս Ռիշատակված Զալալ Հասանը, որը Դեսրումյան ցեղից էր. «այս իմաստուն մարդը, երբ տեսավ անօրենների հարձակումը, իր աշխարհի բնակիչներին ամրացրեց այն բերդում, որ կոչվում է Խոխանաբերդ՝ ըստ պարսից լեզվի: Երբ եկան նրան պաշարելու, տեսան, որ հնարավորություն չկա՝ զրավելու բերդը. սիրով և խաղաղությամբ նրան կանչում են իրենց մոտ. նա իմաստուն կերպով ընդունում է նրանց առաջարկը և շատ նվերներով գնում նրանց մոտ, նրան մեծ պատվի են արժանացնում ու իր աշխարհը տալիս իրեն»⁶⁶: Եվ տասը (կամ ավելի կամ պակաս) տարի անց անգութ Բուղա Ղանը, գրգովելով անզգամ-

⁶⁴ Մխիթար Գոշից կատարած մեջբերումը հմմտ. Կղնկա., էջ 354:

⁶⁵ Կղնկա., էջ 354—355:

⁶⁶ Նիր. Գանձակեցի, էջ 269:

ների կողմից, թաթարների դուռը բռնեց իշխանին, քանդեց Խոյախանը, նրա հետ մահ «Դեղը, Ծիրանաքարը և այլ ամրոցներ ու դրանք այնպես հավասարեցրեց գետինն, որ մինչև անգամ հետք չի երևում, թե երբևիցե բնակավայր է եղել»⁸⁷: Սակայն մինչև օրս երևում են ավերակները, թերևս բերդերը դրանից ավելի չէին, քան կարելի է գուշակել պատմիչի խոսքերից: Նրանից ներքև գտնվում է երբևէ բազմաբնակ ավանի ավերակ, որտեղ գտնվում էին մահ Զալալի ապարանքը և Դարպասներ կոչված եկեղեցին, որոնք մինչև օրս երևում են: Դրանից ոչ հեռու, Խաչեն գետի աջ կողմում, գտնվում է Թարխանի բերդը: Այսպիսով, վերոգրյալ երկու բերդերից մեկն էլ Ծիրանաքարն է, հենց նույն Ծիկաքարը, որը գրավվել էր պարտավցիների կողմից ավելի վաղ ժամանակներում:

140. Ամբողջ Հայոց Աղվանքում ու Առանում վերոհիշյալ բերդերից ու գյուղից մեկ մղոն դեպի արևմուտք, Խաչենի գետափին, գտնվում է հռչակավոր ու նշանավոր Գանձասար գյուղը, որն ընկած է Գանձասար լեռան հարավային լանջին, որի անունով էլ կոչվում են գյուղն ու վանքը: Այն Աղվանից տան հետագա դարերի կաթողիկոսարանն էր: Հայտնի չէ այդ հռչակավոր վանքի կառուցման ժամանակը, որը աշխարհացուցում ևս Աղվանքում է նշված: Բայց այն ավելի շուտ է եղել, քան Զալալ-դոլի ժամանակը: Վերջինս ունանց կարծիքով նրա կառուցողն է համարվում, քանզի հիշատակվում է Գոշի կողմից, ինչպես որ վերևում նշվեց⁸⁸ ԺԲ դարի կեսին: Եվս երկու դար առաջ, Ժ դարի կեսին, այն հիշվում է Սյունյաց պատմիչի կողմից Անանիա կաթողիկոսի Գանձասարի եկեղեցի գալու առ-

⁸⁷ Աճ, էջ 313:

⁸⁸ Կղնկտ., էջ 354—355:

թիվ⁶⁶։ Եվ որովհետև այն Ջալալի մախմիների գերեզմանա-
տունն էր, և նրա հայրը կտակով պատվիրել էր նրան՝ եկեղեցի
շինել գերեզմանի վրա, և ինքը Ջալալ-դուլը, կամեցավ պաշ-
տոացնել վանքը, այդ տեղը նորոգեց և մի հոյակապ եկեղեցի
շինեց 1226—1238 թթ., որպես և ինքը արձանագրում է նոյն
ու գեղեցիկ խոսքերով, որը ցույց կտրվի արձանագրության մեջ։

Եկեղեցու շինարարությունը սիրով հիշում է ման ժամանա-
կակից պատմիչ Կիրակոսը. «Ծիմեց գեղեցկազարդ կառուցված-
քով մի եկեղեցի, Աստծու փառքի գմբեթարդ ու երկնամասն մի
տաճար... Գանձասար վանքում, Խոխանի բերդի դիմաց, իրենց
շիրիմի տեղում։ Ծատ տարիներ աշխատեցին նրա վրա, և երբ
շինարարությունն ավարտվեց, մեծահանդես մավակատիկ
(տոն) կատարեց եկեղեցին կառուցելու համար։ Այնտեղ էր Ադ-
վանքի կաթողիկոս Տեր Ներսեսը բազում եպիսկոպոսների հետ,
ինչպես ման Վանական վարդապետը շատ վարդապետների
հետ միասին։ Այնտեղ էին ման Խաչենի սուրբ վարդապետներ,
միմյանց հարազատ Գրիգորիսը և Տեր Եղիան... բազում քա-
հանանների հետ։ Եվ՝ ասում էին, թե քահանաների թիվը Էժ
(700) էր։ Նա երբ կնքվեց օծմամբ, մեծ մաշկերույթ կազմա-
կերպեց, և ինքն իր իսկ ձեռքերով պատիվ էր տալիս բազմած-
ներին։ Եվ յուրաքանչյուրին, ըստ իր պատվի՝ առատ նվերներ
տալով՝ արձակում էր։ Այս դեպքը տեղի է ունեցել Հայոց ՈԶԹ
թվին, Վարդավառի մեծ տոնի օրը։ Նրա տիկին Մամբանը ե-
կեղեցու դռանը շինեց մի հրաշալի գավիթ, իսկ ինքը ամբողջ
կյանքում ապրելով առաքինաբար, ամեն օր ճգնում էր՝ պաս
պահելով ու աղոթքներով և ընթերցանությամբ գիշեր ու ցերեկ
մտածում էր կատարել Տիրոջ պատվիրանները՝ ըստ Սուրբ

⁶⁶ Հմմտ. Ստ. Օրբելյան, Պատմություն Գահանգին Սիսական, հ. Բ,
Փարիզ, 1859, էջ 22։

Գրքի»⁷⁰: Այս տաճարը... երկարությամբ ու լայնությամբ և գավիթը նորոգվել են ԺԷ դարի կեսին, կանգուն ու լուսավոր են՝ ըստ նկարագրված քանդակների ու պատկերների զարդարանքի: Բեմի ճակատին արձանագրված է՝ հետևյալ կարճ խոսքը. «Ովքեր կերկրպագեն աստվածագարդ այս սուրբ սեղանին, աղաչում են՝ Վախտանգի որդի Հասանին հիշեցե՛ք ձեր սուրբ աղոթքներում»! Եկեղեցու մյուս արձանագիրը թերևս ակնարկում է Մամքանի այն շինարարության մասին, որ կատարվել է հարավային կողմում, 1256 թվին:

141. Սրանցից զատ, հարկ է ենթադրել, որ ուրիշ եկեղեցի էլ եղած լինի, որի դեպքերը պատմվում են Ս. Կարապետի գլխի բերման հիշատակարանում: Գլուխը | Կոստանդնուպոլսում երբ կամեցան ֆրանկներից հափշտակել, այն ստացող իշխանը «առնելով փախցրեց հյուսիսի կողմը, Վրաստան, որն այնտեղ ընկալ Արցախի տեր՝ Ջալալ-դուլի եղբոր ձեռքը: Յոթ հարյուր թվին Ջալալ-դուլը գնաց եղբոր մոտ և խնդրեց սուրբ գլուխը, բայց նա չհամաձայնեց հոժարությամբ տալ: Իսկ սա բռնի կերպով հափշտակեց եղբորից, բերեց Գանձակի կողմերը, Արցախի գավառը և ամփոփելով իր հայրենի գերեզմանատան շիրիմում՝ վրան շինեց զարմանաշեն ու հրաշալի կաթողիկե եկեղեցի՝ ի փառս Քրիստոս Աստծու ու սուրբ Հովհաննես Մկրտչի: Նավակատիկի անվանակոչության օրը բարձր ձայնով կանչեց՝ **Գանձասարի Սուրբ Հովհաննես:** Բացի դրանից, այնտեղ են գետեղված Լուսավորչի օրենսդրույց սուրբ ծնոտը, նրա թոռ սուրբ Գրիգորիսի աջը, Հովհաննեսի հոր սուրբ Ջաքարիայի արյունը, մեծ մարտիրոս սուրբ Պանդալյոնի և շատ այլ սրբե-

⁷⁰ Կիր. Գանձակեցի, էջ 269—270:

րի մասունքները, որոնց միջոցով շատերը բուժվում են ի փառս մեր Զրիստոս Աստծու»⁷¹:

Մեծ եկեղեցու կառուցումից տասներկու տարի անց Ջալալը մարտիրոսաբար տանջամահ եղավ Գաղու քաղաքում անգույթ Արդուն Ղանի կողմից: Նրա մարմինը գցվեց մի ցամաք ջրհորի մեջ: Այն պատվեց լույսով, հետո գողացվեց իր որդի Աթաբեգի ջանքերով և բերվեց ու թաղվեց՝ այստեղ, «Գանձասար վանքում, իր հայրերի գերեզմանոցում»⁷²: Եվ շիրիմի վրա արձանագրված է. «Մեծ իշխան Ջալալը, կատարելով ծնողի կտակը, հիմնադրեց այս հոյակապ ու քարաշեն եկեղեցին Հայոց թվականության ՈԿԵ թվին և գոտևորելով զանազան շինություններով՝ ավարտեց ՈԶԷ թվին՝ իր՝ Ջալալ-դուլի ու իր տիկին Մամքանի հոծար կամքով»:

142. Հայրենի իշխանության բարեպաշտ ժառանգ Աթաբեգը օժանդակեց վանքի զարգացմանը. նրա հրամանով իր հորեղբորորդի ու առաջնորդ Հովհաննեսը 1271 թ. ավելացրեց կալվածքները: Նրա քույր, պարոն Ումեկի տիկին Մամախաթունը 1280 թ. ուխտի եկավ այստեղ: Դրանից ավելի առաջ, 1268 թ., Ումեկի հայր Ծարը և մայր Մամախաթունը վանքի միաբաններ էին դարձել: Ամարասի եպիսկոպոս Տեր Ներսեսը միաբան էր գրվել 1282 թ., Սասնա Հանդաբերդցին՝ 1271 թ. և ուրիշներ: Նմանապես նաև նրա պայազատներն ու Աղվանքի կաթողիկոսները վանքը բարեմորոգեցին ու պահեցին մինչև ԺԶ դարի կեսը: Դրանից հետո այդ տեղը մեկ դար դառնում է անշուք մի վայր, և այդ պատճառով էլ ընդհատվում են արձանագրությունները: Այդ դարից՝ հետո, 1657 թ. Թալիշի մելիք Հովսեփի որդի Արովը նորոգել է Գանձասարի երկու եկեղեցիների տա-

⁷¹ Կղնկտ., էջ 349—350:

⁷² Մխիթար Գոշ, հմմտ. Կղնկտ., էջ 355:

նիքը և քանդված պատերը: Եվ այդ տեղը մեծ պատվի արժանացավ՝ այնտեղ վերոհիշյալ սրբերի մասունքները զետեղելու շնորհիվ: Եվստաթեսուսի աշակերտը՝ Ս. Թադեսուսի և Ս. Լուսավորչի մասունքները բերել էր Հունաստանից: Լուսավորչի թոռ Գրիգորիսը մի մասը տարել էր և պահել Ծիղրք աշխարհի Ցոփաղաքում: Նրա նահատակությունից հետո մասունքները պահվեցին Հակա գյուղում: Դրանք հայտնաբերվելով Վաչագանի օրերում՝ բերվեցին Ամարաս, միացվեցին մյուս մասին. այդ տեղափոխության մասին վկայում է պատմիչը⁷³:

143. Այդ տեղի համբավը է՛լ ավելի բարձրացավ Աղվանքի կաթողիկոսների նստավայր լինելու շնորհիվ: Աթոռը այդտեղ տեղափոխվեց Պարտավից, ինչպես կարծում են վանքը Բեկլար Մելիքի կողմից նորոգվելուց հետո: Եվ միաբանության առաջնորդությունն անցավ կաթողիկոսների ձեռքը:

Առաջին վանահայրերից հիշվում են՝

Վարդանը՝ ԺԳ դարի կեսին.

Հովհաննեսը՝ Իվանեի որդին, 1271 և 1311.

Եղիան՝ 1443—1467.

Ներսեսը՝ 1469—14.5.

ԺԵ դարի սկզբում Գանձասարի վանքում հիշատակվում է Մատթեոս վարդապետ Ուխտեցին՝ Գրիգոր Տաթևացու աշակերտը: Իսկ Աղվանքի վերջին կաթողիկոսներից և վանքի առաջնորդներից շատերը Զալալի սերնդից են: Դրանք են՝

Սարգիսը՝ 1556-ին.

Գրիգորը, որը հետո ուրացող դարձավ:

Դավիթ Արջաձորեցին, որին խեղդեցին խաչեցիները՝ կախելով եկեղեցու զանգակատնից:

Փիլիպպոսը.

⁷³ Հմմտ. Կղևկա., էջ 56—57:

Հովհաննես Ը-ն,
Գրիգոր Դ-ն՝ 1634.

Պետրոսը՝ 1653.

Սիմեոնը՝ 1675.

Երեմիան՝ 1676.

Եսային՝ 1702, որը գրի առավ ժամանակի դեպքերը:

Ներսես Ե-ն՝ 1706 թ., որը Եսայու հակառակորդն էր:
Իսրայելը և Հովհաննեսը՝ 1763.

Սիմեոն Է-ն՝ 1794.

Սարգիս Բ-ն՝ աթոռի հակառակորդը, 1794, որի ժամանակ, 1815 թ., վերացվեց Աղվանքի կաթողիկոսության անունը և տվեց մետրոպոլիտի աստիճան: 1838 թ. նրան հաջորդեց Բաղդասար Հասան-Ջալալյանը, որը արքեպիսկոպոսական աթոռը տեղափոխեց Շուշի:

Այժմ Գանձասարում, բացի վերոհիշյալներից, կան նաև վանականների անշուք սեմյակներ և իշխանների ու վերջին ժամանակների մի քանի կաթողիկոսների գերեզմաններ:

144. Գանձասարի արձանագրությունները⁷⁴:

145. Այսքան մեծ և բարգավաճ կաթողիկոսական աթոռի և արքայաշուք իշխանության վիճակը (գավառը) պետք է, որ լավ բնակված լիներ և շատ բնակավայրեր ունենար: Արձանագրություններում հիշվում են 30-ի չափ բնակավայրեր՝ գյուղեր, ագարակներ, որոնց մեջ գլխավորներն ու հնագույնները ԺԳ դարում հիշատակվածներն են՝ Մառ, Մակեղ, Հարկանդուս, Նորշինական, Արծաթենիս, Շոանց, Վարդանաթաղ: Վերջինս,

⁷⁴ Նկատի ունենալով, որ այդ արձանագրությունները ավելի կատարյալ կերպով հրատարակել է Բ. Ուլուքարյանը (Երևան, 1981, էջ 76—106) և համեմատելով Ալիշանի ձեռագրի հետ՝ դրանք մենք զանց ենք առնում (ծան. «Բազմավեպի» խմբագրության):

ըստ երևույթին, այդպես է անվանվել Վարդանի կողմից: Վարդանաթաղում են գտնվում Ուղտանոսի կտորը, Տճկի երկիրը, Բոլոր քողը և Սեղընկնի այգին, որոնք ագարակներ են համարվում: Իսկ ԺԴ—ԺԶ դարերում հիշվում են Կակաչանց, Փղոռանց և Ծաղկավանց բաժինները, Ալմանատաին, Բեմի հողը, Կունի հողը, Մսերսի կամ Մսեշի հողը, Տանձաչորը, Կասրան, Մինակտանը (*), Առատունքը, Կուռալանը, Ալմանան, Ադախը, Բազմատուքը, որտեղ գտնվում են Ծովերի հողը, Ծակ-խաչը, ուր մինչև օրս գոյություն ունի մի խաչվեմ հետևյալ արձանագրությամբ. «ՈՀԸ (1229) թվին ես՝ Սմբատս, կանգնեցրի այս խաչը հանուն իմ հայր Վասակի. ովքեր կերկրպագեն, թող աղոթքներում հիշեն հանուն Տիրոջ, իմ ցավակից եղբայրների»: Իսկ մյուսներից ոչ մեկը չի հիշատակված գործերում, քարտեզներում կամ գրքերում: Թվում է, որ Ադախը Ատախտ տեղն է, ուր Խաչենի իշխան Գրիգորը Ժ դարի վերջին հավաքեց իշխաններին ու եպիսկոպոսներին, և Ամանիա կաթողիկոսը դատեց Աղվանքի կաթողիկոսների հակառակորդներ Գագիկին ու Հունանին՝ երկուսին էլ կարգազրկելով:

146. Գանձասարի հակառակ կողմում, դեպի Ռյուսիս-աբևուտք, բարձրանում է համանուն լեռը, որտեղից սկիզբ է առնում Խաչեն գետի ջրերի ակունքների մի մասը: Այդ անունը ստուգաբանում են այսպես՝ Գանձա-սար՝ արծաթի գանձաշահ հանքերի շնորհիվ, որոնք երբևէ արդյունահանվում էին այնտեղից: Բաց այդ տեսակետից էլ քննություն չի կատարված, բացառությամբ արծաթահանքերի տեղի, որը բնակիչները ցույց են տվել Սարգիս Զալալյանին⁷⁵: Ըստ երևույթին հանքի կողմերում էր գտնվում Արծաթենիս գյուղը, որը հիշատակված է մեծն Զալալ-դոլի արձանագրություններում և վանքի պարգևա-

⁷⁵ Հմմտ. Զալալյանց, անդ, հ. Ս Ի 181—182:

գրերում: Սպասելի է, որ այնտեղ կարող են լինել և այլ մետաղաձուլներ, որովհետև Գանձասարը հիշվում է Ժ դարից, հետևաբար շատ վաղուց հանքը հայտնի էր: Եվ այն խոչընդոտի հանքերի հետ միասին Արցախի և Աղվանքի հարստության աղբյուրն էր կազմում:

Լեռան ամրության պատճառով ապահովված է ներքևում գտնվող վանքի պաշտպանությունը թշնամիների հարձակումներից: Այսպես, օրինակ, 1722 թ., երբ լեկերը ասպատակեցին Խաչենը, բանասեր Եսայի կաթողիկոսը, մահաճջելով լեռան գագաթը, անվտանգ վայրից տեսնում էր ողբալի կողոպուտը, ինչպես որ ինքն ասում է. «Եկան, հասան Խաչենի երկիրը անվախ ու համարձակ կերպով... և ինչ որ կամեցան, այն կատարեցին, որ ի վիճակի չեմ նկարագրելու: Քանզի մեկ օրում անցնելով Կարկառ գետից մինչև Տրտու գետն ու Չարաբերդ երկիրը՝ ամբողջովին ասպատակ սփռեցին լեռներում, դաշտերում: Նախ՝ հրի մատնեցին գյուղերի՝ փայտաշեն տներն ու բնակարանները, և ապա՝ հարձակվեցին գերիների վրա, իջեցրին լեռների գագաթներից, հանեցին լեռների ծերպերից և ներքևի ծառախիտ ու մացառոտ անտառներից: Եվ հավաքելով նրանց ունեցվածքը՝ նրանց միացրին մահ ոչխարների, արջառների ու ամեն տեսակի չորքոտանի անասունների հոտերն ու ճախիրները և իրար խառնած գետի ափով քշեցին ներքև: Գերիներին և անասուններին իրար էին խառնել այնպես, ինչպես հորդ հեղեղ: Եվ նրանք գնում էին ինչպես մի մեծ բանակ, որը մենք մեր աչքերով տեսանք, քանի որ փախել և հասել էինք լեռան կատարը, որը Գանձասարի սուրբ աթոռի վերևում է: Թշնամիները մեզ չհասան: Եվ լանջերից դիտելով մենք տեսնում էինք կատարվող դեպքերը: Սա եղավ ՌԺՀԱ (1722) թվի ապրիլ ամսի Ի (20)-ին, Չատկի երկրորդ կիրակի օրը: Այնտեղից տեսանելի էին մահ ու մնացողների ողբը, կոտորվողների սու-

գը, գերիների վայնասունը, մայրերի կսկիծը, գերված զավակների լաց ու կոծը, որբացածների ողբալը, ունեցվածքի կողոպուտը: Լացողների ձայնին իրենց վայնասունն էին խառնում ան մեջքակոտոր տղամարդիկ: Եվ բնակություն հաստատելով կարծր քարածայռերում ու լեռներում՝ նրանք միասին սուգ էին անում: Իսկ թշնամու զորքը, տանելով ավարն ու գերիներին, խառնում է իր բանակին, չվում Տկոնակերտ և տեղավորվում Տրդու գետի (որին այժմ պարսկերեն լեզվով Թարթառ ենք կոչում) մի կամրջի վրա, որին Ղարի-քոփրի են ասում: Բայց այնտեղ չմնացին և չկարողացան Չարաքերդի ու Պարտայի երկրին այնքան վնաս պատճառել, ինչքան մեզ, քանի որ նրանք, նախապես իմանալով, ամրացել էին իրենց լեռների ամրոցներում: Մանավանդ, որ երիտասարդներից ոմանք էլ դիմադրում էին թշնամուն, որոնցից շատերին կոտորեցին: Դրա համար նրանք ավարն ու գերիներին շտապ կերպով անցկացրին Կուր մեծ՝ գետից դեպի իրենց կողմը»⁷⁰:

ՄՅՈՒՍ / ՀԱՐԱՆԴ—ԱՄԱՐԱՍ, ԱՍԿԵՐԱՆ

147. Սյունիքի գավառներից մեկին անվանակից լինելը ցույց է տալիս, որ արևմտյան կողմից սահմանակից է Արցախի գավառ **Մյուս Հաքանդը**: Պատմիչների վկայությամբ այն գրանցվում է Սիսանաձորի հարավում, իսկ այժմ՝ Մեծիրանքում և հյուսիսից սահմանակից է այժմյան Թուրքիին: Սա շատ հազվադեպ հիշատակվում է գրքերում և միշտ՝ Ս. Գրիգորիսի վարքի

⁷⁰ Հասան Զալալյանց *Եսաղի կթղ.*, Պատմություն համառոտ Աղուանիք երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 37—39:

և մասունքների պատմության մեջ, իսկ հետագա դարերի պատմիչների կողմից կոչվում է **Փոքր Սյունիք**, մասնավորապես այնպես, ինչպես նրան սահմանակից Սիսական-Ոստանը: Միջնադարում և դրանից հետո իր հռչակավոր ավանի անունով կոչվեց **Ամարաս գավառ**: Իսկ Թ դարի Աղվանքի պատմիչը այդ երկուսը զատում է միմյանցից և համարում առանձին գավառներ, դասելով նրանց շարքում, որոնք դարի կեսին ասպատակեցին բաղանիկեցիները, որը նրանցից առաջ ավերել էր պարսիկ բռնակալ Բաբանը⁷⁷, իսկ մի փոքր ավելի առաջ, 821 թ.⁷⁸ պարտավցի պարսիկները: Դրանից կարելի է գուշակել, որ այդ գավառը Գարգար գետի երկարությամբ ձգվում էր արևմուտքից դեպի արևելք, թերևս մինչև այժմյան երեք գավառների՝ Չրբերդի, Վարանդիի և Քեպերլիի սահմանակցման տեղը: Բայց երկրամասի բուն տեղը՝ գետակի հովիտն է, որը ձախից միանում է Գարգարին, սակայն անունը չի նշվում, որովհետև մեր նախնիների կողմից Ամարաս շենի տեղը նշվում է մի այլ գետակի վրա: Հովտի հյուսիսային ծայրում, որը սրանց խառնարանի ձախ կողմում է, գտնվում է այժմյան նշանավոր **Ասկերան** գյուղը, որի անունով էլ հարմար գտանք անվանել վիճակը (գավառը):

148. Այդ գավառի արևելյան ծայրից մի քիչ հեռու, որը բուն Հաբանդից դուրս է, երեք գավառների՝ Չրբերդի, Վարանդիի ու Քեպերլիի սահմանակցության տեղում, արքունական ճանապարհի վրա, գտնվում է **Ծառ-պոլագ** գյուղը: Այն մոտ է Խաչեն գետին, որտեղ Նադիր Ծառը ամրոց է կառուցել, իսկ ռուսները այն նորոգել են և կազակների համար զորանոց դարձրել: Նա պատրաստել է նաև գեղեցիկ պատշգամբ և պարտեզներ՝ արտաքին եռակամար՝ բակով: Աղբյուրը բխում է ե-

⁷⁷ Հմմտ. **Կղևկո.**, էջ 327:

ռանկյունաձև անջատ լեռից, արևմուտքում գտնվող գյուղի թիկունքից, որն ավելի արևելք է ընկած, քան Արցախի մյուս բոլոր լեռները: Այն հնում սեփականացրել էր Ուտիքը: Այնտեղից մինչև այստեղ ընկած է Աղվանքի ընդարձակ դաշտը: Լեռան հյուսիսարևելյան և հարավային կողմերը կարծես կռանով հատած լինեն: Այնտեղ՝ կան կրային սպիտակ ու փայլուն զանգվածներ՝ քարացած որդերի հետ միասին: Նրա թիկունքում կա մի այլ լեռնաբլուր, որի ստորոտում ընկած՝ է Բարուի գյուղը՝ ևս հնագույն ու կրային զանգվածով ու միջում գեղեցիկ փոքրիկ լեռնահովտով:

Լեռների կողքերը զարմանը ծածկվում են բարգավաճ բուսականությամբ և ծաղիկներով: Դրանցից է հայկական երեսնակը (*agrimonia*)՝ ըստ Դուրնֆորի⁷⁸: Այն տարածված է վայրի սալորենիների (մամուխ), թզենիների և նոնենիների մեջ: Լեռան գագաթի անկյունում, մոտ 1000 մ բարձրության վրա, որտեղից երևում են մեծ դաշտը, Խաչենի ու Գարգարի հովիտները, Արցախի լեռները, գտնվում է վիմատաշ, կիսավեր մի փոքրիկ եկեղեցի՝ եռակողմ թևերով, արևմտյան կողմից՝ քառակուսի, իսկ ներքևից՝ խաչաձև: Ըստ Տյուպոսի հետազոտության⁷⁹՝ եկեղեցին ներսից ու դրսից քարով է շարված, իսկ հայկական տառերի նշաններն ու ձևերը դասավորված են թվականաբանության նման:

Տաճարի մոտ կանգնեցված է մի մեծ խաչվեմ՝ հետևյալ արձանագրությամբ. «Ես՝ Աշոտի որդի Ծառնշահ, իմ հոգու համար խաչ կանգնեցրի. ովքեր կկարդան, թող աղոթքների մեջ

⁷⁸ Ալիշանն օգտագործել է՝ Tournefort Pitton de, *Relation d' un voyage du Levant*, հ. 8, Լիոն, 1717:

⁷⁹ Ալիշանը հաճախակի է հիշում և օգտագործում. Dubois Frederic, *Voyage autour du Caucase*. հհ. 1—8, Փարիզ, 1839—1843:

հիշեն՝ 2ԺԲ (1263) թվին»։ Այդ տեղերի քննությունը կատարել է ճանապարհորդ Հելվետիացին, 1834 թ. ապրիլի 24-ին. գիշերը վրա է հասնում, և թեպետ «գրեթե շառագույն լուսինը իր լուսյալ ժամանակ բարձրանում էր մշուշապատ հորիզոնով, թայց ի վիճակի չէր լուսավորելու թփերով պատած, ջրով լրցված փոսերի բավիղները, որոնք սահմանափակում են դաշտի ընդարձակությունը։ Եվ նրանում մերձավոր գյուղերի նշան չկա՝ ո՛չ աշտարակներ, ո՛չ կղմինդրածածկ կտուրներ և ո՛չ էլ սպիտակ սվաղած պատեր, և բազում տեղերից լսվում էր թաթարների մեծ շների հաչոցը», մինչև որ բախտի բերմամբ նա կաթողացավ հասնել թաթարների մի շեն և գտնել իր ճանապարհը։

140. Եկեղեցու մնացորդից կարելի է գուշակել, որ այդ տեղում նշանավոր մի շեն է եղել։ Եվ նույն Աշոտը, որ հիշվում է Ծակխաչի արձանագրության մեջ, թերևս արքայական ցեղից լինի։ Մեր գուշակությունը հաստատում են նաև Աղվանքի աթոռակալները, քանզի Տեր Բաղդասարը այս՝ գյուղը և նրա մոտ գտնվող **Պեշիքլին** կոչում է **Տիգրանակերտ**։ Տեր Եսային սվազակ լեկերի պատմության մեջ գրում է, որ նրանք եկել են Վարանդի երկրից և տեղավորվել Տկոսանակերտում ու այնտեղից չվել Թարթառի ափերը⁸⁰։ Դրանից հազար տարի առաջ Աղվանից պատմության մեջ հիշվում է **Տգոնակերտ** հնչմամբ։ Վանքի երեքը եղել է Տեր Պետրոսը, որը մասնակցել է Եղիառ կաթողիկոսի ժողովին⁸¹։ Մեկ դար առաջ էլ նա հիշվում է Հեթակ կայսեր պատմության մեջ։ Մարաստանից գալով Աղվանք՝ նա կամենում էր անցնել Վրաստան։ Խոսքով արքայի հրամանով՝ նրա զորավարները այդ կողմերում կորեցին կայսեր ճապարհը։ Ծառ-Վարազը Այրարատի հյուսիսային կողմից

⁸⁰ Եսայի կթղ., անդ., շջ 38—39։

⁸¹ Հմմտ. Կղմկո., էջ 300։

«անցնում է Գարդման, նրա դեմ և բնակվում **Մյուս-Տիգրանակերտում**, նրա դիմաց: Ծախենը (հարավից) երեսուն հազարով հասնելով՝ բանակ է դնում Հերակլի թիկունքում, **Տիգրանակերտ ավանում**: Սրանք տեղավորվել էին այստեղ, իսկ նրանք՝ այստեղ, Հերակլի բանակն էլ ընկած էր երկուսի միջև: Հերակլը, երբ տեսավ, որ իրեն մեջ առան, հանկարծակի հարձակվեց իր թիկունքում գտնվող զորքի վրա, կոտորեց նրանց, գնաց Ծղուկք, իսկ ձմռանը լեռնակողմով անցավ Նախիջևանի դաշտը»⁸²: Ըստ Սեբեոս պատմիչի՝ երկու Տիգրանակերտներ կային, որոնցից մեկը, ինչպես ինձ թվում է, այս Տգրանակերտի տեղում էր, մյուսը՝ նրա վերջում, որը թերևս աշխարհացույցում նշված **Թռնոգյուր** գյուղն էր: Վերջինս առաջինից հեռու էր մեկ փարսախ: Եվ Հերակլի բանակը գտնվում էր այդ երկուսի միջև: Հերակլը պարսիկների դեմ այդ արշավանքում առաջնորդեց հերոսաբար նահատակվող քաջամարտիկների պայքարը, 624 թ.: Եվ պատմիչը մանրամասնորեն կատարում է այդ տեղերի քննությունը և դա ոչ թե սոսկ ազգային, այլ համաշխարհային պատմության համար:

150. Ծախուրազից հարավ-արևմուտք, Գարգարի ձախ ափին են գտնվում **Աղտամը, Քախըչ պաղը** (°), իսկ աջում՝ **Մորուզտուն, Աղզըլ-ճապելը, Նախիջևանը, Քեթյուքը** (գուցե՝ **Գետիկ**), որը հյուսիս-արևմուտքից կից է Ամարաս գետակին և Գարգարին: Այդ կցման անկյունում է՝ գտնվում **Հոճալը** կամ ուսերեն՝ **Խոճալիճսքայան**, որը նրանց հանգրվանն ու զորակայանն էր: Նրա հյուսիսում, գետակի աջ ափին, խառնարանին մոտիկ, գտնվում են **Ասկերան** ավանն ու ամրոցը՝ կառուցված Ծուշիի Փանա խանի կողմից: Նրա մոտ կա նաև մեկ այլ ամրոցի ավերակ: Դրանց միջոցով Խանը պահում էր կիրճի

⁸² Սեբեոս Եպիսկոպոս, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 92—93:

ճանապարհը, որը Շուշիից տանում է Ուտիի աշխարհը:

Այդտեղից դեպի արևմուտք է ընկած Ամարասի բուն հովիտը՝ կավճախառն կրային կազմությամբ: Գարգարի ափերին կան առանձին բլուրներ, որոնք, ինչպես ասում է Տյուպուրը, կարծես դուրս են ցցվել երկրի ծոցից: Գարգարի ընդարձակ հովտի արևելյան կողմին է միանում Աղվանքի դաշտավայրը: Եվ դաշտերի ու հովիտների թուր կողմերում, ըստ հիշյալ՝ ճանապարհորդի, կան հալոց մախնիների բնակավայրերի հետքեր և մեծամեծ գյուղերի մնացորդներ, գերեզմանների խոյան և տապանաքարերով, հիշատակություններով, որոնք վկայում են այդ վայրերի երբեմնի բարվոք վիճակի մասին:

Ասկերանի արևմտյան կողմում գտնվում է **Տաշ-պուլազ** գյուղը, որը թարգմանվում է Բարադրյուր: Դա ցույց է տալիս, որ այդտեղ, ինչպես նաև Ծափպուլազում, աղբյուր է բխել վիճախառն լեռներից, որոնք գետակի՝ հովտի ձախ պարիսպն են կազմում: Սրա մոտքի մոտ **Ղարաքեշիշ** գյուղն է, իսկ սրանից հարավ, գետակի մոտ՝ **Պատրիծիկը** (*): Գետակի աջ ափին, անկյան կողմում, Խոճալիճքից մոտավորապես մեկ փարսախ դեպի արևմուտք, գտնվում է **Մեխդուքենդ** գյուղը, որը կոչվում է Փանա խանի թոռան անունով: Այդ գյուղից հարավ գտնվում է **Պալուճան**: Սրանց միջև ընկած են լեռնաբլուրներ, որոնց ստորոտում, Մեխդուիճ մոտիկ, նշվում է **Ս. Հովհաննես** վանքը:

151. Գյուղի և վանքի տեղերում նշվում են ինձ համար անվանի **Ամարաս** ավանն ու վանքը, քանի որ աշխարհագրագետներից ու ճանապարհորդներից ոչ մեկը չի նշում այդ տեղերը, ոչ էլ Սարգիս Զալալյանը⁸³: Վերջինս միայն ասում է, որ այդ վայրերին մոտ են գտնվել **Մարասն** ու **Ամարասը**: Սա գյուղ է կոչ-

⁸³ Զալալյանց Սարգիս., անդ., հ. Ա, էջ 196:

վում մեր հին պատմիչներ Բուզանդի⁸⁴ և Խորենացու⁸⁵ կողմից, իսկ Մովսես Կաղանկատվացին⁸⁶ անվանում է գյուղաքաղաք: Նրանք վկայում են, որ այն պետք է գտնված լինի Փոքր Սյունիքում կամ Արցախի Հաբանդ գավառում: Առանց երկբայելու պետք է ասել, որ դա գավառի գլխավոր շենքերից մեկն էր, կարծեն Դիցավանը, քանի որ անունը գրվում է նաև Ասարազ, որ հիշեցնում է Արամազդին և հաստատում այն կարծիքը, որ այդ տեղ է գնացել մեր Սուրբ Լուսավորիչը՝ կոապաշտության խավարը հալածելու համար, կործանելով, ինչպես այլուր, այդպես էլ այդտեղի մեհյանները: Մեր պատմիչները թեև այդ բանը չեն հիշատակում, բայց ասում են, որ Ս. Լուսավորիչը, քարոզելով Աղվանքում, այնտեղ «եկեղեցու հիմք է գցում և շինարարության բանվորներ կարգելով՝ ինքը վերադառնում է Հայաստան»⁸⁷: Եվ հետո գալով նրա թոռ սուրբ Գրիգորիսը՝ ավարտում է եկեղեցին և օրհնում, որը կրկին մայր եկեղեցի է դառնում Աղվանքի լուսավորության համար Գիսի եկեղեցուց հետո: Եվ Մազքթաց աշխարհի մանուկ հայրապետի նահատակությունից հետո «աշակերտները նրան վերցրին, բերին Ամարաս գյուղաքաղաքը և թաղեցին եկեղեցուն մոտիկ, բեմի հյուսիսային կողմում. այնտեղ դրին նաև Զաքարիայի արյունը ապակյա մի շշի մեջ, ինչպես նաև Պանդալոնի նշխարքները: Եվ երկուսի շիշն էլ դրեցին Գրիգորիսի սուրբ նշխարքների հետ, իսկ իրենք փախան և գնացին Հայաստան...: Այդ տեղը նշան չարեցին, որպեսզի ուրիշները նշխարքները չգողանային, կամ էլ՝

⁸⁴ Փ. Բուզանդ, էջ 26:

⁸⁵ Մ. Խորենացի, էջ 280:

⁸⁶ Կղնկտ., էջ 39:

⁸⁷ Անդ, էջ 35:

⁸⁸ Անդ, էջ 39:

ավազակների երկյուղից շտապելուց: Եվ շատ տարիներ անց-
նելու պատճառով այդ տեղը անհայտ էր դարձել մոտավորա-
պես 150 տարի: Դրանից հետո Վաչագան արքան, երբ սկսեց
փնտրել երանելիների նշխարքները, եկավ Ամարասի վանքը,
որը վաղուց էր կառուցված, և առաջներում այնտեղ եպիսկո-
պոսներ էին նստում: Իսկ այդ ժամանակ միայն վաներեց էր
նստում,⁸⁹ որն արքային ասում է, թե «Եկեղեցու մոտ շատ գե-
րեզմաններ կան, քանի որ ավազակների ժամանակներից և ե-
կեղեցու մեծագույն ճիմնարկումից հետո ոչ ոք չկարողացավ
շինել»⁹⁰: Եվ թագավորը ամբողջ երկրին հրաման տվեց ապա-
վինել աղոթքներին, փորել եկեղեցու հողը, եկեղեցի բերել Սուրբ
Գրիգոր Լուսավորչի ու Հովհաննյանց կույսերի նշխարքների
մի մասը և դնել այնտեղ, նոր հայտնաբերված սուրբ Զաքա-
րիայի և Պանդալյոնի հանգստարանում: Եվ տեսիլքով հայտնի
դարձավ սրբի սուրբ մարմնի հանգչելու տեղը, այն է՝ եկեղե-
ցու արևելյան կողմում, և «հրամայեց փորել այդ տեղը: Նրա
մոտ կար մի փոքրիկ բլրիկ, վրան՝ խաչ: Երանելին բարձրանա-
լով բլուրը՝ կանգնել էր խաչի մոտ»⁹⁰: Երբ տեսիլքը հայտնեցին
արքային, արքունիքի և եպիսկոպոսների մեծ բազմությամբ
նա գալիս է Ամարաս, և որովհետև «անձրևներից մեծ հոսանք-
ներ էին առաջացել, քանի որ գարուն էր, ճանապարհը շա-
տերի կողմից տորոպելու պատճառով դժվարանցելի էր դարձել
շտապողների համար: Ուրեմն, այնտեղ ի՞նչ պետք է աներ քրիս-
տոնյասերը արքան. նա եկեղեցու սպասավորներին թույլ չի տա-
լիս իջնել երիվարներից և հանդարտ շրջելով եպիսկոպոսների
բանակի մեջ, հրամայում էր ըստ կարգի գնալ, և իրեն թվում էր,
թե ծաղիկների կամ փափուկ՝ քանի վրայով է քայլում և ոչ թե
կավի կամ տիղմի վրայով: Արքան սպասավորում էր մեծ սրբի

⁸⁹ Անդ, էջ 65:

⁹⁰ Անդ, էջ 71:

ղեսպակին (պատգարակին), և այդպիսով զանազան լեզուների
 բազմությունից, տեսակ-տեսակ ձայներից և պեսպես պայծա-
 ռակերպություններից, ինչպես լուսավոր ամպ, ծածկվում էր
 երկիրը: Բացի այդ, պատգարակը, շքեղացած աստղազարդ
 փառքով, գնում էր քրիստոնյաների բանակի միջով: Եվ էրբ
 մոտեցան գյուղին, տեսան, որ մի փոքրիկ գետ է անցնում գյու-
 ղի միջով, և գետի վրա պատրաստված է մի կամուրջ: Քրիստո-
 նի և նրա սրբերի համար անհագ սիրաբորբոք փափագով վա-
 րած արքան արքայական հագուստով անձամբ իջնելով՝ անց-
 նում է՝ գետով՝ ոչ ոքի թույլ չտալով սպասավորելու իրեն: Եվ
 հասնելով նշանակված տեղը՝ երկարատև ծնրադրություն է
 կատարում բոլորի առաջ: Այնտեղ խփելով արքայական վրանը՝
 հրամայում է զգուշ լինել մինչև՝ առավոտ: Այդ ժամանակ Ա-
 մարասում եպիսկոպոս չկար, և արքան գյուղի քահանային և
 ծերերին հարցնում է, թե նրանք այդ տեղում ինչ-որ նշան տե-
 սել են, թե ոչ: Եվ նրանք պատմում են այն, ինչ որ լսել էին
 Հոր ճգնավորից: ... Բազում անգամ գալով՝ նա կատարում էր
 սուրբ Գրիգորիսի հիշատակը և շատերի առաջ երիցս կրկնում
 էր. «Աղվանից աշխարհում հավատացյալ թագավոր է հառնելու
 և փնտրելու է սուրբ Գրիգորիսի նշխարքների տեղը: Դարձյալ
 երբ մեզ հյուր եկավ մի ճգնավոր, ընդունեցինք նրան այնպես,
 ինչպես ընդունված է եղբայրների համար: Եվ նա, բարձրանա-
 լով այդ տեղը, քնեց: Քնից արթնանալով՝ նա տեղնուտեղը վեր-
 ցնում է խաչը և դնում այդ տեղը ու պատվիրում, որպեսզի
 ոչ ոք չվերցնի խաչը, այլ ավելի մեծ խաչ կանգնեցնի և առա-
 վոտից մինչև իրիկուն անխափան աղոթք անի խնկարկությանը,
 որովհետև այդ տեղում մեծ հրաշագործություններ են տես-
 նում»⁹¹:

⁹¹ Ամդ, էջ 73—76:

Արանք և սրանց մահն բաներն իմանալով՝ արքան դարձ-
յալ աղոթում է ու քարոզում: Ինքը՝ «առաքինասեր թագավորը,
թեևրը քշտելով բահն առնում է ձեռքը և եռանդուն կերպով
փորում՝ իսկ բարեսեր թագուհին, թագավորական հագուստով
պեղում էր հողի մեջ: Նրանց հետ մահ եպիսկոպոսները, քա-
համաները, մախարարները և մախարարների կանայք մեծ հո-
ծալությամբ հագուստներով կրում էին փորած հողը: Եվ այն
ժամանակ շատ խորը փորելով՝ շեղվում են դեպի հյուսիսային
կողմը, և նշխարքները մնում են արևելյան կողմում: Արքան՝ և
ամբողջ ժողովուրդը մեծ տրտմության մեջ են ընկնում, մինչև
որ զոջացած թագավորը մտնում և հոգս է աճում ամբողջ ժողո-
վրդի հետ միասին: Արքան, այնուհետև քաջալերելով ճըշ-
մարիտ հավատով, ասում է, որ անսխալ պետք է լինի ամենա-
կալ Աստծու խոսքը, և նրա անունով անմիջապես պետք է գըտ-
նըվի փնտրվածը. ես հաստատ գիտեմ, որ մա մեզ ամոթով չի
թողնի: Այն ժամանակ արքան հրամայեց, որպեսզի հետո
բերված սրբերին դնեն փորածի առաջ և սկսեն փորել արևելյան
կողմը. փորողները հանդիպեցին ցանկալի գանձին: Արքան և
նրա հետ եղողները համակվում են հավերժական հրճվանքով,
և բազմությանը հայտնի է դառնում նշխարքների գյուտը: Եվ
ամբողջ մոտենալով կուռքին՝ հարվածում է վրանին ու վարա-
գույրին, մինչև որ դուրս է գալիս թագավորը և հազիվ կարողա-
նում է հանդարտեցնել ամբոխին: Իսկ գերեզմանը և երևելի
նշխարքները բացելիս անսովոր մի անուշ հոտ էր բուրում, որից
բոլորը մի քանի ժամ թմրության մեջ են ընկնում՝ չզգալով խըն-
կարկության հոտը: Դրա վրա սաստիկ հիացան արքան և ներ-
կա եղողները, և բոլորը միահամուռ փառք էին տալիս այդպի-
սի վսեմ քարիք տվողին:

«Արի՛ գերեզմանի մոտ, հողի վրա, մտել էր թագավորը
և հրամայում էր արքունական զանազան սպասավորություններ

կատարել և կողովը դնելով իր ծնկների վրա՝ մեծ երկյուղով սպասավորում էր սրբերին: Քահանաները հանում էին ճշարքները և լցնում կողովի մեջ, որը թագավորը պահել էր իր գրկում: Նշխարքների մոտ գտան ապակյա երկու շիշ, որոնցից մեկը լցված էր Զաքարիայի արյամբ, իսկ մյուսը՝ Պանդայյոնի ճշխարքներով: Եվ երբ բոլորը դուրս եմ հանում, ամբողջ բազմությունը ողջունում է առավոտից մինչև երեկո: Արքան, կընքելով արքունական մատանով, հրամայում է մեծ զգուշությամբ պահել մինչև առավոտ: Նույն Գրիգորիսի գերեզմանոցում գտնում են և մեկ այլ ապակյա շիշ՝ լցված խմիչքով: Այն վերցնելով՝ արքան է՛լ առավել գոհ է մնում Աստծուց՝ իրենց այդ ամենահաջող բարիքը տալու համար: Հաջորդ օրը արքան հրաման է տալիս ամբողջ երկրում դրոշակ պարզել, բերել սուրբ սեղանի ոսկեղեն ափսեմ և քաղցր գինով՝ ճշխարքները լվանալ ու շարել՝ ըստ պայծառության: Արքան հրամայում է ամեն մի եպիսկոպոսի տալ ինչ-որ մաս՝ իրենց վիճակներում բաշխելու համար: Իսկ ճշխարքների մեծ մասը հրամայում է թողնել Ամարասում, իսկ մնացածը, կնքելով թագավորական կնիքով, ինքն էր պահում՝ մեծ զգուշությամբ ու զանազան սպասավորներով սպասավորելով: Արքան հրամայում է գերեզմանի վրա մատուռի հիմք գցել և շինարարությունը շտապ ավարտել, իսկ մատուռն էլ անվանակոչել Սուրբ Գրիգորիս: Հետո ամբողջ բանակը մեկնում է սուրբ պաշտոնյաների հետ՝ առաջին կարգադրության համաձայն»⁹²: Եվ մեծ հանդիսավորությամբ բարձելով ճշխարքների մեծ մասը՝ թագավորը բերում է Ուտիք, իր սեփական Դուտական գյուղը, որտեղ շինում է մատուռ՝ սուրբ Պանդայյոնի անունով և տեղավորում ճշխարքները, իսկ մի մասն էլ տեղավորում է այլ դաստակերտում, որը

⁹² Անդ, էջ 80—88:

կառուցել՝ էր իր ԽճՀԻԿ կոչված աղջկա համար, մի մասն էլ միշտ ման էր ածում իր հետ բանակում՝ տարվա մեջ երկու անգամ, երեքական ժամ կատարելով սրբերի տոնը: Նրա հիշատակը մինչև օյս կատարում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ այն անվանելով Աղվանից կաթողիկոս Գրիգորիսի նշխարքների գյուտի տոն, որը կատարվում է մեհեկան ամսի 28-ին, այն է՝ մարտի 6-ին: Այս դեպքը մանրամասնորեն ներկայացնում է Աղվանից պատմիչը՝ ճշգրտելով այն ժամանակակից տվյալներով. դա ընդօրինակել են նաև հին ճառընտիրները: Տփլիսից և Շուշիից ապրիլի 23-ին գրում են, որ Ամարասում են գտնվում Սուրբ Գրիգորիսի նշխարքները: Թեմի արքեպիսկոպոս Գևորգը վարդապետ Գևորգ Արամյանին ուղարկում է նորոգելու եկեղեցին, որի բեմի առջև պեղելով՝ գտնում են օրորոցաձև կափարիչով փմափոր գերեզման՝ Սուրբ Գրիգորիսի մարմինը, վրան գրված հայ և ասորի գրերով: Բայց երբ բացում են, տեսնում են, որ այնտեղ միայն հող կա: Հետո փոսի հյուսիսային կողմի պատը պեղելով, գտնում են նրան նման մի այլ շիրիմ և նրանում նշխարքները: Շուշիից 2000 մարդկանց հետ միասին գալիս է արքեպիսկոպոսը, վերցնում է գլուխը և դնում գերեզմանի վրա, արծաթյա ափսեի մեջ, որպես հարգանքի նշան: Այնուհետև տանում են Շուշի և երեքական օր դնում են քաղաքի բոլոր եկեղեցիներում, որպես հարգանքի նշան, իսկ հավատացյալները պատվի համար խումբ-խումբ հաճախում են եկեղեցի: Արքեպիսկոպոսը դադարեցնում է եկեղեցու շինարարությունը, մինչև Էջմիածնի ժողովից պատվեր ստանալը: Թվում է, որ առաջին գերեզմանը դիտավորյալ կերպով դատարկ է թողնվել՝ գերեզման թաղանոդներին խաբելու համար. ինչպես

որ ասում են, թե Լեւկթենտը բացել է և ոչինչ չի տեսել⁸⁸:

152. Նշխարքների գյուտից հետո եպիսկոպոսները կրկին հաստատվել են Ամարասում, որոնցից՝ հիշատակվում են՝

Գառնիկ.

Հոռմակ՝ Զ դարի կեսից հետո.

Մխիթար՝ Զ դարի վերջին.

Սերոբ.

Հովհանն՝ Է դարի կեսին.

Սահակ՝ Ը դարի սկզբում.

Հովսեփ՝ ապա կաթողիկոս, 746—762 թթ.

Սարգիս և Վրթաման՝ ԺԳ (դարի) կեսին.

Ներսես՝ 1282:

Բարսեղ՝ 1730:

Սերովբեի ժամանակը ստույգ հայտնի չէ, նրա մասին միայն ասվում է, թե նշխարքները Հոռմեական կայսրությունից քերել է Ամարաս, որոնց հետ մաս Լուսավորչի աջը: Ամարասը հնում եղել է ոչ միայն Աղվանքի եպիսկոպոսանիստ վայրը, այլև կաթողիկոսական աթոռի նստավայրը, բայց թե երբ, չգիտենք: ԺԳ դարի վերջին Բաթու խանը ուղարկեց Տարսայիջի որդի Զալալին «այլ մոնղոլ տղամարդկանց հետ Աղվանից մեծ աթոռ Ամարաս, որը նրանց կաթողիկոսների հին աթոռն էր, և այնտեղ տանել տվեց սուրբ Գրիգորիսի գավազանը..., քանի որ նրա գերեզմանը այնտեղ էր գտնվում, ուրեմն գավազանն էլ մնալու էր նույն եկեղեցում: Նրա հետ տարան մասնաձևի աստվածահրաշ խաչը, որը հին ժամանակներից այնտեղ էր՝ ամբողջապես պատրաստված ոսկուց և զարդարված լզ (36) թանկարժեք քարերով: Սա մատնվեց նույն թեմի մի լիորբ ու

⁸⁸ Այս վերջին մանրամասնությունների աղբյուրը Ալիշանը նշում է իր ձեռագիր օրինակում՝ «Մատիս, լրագիր, 5 հունվարի, 1856, թիվ 332»:

սնճգամ քահանայի կողմից: Եվ քանի որ այնտեղ էր գտնվում Հունաց կայսեր դուստր Դեապիման, որին կնության էր վերցրել Ասպաղա խանը, և նա սեն էր իր որդեգիր Բատին, նա մեծ թախանձանքով խնդրեց խաչն ու գավազանը և ուղարկեց թագավորական Լուստանդնուպոլիս քաղաքը՝ Այս ձևով կողոպտվեց Աղվանից աշխարհը՝ զրկվելով պատվական ու աստվածային զանձից»⁸⁴:

Այժմ Ամարաս հին եկեղեցին կանգուն է երկրի խորքում, գմբեթաձև կաթողիկեով, որը հետագա դդ. նորոգեց ու սեմալկազարդ պարսպով պատեց Մելիք Ծահնագարը՝ ըստ՝ Սարգիս Զալալյանի⁸⁵: Բայց թե այնտեղ կա՞ն արձանագրություններ կամ այլ հնություններ, նա և ուրիշները՝ չեն հիշում. դրա հետ միաժամանակ անծանոթ են մնում նաև սահմանները:

153. Այս վիճակի մեջ նախապես գրածի համաձայն կան նաև այլ տեղեր՝ հին եկեղեցիներով, որոնք հիշատակվում են այս կողմերի արձանագրությունները հավաքողների կողմից, սակայն առանց ստույգ կերպով ցույց տալու տեղերը: Դրանցից են Հավաքտիկը, որտեղ եկեղեցի է կառուցվել 1233 թ., ինչպես ցույց է տալիս արձանագրությունը. «ՈԶԲ թվին, Վախտանգի և նրա կին Մամքանի որդի Հասանի իշխանության ժամանակ, ես՝ Հովհաննես քահանաս, Տեր Գրիգորիսի քրոջ՝ որդին և Գեորգիի եղբորորդին և այլ միաբաններ շինեցինք այս սուրբ եկեղեցին՝ մեր հոգիների փրկության համար»։ Կա նաև մի այլ տապանագիր արձանագրություն. «Ես՝ Աղաբեկի որդի Զաքարյուս, իմ հոր՝ Սմբատի տապանի վրա խաչ կանգնեցրի ՈՂԳ». դրանում հայրանվան վրիպակ կա:

⁸⁴ Ստ. Շորեյան, անդ, հ. Բ, էջ 218:

⁸⁵ Հմմտ. Զալալյանց Սարգիս, անդ, հ. Ա, էջ 196:

Բառավա-ձոր. այնտեղ կա 1181 թ. կառուցված հնագույն եկեղեցի. «Ո՛ւ թվին, Սմբատի իշխանության ժամանակ, ես՝ Բարսեղ երեցս, Սարգիսը և մեր եղբայրները ժողովրդի հետ միասին շինեցինք այս եկեղեցին, ջուր բերեցինք. ովքեր կերկրպագեն, թող մեզ հիշեն իրենց աղոթքներում»։ Ջուր բերելը ցույց է տալիս, որ եկեղեցու մոտ վանք է եղել։ Իսկ մի այլ արձանագրությունից պարզ է դառնում, որ այն եղել է Գանձասարին մոտիկ, որովհետև դրանում ասված է. «Ես՝ Վասակի դուստր, Վախտանգի որդի Զաքարեի ամուսին Խորիշահս, դարձա՛ սուրբ միաբանության անդամ, գնեցի մատաղ ու գիրք և տվեցի սուրբ Գանձասարին, միաբանները Աստվածածնի փոխման տոնին երկուժամյա պատարագ կատարեցին. ով խափանի, թող դատվի Աստծու կողմից»։

Թողան. ավերակ գյուղ է Խաչենի գաղիթափ ձորում։ Այնտեղ կա կիսակործան քարաշեն մի եկեղեցի և ոչ հին, 1647 թ. արձանագրություն. «Աստծու կամքով ես՝ Տեր Եղիաս, շինեցի այս սուրբ եկեղեցին՝ Առտի բեգի որդի, իմ կողակից Բեղադինի հոգու հիշատակի համար, Շահբազի ժամանակ, Մութուղլի խան Թաղուլդի իշխանության օրոք և Գանձասարի կաթողիկոս Տեր Գրիգորիսի կաթողիկոսության ժամանակ, ՌՂԶ թվին»։

Պտկեսի բերք. բարձր վայրում կառուցված, գմբեթադեկեղեցու վիստատեղի է, նորոգված ոմն Հովհաննես վարդապետի կողմից, որը թողել է իր անունը՝ դրոշմված բեմի վրա։ Նրա կողքին է գտնվում ոմն սուրբ Գեորգիի տապանը, և սյան վրա գրված է. «Ղուկաս վարդապետը Հայոց ՌՄԼ (1781) թվին շինեց մի ջրաղաց և տվեց սրան որպես հիշատակ»։

ՊԱՐԶԿԱՆՔ ԳԱՎԱՌԸ—ՇՈՒՇԻԻ ՎԻՃԱԿԸ

154. Արցախի վերջին, փոքրիշատե ծանոթ գավառը **Պարծկանքը** կամ **Պարզկանքն** է, այն է՝ **Պանծկանքը**, որը գրչագրական այլ ձևով հայտնի է **Պազկանք**, **Պածկանք** և այլ անուններով: Ծառ պատմիչներ մշտն են, որ այն պետք է ընկած լինի Ամարասից հարավ: Բաղանիկեցիների՝ դեպի Հաբանդ, Ամարաս, Պարզկանք, Մախանք արշավանքների մասին ստուգապատում հին պատմիչ Կաղանկատվացին Սուրբ Գրիգորիսի մշխարքների գյուտի պատմության մեջ մեջբերում է Հովր ճրգնավորի մասին ծերերից ավանդածը Վաչագան արքային: Այնտեղ գավառի աշակերտության սկիզբն է դրվում հանուն Քրիստոսի, որտեղ պատմվում է. «Ունճ ճգնավոր այր Հովբը, հույժ առաքինի վարքով ապրելով աշխարհում, որն ուներ մաս առաքելական շնորհ, իր բազմաջան աշխատանքով, Քրիստոսի նկատմամբ հավատով և սիրով Արցախ աշխարհի մի մեծ մասը՝ Պարզկանք կոչվածը, ետ է դարձնում մոչորության ճանապարհից՝ դիվանվեր անտի պաշտամունքից փոխարկելով Քրիստոսի ծանոթ աստվածությանը...: Ծառ անգամ գալով՝ սա կատարում է սուրբ Գրիգորիսի հիշատակը»⁹⁶: Հայտնի է, որ Պարզկանքը սահմանակից էր Ամարասին, իսկ Հովբի վարդապետության ժամանակը թվում է ավելի առաջ, քան Սուրբ Մեսրոպի գալուստը:

Պատմիչները այս գավառում ոչ մի շեն կամ վայր չեն մշտն, որի հետևանքով բացի Ամարասի հետ սահմանակցությունից, հնարավոր չէ այն քննել հանգամանորեն: Թվում է, որ սա ընկած էր Գարգարի ձորահովտում, սկսած նրա ակունքից վերջացրած Գարգարացիների դաշտաբերանով, որտեղ և մենք

⁹⁶ Կղնկտ., էջ 75:

ենք հաստում վիճակիս աշխարհագրության սահմանը: Հարավային կողմից իր մեջ առնելով արևելյան վտակների բոլոր հովիտները՝ հասնում է մինչև գետերի ջրբաժանը, որոնք հարավից հոսում են դեպի Երասխ: Եվ ըստ այդմ նրա մեջ է մըտնում նաև այժմյան մեծ Վարանդին գավառի հյուսիսային ծայրը, որը մենք համարում ենք Շուշիի բուն վիճակը (գավառը)՝ մեծ քաղաքի անունով, որը ընկած է Չըրքերդի, Վարանդինի և Զանգեզուրի սահմանամիջում, և այն ամբողջ Առանի, այսինքն՝ Լարաբադի գլուխն է:

155. Մեծ և՛ ամուր **Շուշա** կամ **Շուշի** քաղաքը գտնվում է Գարգարի գետի ձախ կողմում, առանձնացած սարահարթում, կավախառն ու պատուված անառիկ ու անմատույց ժայռոտ տեղում, բացի քաղաքի երևանյան և գանձակյան կողմերից, որոնք էլ ամրացված են աշտարակներով: Բարձրավանդակի շրջագիծը մոտավորապես երկու մղոն է, որի փոքր մասում բերդաքաղաքն է, իսկ մեծագույն մասում՝ գերեզմաններն ու պարտեզները:

Անցյալ դարի երկրորդ կեսին ինչ-որ գյուղ էլ է հիշատակվում Շուշիի տեղում, որի կոնկրետ տեղը չի նշվում: Չեմ կարող կարծել, թե այն Վարդանի⁹⁷ կողմից հիշատակված **Շուշուաղը** լինի, Խաչենի կողմերում եղածը, որին տիրեց Փատլունը: Իսկ իր Ծահի կողմից հալածված թաթարները, երբ Խորասանից՝ վերադառնում են այստեղ, ունենում են Ծեվանշիր տոհմից Փանախան անունով մի թուրքսեն առաջնորդ: Սա տիրեց Լարաբադին, նվաճելով երկրի հինգ մելիքներին և իր աթոռը հաստատեց նաև Պալադ, ապա Ծահպուլագ վայրերում, այնուհետև 1789 թ. այդ տեղը գրավեց իր աներ Ծահնագար Մե-

⁹⁷ Վարդան Վարդապետ, անդ, էջ 100:

լիքից և կառուցեց ամուր բերդը՝ պարսիկներից պաշտպանվելու համար: Բերդը կոչվեց **Փենապատ**, որտեղ դրամ կտրեց իր անունով, որը մինչև օրս գործում է: Երբ այստեղ տեղափոխեց Շուշի գյուղի բնակիչներին, բնակավայրն ստացավ նրանց գյուղի անունը (Շուշի): 1790 թ. Փանային հաջորդեց նրա որդի Իբրահիմը, որի օրոք պարսից Աղա Մահմուդ Ծահը 1794 և 1795 թթ. երեք անգամ պաշարեց քաղաքը, երրորդ պաշարման ժամանակ քաղաքը սովի մատնելով՝ գրավեց այն և դաժանորեն վարվեց բնակիչների հետ: Այդ պատճառով ինքը չարաչար սպանվեց, և քաղաքը նորից անցավ Իբրահիմին: Նա 1805 թ. ռուսների պաշտպանությամբ մտավ քաղաք և նահանջելիս զրկվեց կյանքից: Նրան հաջորդեց իր որդին՝ Մեխդի Խուլին: Նա ևս կամեցավ քաղաքը հանձնել պարսիկներին: Ռուսները 1822 թ. ամբողջությամբ գրավեցին Շուշին ու Ղարաբաղը՝ զորապետ Մադաթով Հայկազնի հրամանատարությամբ և՛ դարձրին տաճկական երեք կուսակալությունների՝ Ղարաբաղի, Ծեքեի և Ծամախի մայրաքաղաքը:

Քաղաքաբերդը ի բնե ամուր էր, որն է՛լ ավելի ամրացել էր խոր կիրճով: Կիրճը նրա ներքևի կողմում է, իսկ հարավային կողմում քարակտուր բլուրն է՝ երկու քարձր աշտարակաձև բարձունքներով: Քաղաքի ներքին կերպարանքը գորշ ու տգեղ է. նրանում չկան գեղեցիկ շենքեր, փողոցները մեղ են ու ցեխոտ՝ կավոտ ու կրոտ հողերի ու դարուփոս տեղերի պատճառով: Տները հողով են շաղախված, մասամբ քարաշեն են, մի շուկա ունի՝ քարով ու աղյուսով շինված: Քաղաքը ջրակարոտ է, որովհետև ջուրը փողրակով բերված է Երևանի կողմը:

Քաղաքում հայկական երկու եկեղեցի կա՝ Ագուլեցոց և Ղազանչեցոց կոչվածները, կան նաև երկու փոքր, անշուք եկեղեցի, հայկական մի շուկա՝ փոքր կրպակներով: Քաղաքն ունի նաև տպարան, որտեղ լույս են տեսել մատյաններ (գրքեր) արք-

եպիսկոպոս և մետրոպոլիտ, բանասեր Տեր Բաղդասարի ջանքերով: Նա իր աթոռը հաստատեց այստեղ՝ դառնալով Աղվանքի կաթողիկոսների հաջորդը: Նրա թեմերն են՝ Ղարաբաղն ու Շրվանը: Շուշիի վարժարանում* գործում է Պաղիլեի ավետարանական ընկերությունը: 1864 թ. քաղաքի հայազգի տիկնանց ջանքերով բացվեց աղջիկների վարժարանը, որն անվանվեց **Ղարաբաղի Սուրբ Մարիամի Օրիորդաց ուսումնարան**: Շուշիում են նստում մեծ ուսաց զորավարը և Ղարաբաղ գավառի քաղաքական պաշտոնյաները:

Քաղաքի բնակիչները հայեր են և թաթարներ, մոտավորապես 7000 հոգի՝ բոլորն էլ ճարտար ու զվարթ մարդիկ: Քաղաքի կլիման այնքան էլ առողջարար չէ՝ ամառվա տոթի և ձմեռվա ձյան ու ցրտի պատճառով, որովհետև այն Կասպից ծովի մակարդակից բարձր է մոտավորապես 4000 մ: Բայց իր բարձրության ու շրջակայքում եղած անտառների շնորհիվ Կովկասի լեռների, արցախյան ու Սյունյաց գավառների համար ստեղծում է գեղեցիկ ու հաճելի տեսարան:

Քաղաքի շրջակայքը գեղեցիկ դիրք ունի, անտառապատ է, տարածքը՝ ապառաժոտ, գույնզգույն քարերով ու դեղնաապիտակ կրահողով ծածկված: Գարգարի աջից, քաղաքից մոտ մեկ ժամվա հեռավորության վրա **Շուշաքենդ** գյուղն է, որը հին Շուշի գյուղն է, ուր, գետի ափին, կան ջրաղացներ:

156. Շուշիի բոլորակաձև հովիտը, ըստ Տյուպուսի երկրաբանական հետազոտության, նման է երկրամուղ զորության կողմից բարձրացված մի բաժակի՝ կրային կազմությամբ, ընդմիջարկված հրաբխային զանգվածներով, որոնց մեծամեծ կտորները ընկած են այս ու այն կողմն:

Այդ վիճակում (գաղառում) նշված գյուղերն են՝ Գարգարի

* Որպես աղբյուր Ալիշանը նշում է՝ «Մեղու, Իթ, 70»:

ձախ կողմից, քաղաքի հարավ-արևմուտքում՝ **Տաշ-ալդը**, որը ընկած է այն քարալեռան ներքևում, որի վրա քաղաքն է: Սրա արևմտյան կողմում **Ջարիստրն** է, որը հիշատակված է՝ Աղվանից թեմի Քարտիշ վանքի արձանագրությունում. «Ջարիստրը յոր գետով», թեև այդտեղի գետը Գարգարն է: Սրա մուտքից ավելի հեռու և Հաքարի գետը (որը Ջարիստրի հետ հիշատակվում է նույն արձանագրությունում)՝ ու Սյունյաց լեռան անջըրպետի ստորոտում գտնվում է **Լիսոգորսկի** (°) գյուղավանը, որը համարվում է ուսական պահապան գործի գորանիստը: Այդ գյուղավանի՝ մոտ է գտնվում Գարգարի ակունքը:

Իսկ Շուշիից հյուսիս-արևելք գտնվում են՝ **Խալիֆալը**, **Կոպեղիքենդը**, **Քերքենանը**, **Խանքենդը**, **Պեկլյուլը**, **Խանիծակը**՝ Գարգարի մի վտակի միացման տեղում: Թվում է, որ սա նույն **Խանձիկ** գյուղն է, որտեղից էր Աղվանից կաթողիկոս Պետրոսը, ԺԷ դարի կեսին: Սրանից հյուսիս ընկած են **Պալըճան** և **Մեխուքենդը**, որի մասին խոսք եղավ Ամարասի ժամանակ:

157. Գարգարի աջից, Շուշիից հարավ, գյուղեր չեն նշվում, այլ Շուշաքենդից ավելի հյուսիս-արևելք նշվում են **Տադտանը**, **Տաշքենդը**, **Էղլիսը**, **Խանտաղը**՝ Գարգարի մոտ: Սրա վերջում՝ **Թիրավը**, հյուսիսից՝ **Ապտալը**, սրա հյուսիսային ելքի մոտ՝ **Առանձամյունը** (°), **Բիրճամալը**՝ որի վերջից դեպի հյուսիս, Գարգարի մոտ, Նախչաղվանն է:

Թիրավի վերջում ձգվում են լեռնաշղթաներ՝ Գարգարի վտակները անջրպետելով **Քանաշին** (°) գետից, որը իջնում է այդ լեռներից: Այդ գետը հոսում է դեպի արևելք, բայց ինձ անծանոթ են նրա ընթացքն ու գետաբերանը: Լեռների, գետի ու Գարգարի հովտի միջև նշվում են վերոգրյալ գյուղերը՝ **Թաքիրը**, **Էնջու-քենդը**, **Ղարաքենդը**, **Կյուլպաշը** և այլն:

158. Մինչև Վարանդին գավառին անցնելը նշանակենք վերջին ուսումնասիրողների կողմից հիշված գյուղերը, որոնք

Խաչենի կողմերում են գտնվում: Դրանք են՝ Սեյկյուտու գյուղը, որտեղից էին կաթողիկոսներ Թումասսն ու Առաքելը, Ժէ դարի վերջին, Աշխաբը, որտեղից էր Սարգիս կաթողիկոսը, ԺԶ դարի սկզբին*, Պումը, որտեղից էր Փիլիպոս կաթողիկոսը, ԺԶ դարի երկրորդ կեսին:

Դրանցից նշանավոր է Ծալեթը, որտեղ կա անվանի մեհաստան, ուր եղել է Աղվանքի կաթողիկոսների աթոռը, Ժէ դարում: Կաթողիկոսներից մի քանիսի գերեզմանները կան այնտեղ, ինչպես որ երևում է արձանագրություններից.

Ա. «Հանուն Աստծու ես՝ Կարապետ կաթողիկոսս, ՊԿ թվին շինեցի այս եկեղեցին՝ իմ հոգու հիշատակի համար. ձեր աղոթքներում հիշեցե՛ք»:

Բ. «ՋԻԴ թվին մահացալ Թովմա կաթողիկոսը»:

Գ «ԶԿ թվին ես՝ Տեր Առաքյալ կաթողիկոսս, պարոն Հասան Բեկից վերստին գնեցի եկեղեցու դռան խոտհարքը (դուրող), գո (3000) թանկայի ծախս արի և տվեցի, մեր հոգու փրկության համար՝ նաև այս սուրբ Աստվածածինը: Ով հակառակվի և ջանա խել կամ ծախել աս հանդը, Կայենի բաժինը կստանա: Արդ, ես՝ Տեր Առաքել կաթողիկոսս, կանգնեցրի խաչ և նորոգեցի եկեղեցու գլուխը Տեր Թովմա կաթողիկոսի հոգու համար. ով նստի աթոռին, թող Զատկին մեկ պատարագ անի. ԶԻԹ թ.»:

Դ. «Թիվ ՊԿ. Կարապետ կաթողիկոսի և
Երիցս վեհերի տապանն այս է,
Որոնք օծվել են Աղվանից տանը,

* Այիշանն իր ձեռագրում մի հատված ջնջել է, այն է՝ «Արջաձոր կամ Առաջաձոր, որտեղից Դավիթ կաթողիկոսն էր, ԺԶ դարի կեսին, որտեղ 1458 թ. գրված մի ավետեքան է հիշում Տեր Բաղդասար Հասան Զալալյանը»:

Թափառել աչստեղ, իսկ այն ժամանակվանից
Ամփոփված են այս տապանի ներսում
Եվ միշտ սպասում են ամեն ինչի ստեղծողին՝
Ակնկալելով /պտղալից կյանքին»:

Վանքի մոտ ջրի ափին, **Ներքին-Ընծում** ագարակում, խա-
չարձան է տնկած, և վրան գրած. «Ես՝ Հարբելս (կամ Հարքե-
լըս), կանգնեցրի այս խաչը իմ քրոջորդի Դեղի համար. ձեր
աղոթքներում հիշեցե՛ք Դեղին և Գրիգորին. ...Խթ.». թվականի
առաջին տառը ջնջված է: Սա թերևս վերոգրյալ Էնջու գյուղն
է, ըստ թուրքական հնչման: Դրան մոտիկ մեմաստան կա:

Մեր նախնիների կողմից հիշատակված **Գողթագրակ** տեղը
այս կողմերում պետք է լինի, որովհետև Վիրո կաթողիկոսը,
հոգևորի ասպատակությունից խույս տալով Պարսկաստանից,
այստեղ է ընկել և այստեղից դուրս գալով ու մեծ արագու-
թյամբ ընթանալով՝ մի գիշերում կամ օրում հասել **Զարաթեթյ»:**

ՎԱՐԱՆԴԻՆ—ՏՈՒՋԱԽՈ (ԴԻՋԱԿ)

159. Արցախի ամբողջ հարավային կողմը այժմ կոչվում
է **Վարանդին**, որը մի լայնածավալ գավառ է, ընկած Մեղրիի,
Ջանգեզուրի, Չլիբերդի, Քեպերլինի, Ղարաբաղի գավառների
և Երասխ գետի պարսից սահմանի միջև: Նրա ափերը, ինչպես
նաև Քեպերլինի արևելյան սահմանները դաշտավայրեր են,
իսկ արևմտյան և հյուսիսային կողմերը՝ լեռնավայր, ինչպես
որ Արցախի մյուս մասերը:

Այժմ քարտեզների վրա լեռներից մշվում են Շուշիի հա-
րավարևմտյան մասում գտնվող **Քիրեզ** լեռը, նրանից հարավ՝
Խոշանը, իսկ նրանից էլ հարավ՝ **Ջիարեդը**: Կան նաև այլ եր-

կայնաձիգ լեռներ, որոնցից են, անշուշտ, **Դիզափայտի** լեռները, որոնք հայտնի են շատ վաղուց: Դրանց մասին խոսում է Ադվանից հին պատմիչը՝ «Մեծ լեռը շրջագայելով իր մեջ է առնում երկրամասի շատ գավառներ»: Շուշիի արևելքից ձգվում են վերոհիշյալ լեռները, որոնք Գարգարի և Ք...շին գետի անջրպետներն են, իսկ սրանցից հարավ ընկած են **Կուրիանը** և այլ լեռներ, որոնց և երկրի մանրամասներին առհասարակ մենք ծանոթ չենք: Դրանք ցարդ ուրիշներին էլ մեծ մասամբ անծանոթ են մնացել, ինչը հատուակվում է քարտեզների վրա եղած դատարկությամբ: Այնտեղ պարզ չի նշմարվում նաև գետերի ընթացքը, ինչպիսին է նոր հիշվածը և նրանից հարավ գտնվող **Գարասուն**: Իսկ այն գետերը, որոնք իջնում են դեպի Երասխ, մենք նշել ենք՝ Արցախի գետերի սկզբում:

160. Այս նոր գավառի մեջ են մտնում հին գավառներ **Մուխանքը**, այն է՝ **Մխանց տոհմը**, **Հարծխանը**, **Պիանքը** և **Քոտակը**, որոնցից միայն առաջին է հիշվում պատմության մեջ և բաղաճիկեցիների արշավանքում⁹⁸, որպես Պարզկանքի հարավում և նույն Ուտի գավառի վերջում գտնվող, որովհետև նրանից հետո ասպատակված գավառների մեջ վերջինը սա է համարվում: Մյուսների անունները ամենևին չեն նշվում, որի պատճառով դրանց դիրքը, սահմանները և պատմական դեպքերը հայտնի չեն:

Միջին և հետին դարերում ամբողջ երկիրը երկու գավառի տրոհված է թվում **Դիզա** կամ **Դիզակ** և **Վարանդա**, իսկ նախապես, ըստ Վարդան աշխարհագրի⁹⁹, հայտնի է եղել մի՝ **Դիզափայտ** անվամբ, որը այլազգիները **Տուզախ** էին կոչում նաև անցյալ դարում: Ժե դարի վերջին մի արձանագրությունում

⁹⁸ Հմմտ. Կղզկտ., էջ 327:

⁹⁹ Վարդան Վարդապետ, Աշխարհացոյց, էջ 11:

(որը շտառով կընդօրինակենք) այդ կողմերը Դիզաչի փոխա-
բեն կոչվում են **Վարանդայի** և **Քոչիգուի** երկիր: Այս տեղում
անունով մի գյուղ է հիշվում ԺԶ դարից Առաքել պատմիչի կող-
մից¹⁰⁰: Նա ասում է, որ Արցախից գաղթածների հետ դուրս են
գալիս մասն **Քոչիգու** գյուղից մեկիք Փաշիկը, Դիզակից՝ մեկիք
Սուջումը: ԺԶ դարի վերջին Դիզակից ամբողջությամբ Պարս-
կաստան են քոչում ևս չորս գյուղ: Երկրի մեկիքները հիշվում
են և դրանից հետո. այսպես՝ Նադիր Ծահի ժամանակ հիշվում
է մեկիք Հեկեն Դիզակից, Նադիր Ծահից հետո՝ ոմն Հասա-
նը (թերևս Զալալյան), որը Վարանդայի մեկիքն էր, ո-
րին սպանեց իր եղբորորդի Ծահնագարը և խլեց իշխանությու-
նը, մինչև որ Փանա խանը տիրեց Ղարաբաղին, օգտվելով եր-
կրի տեր հինգ մեկիքների անմիաբանությունից: Նա այնուհետև
շուտ եկավ Ռուսաստանից և խնամիացավ խանի հետ՝ նրան կնու-
թյան տալով իր դստերը և իր բաժնից նրան մվիրելով Շուշի
քաղաքը:

Մի վիճակ էլ կա **Ավետարանոց** անունով, իր մեկիքի հետ
միասին, որը հիշում է կաթողիկոս Աբրահամ Կրետացին¹⁰¹:
Ինձ թվում է, որ այն պետք է ընկած լինի գավառի հյուսիս-ա-
րևելքում: Նրանում կա մասն համանուն մի գյուղական՝ հայկա-
կան 200 տնով*: Ըստ հոգևոր իշխանության տվյալների՝ Ամա-
րասի աթոռի թեմում գավառը՝ ճշվում է 1730 թվից:

Գավառի այժմյան քաղաքական տրոհումը չգիտեմ, որի
համար էլ շենները միանգամից կնշեմ, սկսած Գարգարի անջր-
պետի հյուսիսից մինչև Երասխ:

¹⁰⁰ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 610:

¹⁰¹ Աբրահամ կթղ. Կրետացի, Պատմություն անցիցն իւրոց և Նատր-Ծա-
հին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 74:

* Այս փոքրիկ մանրամասնության աղբյուրը Ալիշանը ճշել է՝ «Մեղու,
ԻԲ, 70»:

161. Գարգարի և Ք... անջրպետի լեռներում աշխարհացույցը նշում է **Յաշանը** վանքը, որը չգիտեմ, թե որն է, գուցե Ճալե՞թը կամ մեկ ուրիշը: Շուշիից մոտավորապես 10 մղոն դեպի հարավ, ապա հյուսիս-արևելք **Սուրբ Լուսավորիչ** անունով մի այլ վանք կա, որը թերևս **Հրհերա վանք** հորջորջվածն է, որի վանահայրը՝ Տեր Հասան Զալալյան Բաղդասարն է: Ըստ արձանգրի՝ այդ վանքը Ս. Գրիգորիսի համար է, որի նշխարքները Պետրոս կաթողիկոսը ամփոփում է այդտեղ եկեղեցու շինարարության մասնակից Ամարասի եպիսկոպոս Բարսեղի միջոցով: Նա այդ մասին ասում է. «Աստծու կամքով ես՝ Պետրոսս, կաթողիկոսն եմ Գանձասարի սուրբ աթոռի, որը նորոգեց Ամարասի սուրբ աթոռի արքեպիսկոպոս Բարսեղը: Ամարասը Վարանդի և Քոչիզու նահանգինն է, քանի որ սրա վիճակները (նահանգները) բաժանվել ու մաս-մաս էին եղել: Ամեն մեկը կտրել էր իր մասը, իսկ մենք պատրաստվեցինք նորոգել հայրենի վանքը և առաջնորդ կարգեցինք մեր սիրելի աշակերտ Տեր Բարսեղ արքեպիսկոպոսին: Մենք նրան հրաման տվեցինք Ամարասի հովարանում եկեղեցին շինել, որը և նա շինեցավարտեց, ըստ մեր՝ հրամանի. ով (՝) սրանով Քրիստոսի այլակերպության տոնին. օրհնեցե՛ք այս սուրբ տաճարը՝ այն անլանելով սուրբ Գրիգորիս: Սուրբ Գրիգորիսի նշխարքները բերելով՝ ամփոփեցինք այստեղ, Վարանդայի և Քոչիզու երկրներում, որպեսզի սրանք լինեն մեր երկու աթոռները: Ով ցանկանա այս վիճակը բաժանել և մեկին նստեցնել այլ տեղում, լինի կաթողիկոս, եպիսկոպոս կամ մեկիք, այնպիսին թող նզովվի ԳԾԺԸ հայրապետների կողմից, Քրիստոսին խաչ հանողների շարքը դասվի և Հուդայի բաժինն ստանա: Ես արեցի այս կտակը ու արձանագրությունը. թող հավիտյանս հավիտենից մնա: Ես՝ Գրիգոր վարդապետս, գրեցի ՌԺՀԹ թվին»:

162. Սրանց մոտիկ, Ղարաքենդի և Ընջուի արևմտյան

կողմում կամ հետևյալ գյուղերը՝ **Էշանը, Ծինկասը, Գանար-
ցան (՝), Ղարատաղը, Չարթասը, Գաշին, Մաշատը, Բարին-
քենդը, Խոտը, Սիսնիխը**: Վերջինս արևելյան կողմից մոտ է
Ծուշիին, իսկ նրա հարավում **Ղարապուլագն** է, սրանից հա-
րավ՝ **Մաշամատը**, նրա վերջում՝ **Սարգիսաշենը**, որը հայ ան-
վամբ հետաքրքրության է արժանի: Սրանցից արևելք, Քենտի-
լան գետի ձախ կողմում, որը Արցախից Երասխ իջնող բոլոր
գետերից ամենաարևելյանն է, գտնվում են **Ջամախ-օղլուն** կամ
Աք-օղլուն գյուղավանն ու բերդը, արքայական ճանապարհի
վրա, որը Երասխից և Սյունիքից տանում է Գանձակ: Սա թե-
րևս Դիզակի գլխավոր տեղն է, որը Վարանդայի երկայնաձիգ
լեռնապարը արևմուտքից անջրպետում է այս սահմանում, որի
հյուսիսային ստորոտում ճշվում են **Սալման**, իսկ արևմտյան
կողմում **Թագավարդ** գյուղերը: Հարավում են գտնվում **Թախը,
Թրախթիխը (Դրախտիկ՝)**: Դրանց վերջում բարձրանում է
Տախդա-տյուզ-թեփե լեռը, որի անունը հիշեցնում է մերձավո-
րությունը Դիզափայտ լեռան հետ: Մեր մախնիների և ժամա-
նակակիցների կողմից վկայվում է, որ այն այս կողմերում պետք
է լինի, բայց կոնկրետ տեղը չի ճշվում: Եթե այն հիշյալ լեռը չէ,
թերևս արևմտյան կողմի **Քիրեջը** լինի, կամ հարավային կողմի
Ջիարեդը, որը, ըստ՝ Սարգիս Զալալյանի, բարձր, գեղեցիկ ու
ծաղկազարդ լեռ է:

163. Այս լեռանն են սպավիհել Սանեսան Մազթթաց ար-
քայի որդիներ Մովսեսը, Դանիելն ու Եղիան, այն արքայի, որը
սպանել տվեց Սուրբ Գրիգորիսին, որոնք աշակերտեցին նրան:
Ինչպես ինձ թվում է՝ նրանք՝ Աշխարքների հետևից էին եկել,
«և նրանց հետ էլ 3870 մարդ: Աճապարելով հասնել Դիզափայտ
լեռը՝ նրանք ապրում էին խոտակերությամբ: Արյունարբու Սա-
նեսանը, գալով նրանց հետևից, սրի քաշեց նրանց Նավասարդի

ԻԹ (29)-իմ¹⁰²: Նրանց ընկած տեղը կառուցվեց մենակյաց-ների Կատարո վանքը: Այստեղ եկան, հասան հոնաց գորավա-րի, Աստղաբլուրի հավատացյալ Թեոփիլոսի որդիները, Մովսեսը ու երանողիս երեսուն ընկերները «և իրենց զորքով բարձ-րացան մեծ լեռը, որ կոչվում է Դիզափայտ: Բարբարոս արքան նրանց հետևից ուղարկեց մեծ զորք: Երբ նրանք հասան, կո-տորեցին բոլորին Քրիստոսի հավատքի համար՝ և կոտակելով իրար վրա՝ բոլորին այրեցին, մահ այն մենակյացներին, որոնք այնտեղ էին գտնվում: Եվ լեռան անունը կոչվեց Դիզափայտ, որն այդպես էլ կոչվում է մինչև օրս: Սրբերի տոնը կատար-վում է արեգի իբ (կամ իա)-ն և մարտի 30 (կամ 29)-ին»¹⁰³: Իսկ ըստ մեկ ուրիշ տոմագրողի՝ «Ժամանակ անց ինչ-որ ճրգ-նավոր մենակյաց մարդիկ եկան, բնակվեցին այդտեղ և այդ տեղը իրենց համար վանք դարձրին: Նրանք ևս ընկան տաճիկ-ների սրից Քրիստոսի հավատքի համար»: Թե երբ է կատարվել այդ մահատակությունը, հայտնի չէ: Իսկ սրբերի նշխարքները հայտնի դարձան Վաչագանի օրոք, ըստ Աղվանքի պատմիչի: Եվ Զ դարի կեսին «թշնամիները հրդեհեցին Դիզափայտ լեռան Կատարո վանքի վկայարանները»¹⁰⁴:

164. Պատմիչը ցույց է տալիս, որ լեռան սահմաններում պետք է գտնվի «Մխանց տոհմի Կաղսեղոս առողջարանը»¹⁰⁵, որ 552—553 թթ. հայտնվեցին ռմն ճգնավորի և բազում այլ սըր-բերի նշխարքները, որոնք կամ այնտեղ էին մահատակվել, կամ էլ այնտեղ էին բերվել ուրիշ տեղերից: Եվ Աբաս կաթողիկոսի

¹⁰² Կղնկտ., էջ 119:

¹⁰³ Այս մեջբերումը Աչիշանը պետք է քաղած լինի մի ձեռագիր Հայս-մավուրքից:

¹⁰⁴ Կղնկտ., էջ 119:

¹⁰⁵ Ամդ, էջ 121:

Ռաւմանով Մովհարից երեցի ու Հովհաննէսի վանքի վանահայր Տիրիթի գործակցությամբ Տրի քահանա Դանիելը և բազում այլ հավատացալներ գնացին, փորեցին տեսիլքով երևացած տեղը, «և գտնվեց թաքնված գանձը...»՝ ճշխարքները ամփոփեցին ինչ-որ պատվական տեղում՝ յուրաքանչյուրից մաս վերցնելով, իսկ մեծ մասը վերցրեց Դանիել քահանան և մեծահարգ ընծաներով շտապելով՝ անմիջապէս հասաւ Արաս հայրապետի մոտ... և դրեց շատ մաքուր արկղերի մէջ»¹⁰⁶։ Այս հիշատակների մասին գրեց դէպքերի ժամանակակից ու վկա Անդրիանեն, որից օգտվելով իր պատմութիւնն է հյուսել Կաղանկատվացին։ Իսկ այն սրբերը, որոնց հայտնվեցին ճշխարքները, հետևյալներն են՝ Ստեփանոսը, Նախավկան, Թեոդորոսը, Վարոսը, Մամասը, Մար Սարգիսը, Գևորգը, Կոզմասը, Դամիանոսը, Ս. Քառասունքի մի մասը, խաչված ոմն Պողոսիկն ու Բահիրան, ինչպէս նաև կենարար խաչափայտի մի մասը։

165. Լեոնապարի և Չերեքեն գետի հարավում, գաւառի լեռնասահմանի ճշանավոր տեղում է գտնվում Թող գյուղաքաղաքը, ինչպէս որ ճշվում է աշխարհացուցում, որը Արքահամ Գ. Կաթողիկոսը Տող է կոչում¹⁰⁷, ուր մի քանի օր նա մնաց Աղվանքի Ներսէս կաթողիկոսի հետ՝ Մուղանում Նադիր Ծաֆի հետ հանդիպումից վերադառնալուց հետո, 1736 թ.։

Ավանի արևմտյան կողմում ճշվում է համանուն մի այլ գյուղ, որը մի քարտեզում անվանված է Թում։ Դրա հյուսիսարևմրտյան կողմում պետք է ընկած լինի Հատրու գյուղը, որի միջով անցաւ Կաթողիկոսը Տողից վերադառնալիս։ Այն այժմ հա-

¹⁰⁶ Անդ, էջ 121—122։

¹⁰⁷ Արքահամ Կրեւացի, էջ 78։

յաբնակ գլխավոր գյուղերից մեկն է, որում ընդհանուր առմամբ 500 տուն կա*:

Հարավում են գտնվում **Աթակուրը, Մուխրանեւը**, արևելքում՝ **Ղըզըլ- ղըշան, Ղարադաղը, Չերակուրը, Ծիկուրին**, որոնցից հարավ-արևելք՝ ձգվում է լեռների մյուս բազուկը՝ ճյուղեր արձակելով դեպի հարավ, որտեղից գետերն իջնում են դեպի Երասխ: Նրանց ձորահովիտներում նշվում են հետևյալ գյուղերը՝ **Թակասիրը** (°), որի հարավային ծայրում նշվում է մի մենաստան **Վանք**՝ նշված քարտեզում, իսկ մի այլ քարտեզում **Սուրբ-Շիհին** (°) մենաստանը. դա արդյո՞ք **Շուփ-հաղիշն** է (°): Նրա հարավային ծայրում ընկած է **Գարկա-պազարը**, իսկ նրանից դեպի արևելք, **Քենտիլանի** խոտ՝ **Չովարը, Ապտյուռահման-բեկուն**: Վանքի հարավային կողմում գտնվում են **Սարաճըկը, Պալյանդը, Սյուլեյմանլը, Բիրաճակը**, վերջինիս հարավում՝ **Տաշ-քեսենը, Կորավլը**, արևմուտքում՝ **Ջանգյուրը** (°), **Մենքյուտերեն, Տաշպաշը, Ղարաքոլը**: Իսկ սրանցից էլ հարավ, Երասխի և Թուղի սահմանամիջում և նրանց ճանապարհի վրա ընկած է **Ճիպրայիլը**՝ ոռոգների պահպանության տեղը և՛ սրբազան մեջեցյալների քավարանը:

Ըստ աշխարհագրացների՝ այստեղ են վերջանում Արցախի լեռների ճյուղերը, որոնց ստորոտի արևմտյան կողմում, Սյունիքի մոտ, **Թումաս** գյուղն է: Այդտեղից մինչև Երասխ և ապա Սյունիք իջնող և Երասխը հատող լայնածավալ դաշտում բլուրներ են բարձրանում: Իսկ այս դաշտավայրում քիչ շենքեր են նշվում, ինչպես՝ **Քովտերեն, Շախպեկլին, Բյուկերը, Խարիտի-որ**՝ Քոզլու գետի ափին:

166. Թե մինչև ե՞րբ էին Երասխի ափերը հասնում Արցախի սահմանները, չգիտեմ: Բայց աներկբայորեն պետք է ասել,

* Այս մանրամասնության աղբյուրը Աիշանը նշում է՝ «Մեղու, ԻԲ, 70»:

որ Առանձն է նորոգել Աղվանից իշխանությունը՝ Վաղարշակի ժամանակ տիրելով այս վայրերին: Իսկ հետո, ըստ երևույթին, Փայտակարան աշխարհի տերերն են իրենց ձեռքը դրել դրավրա, այնուհետև Ատրպատականի կողմից է նվաճվել: Դա թողնենք մի այլ տեղում քննելու և մշենք գյուղեր ու շենքեր, որոնք գտնվում են Արցախի կողմերի ծայրերում ու Հայոց բնիկ արևելքում, մեծ գետ Երասխի ափին, ինչպես որ կգտնենք աշխարհացույցներում, սկսած արևելյան կողմից, որոնցից շատերը ռուսական զորակայաններ են կամ ամրոցներ՝ Պարսկաստանի սահմանը պահպանելու համար, որն անջատում է գետը:

Քենտիլանի և Երասխի խառնարանի մոտ կան **Պեյսամլը, Կյուղանլը, Ըշըզլը, Գուրուզայի մոտ՝ Պեկմեննի** գյուղերն ու ամրոցները, **Չերեքենի մոտ՝ Պապի** գյուղն ու ամրոցը, **Քոզլուի մոտ՝ Միրզա-մեխդուկի** բերդը, մյուս գետակի արևմտյան կողմում՝ **Մարիլյան** բերդը: Սրա մոտքից դեպի Սյունիք իրար հետևից ընկած են հետևյալ գյուղերը՝ **Ապտալը, Սրճալը, Շահ-չիմարը, Սաֆարը, Մենտաճիլը, Էշեկ-մեյտանը, Խյուտաֆերիյը, Ալիճախլը՝** Հազար գետի և Սյունիքի լեռների անջրպետին մոտիկ:

Խյուտաֆերիյնի մոտ, Առանի և Ատրպատականի միջև կա անվանի մի կամուրջ՝ 12 հաստկառույց կամարներով, որոնցից երեքը քանդել է Ղարաբաղի Իբրահիմ խանը, որոնք հետո նորոգել են ռուսները: Կամուրջի մոտ են գտնվում **Առաքելիս** հայոց գյուղն ու մաքրատունը: Կամուրջի հզոր կառուցվածքը և նրա վրայով պատվական քարավանների անցնելը կամուրջին շնորհիվ են պարսից այդ անունը, որ մշանակում է Աստվածաստեղծ:

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ԱՐՑԱԽ

**Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայագիտական կենտրոնը**

**Հրատարակչության խմբագիր՝ Զ. Հ. Թամրազյան
Կեդարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմազյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Հ. Խաչատրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ցավրյան**